

ԷԶՄԻԱԾԻՆ



1962

ՈԱ-4830

ՌՆԺԱ
ԺԹ ՏԱՐԻ

Ապրիլ

ԷԶՄԻԱՇԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ա. ԷԶՄԻԱՇՆԻ

Դ

1962



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆԱԳՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Սուրբ Հովհաննիսի տանարի վերանորոգման առթիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հարության վկայությունը և լույսի հաղթանակը	5
Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրապետ Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն S. S. Վազգեն Ա Հայրապետի ողջույնը քույր եկեղեցիների հոգևոր պետերին	7
Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրապետ Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն S. S. Վազգեն Ա Հայրապետի և եվրապետական Արքունների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	9
Գրիստոսի հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ հայրապետական հանդիսավոր պատարագ և բարոգ Մայր Տահառում	11
Ս Ա Յ Ր Ա Թ ՈՒ Ռ ՈՒ Մ	14
ՊՐՈՑ. Զ. ԱՃԱՌՅԱՆ— Մեսրոպ Մաշտոց	18
Զ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Օրմանյան և իր ժամանակը	31
Հ. ՏԵՐ-ՎԵՎՈՆԴՅԱՆ— Հայկական արձարյա մասնատուիների երկու հին նմուշներ	46
Բ. ԹՈՒՄԱՆՅԱՆ— Հին հայկական աստղագիտական գործիքներ	51
Հանգիստ հոգեշնորհ S. Կարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանի	58
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ— Վնասաբեք մի գիրք	59



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑԵՆ
ՀԱՅԿԱԿՍՆ ՍՍՈՒ ԷԶՄԻԱԾԻՆ
«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Rédaction de la revue „Echmiadzine“, Echmiadzine, Arménie, URSS
Երևան, 1962 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՐԱՋՆԱԴՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՍՈՒՐԲ ՀՈՒՓՍԻՄԵԻ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՌԹԻՎ

**ՎԱՋԳԷՆ ԵԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԴԻՍ
ԵՊԻՍԿՈՓՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱՔՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԵԱՅՐԱՊԵՏՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱՋԿԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՇԱՐ
ԱՔՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԲՐՈՑ ԿԱՔՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱՄՆԻ**

ՋՐԻՍՏՈՍԱԿԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈ՞ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԶՈՒՅՆ ՀԱՅՈՑ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՓՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՓՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ԶԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ
ՍԱՐԿԱՌԱԿԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՄՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ
ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՏՆԵՒԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ
ՀԱՅԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ



ատիկ է այսօր, և Սուրբ Յարութեան շնորհներուն ներքև գրի կ'առնենք
սոյն կոնդակը: Զատկի օրով կոնդակ կը գրենք. վասնզի իրօք վատկա-
կան է Մեր ուրախութիւնը:

Դուք բոլորդ ևս, հարազատ պաւակներ Մեր, զնծացէ՛ք և ուրախ
կողէք, զի ահա մեր հնազոյն սրբավայրերէն ամենէն հրաշակերտը, հայ ճարտարա-
պետութեան գլուխ-գործոց Սուրբ Հռիփսիմէն, ամբողջապէս և վայելչապէս վերա-
նորոգուած է արդէն:

Հայոց հինաւորաց պատմութեան վկաներէն մին՝ ճշմարտախօսն Ագաթանգե-
ղոս, կը պատմէ մեզի, թէ Դ ղարու սկիզբներուն, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ և
Տրդատ Գ թագաւոր Հայոց, քաղաքամայր Վաղարշապատի մօտերը վկայարաններ
շինեցին, այնտեղ ամփոփելով սրբացած աճիւնները նահատակուած Հռիփսիմեանց
և Գայիանեանց կոյսերուն. «Եւ կանգնեալ երիս վկայարանս, մին ի հիւսիսու
յարևելից կողմանէ քաղաքի, ուր վկայաց սանական Հռիփսիմէ երեսուն և երեք
ընկերօք»:

Այդ վկայարանները «տախտակամաժ, մայրափայտեայ, բնեռապինդ, հաստա-
հեղոյս, երկաթազամ» էին, կնքուած «քրիստոսանշան կնքովն»:

Եւ անցան այսպէս երեք անգամ հարիւր տարիներ:

Եւ ահա, 618 Փրկչական թուականին, մեծագործն Կոմիտաս կաթողիկոս, նա-
հատակուած կոյսին վկայարանին վրայ, սրբատաշ քառով կառոյց Սուրբ Հռիփ-
սիմէի այժմեան կեղդոնազմբէթ տաճարը խաչածն յատակազծով:

Կոմիտաս կաթողիկոսի ներշնչուած վարպետները իրենց հոգիին լոյսով կերտեցին Սուրբ Հռիփսիմէն՝ «Ռաշապէս և վայելուչ և նազելի և պայծառ շինուածով», ինչպէս կը վկայէ և կը բնորոշէ ճարտարապետական արուեստի ճշմարիտ պագցումով: Ժ դարի պատմիչ Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցին:

Սուրբ Հռիփսիմէն տաճարի կառուցման յիշատակին Կոմիտաս կաթողիկոս ձօնեց իր «Անձինք նուիրեալք»-ը, մարգարիտ երգերէն մին մեր հոգևոր բանաստեղծութեան, որով մարտիրոս կոյսերը կը փառաբանուին իբրև «լոյս փրկութեան Հայոց աշխարհի», որոնք փարատեցին «վաւար դիւապաշտ մոլորութեանց»:

Սուրբ Հռիփսիմէն՝ է դարէն մինչև մեր օրերը պահպանուած է նոյնութեամբ, շնորհիւ բազմաթիւ նորոգումներու: Յիշատակելի են մանաւանդ՝ ԺԷ դարուն Փիլիպոս Աղբակեցի և Եղիազար Այնթապցի կաթողիկոսներու, և յաջորդ դարուն Սիմէոն Երևանցի կաթողիկոսի կատարած շինարարական աշխատանքները: Իսկ տաճարի վանդակատունը կառուցված է Ղուկաս կաթողիկոսի օրով, 1790-ին:

Այսօր յոյժ երջանիկ ենք, որ Աստուծոյ ողորմութեամբ, Մեկի վիճակուեցաւ հովանաւորել ներքին և արտաքին վերանորոգումը և բարեարգումը Սուրբ Հռիփսիմէի, որով այս յուշարձան եկեղեցին ստացաւ իր նախնական հոյակերտ տեսքը՝ ջինք ու վճիտ, և ներդաշնակ ձևերով ու համաչափութիւններով: Սուրբ Հռիփսիմէի վերանորոգման աշխատանքները կատարուեցան առաւելագոյն նախանձախնդրութեամբ, ուղղակի և տեական դեկավարութեան և հսկողութեան ներքև Մայր Աթոռի ճարտարապետներու յանձնաժողովին, որ բաղկացած է բոլորիս լարգանքը և գնահատանքը վայելող հայրենի հեղինակաւոր ճարտարապետներէ:

Սուրբ Հռիփսիմէն վերաշինելու Մեր ծրագիրը կենսագործուեցաւ սրտաբուխ նուիրատուութեան շնորհիւ իտալահայ բարերարներ տիարը Երուանդ Հիւսիսեանի և Օննիկ Մանուկեանի, որոնց անունները քանդակուած պիտի մնան այս Սուրբ Տաճարի հազարամեայ բարերուն վրայ և միշտ պիտի յիշուին անոնք երախտագիտութեամբ:

Երանի՛ անոնց, որ իմաստութիւնը ունին իրենց յիշատակը յաւերճացնելու շինարար գործերով, հայրենի Մայր հողի վրայ, «ուր ոչ գող մերձեցաւ և ոչ ցեց ապականէ»: Վասնզի մեր հայրենի հնադարեան տաճարները անմահ և յաւերճական յուշարձաններն են հայ ժողովուրդի լոյս հաւատքին ու կեանքին և կառուցողական հանճարին:

Անմահ և յաւերճական է նաև Ռաշակերտ Սուրբ Հռիփսիմէն, «վայելուչ և նազելի և պայծառ» հարսը հայ ճարտարապետութեան: Համակ խորհուրդ է ան և ներդաշնակութիւն, մարմին առած ապրող ոգի՝ անմեղ կոյսի արեան զոհաբերութեան յիշատակով և հայ հանճարի լոյսով բիրեղացած:

Սուրբ Հռիփսիմէն վաւերական վկայութիւն մըն է մարդկային ոգեկան ուժերու յաւերժութեան, Սուրբ Յարութեան շնորհներուն ներքև:

Նահատակուած ամէն սուրբի արին Զրիստոսի Յարութիւնը կը վկայէ, և մարդկային ամէն հանճարեղ ձեռակերտ Սուրբ Յարութեան շնորհները կը ճշմարտէ:

Փա՛ռք Սուրբ Հռիփսիմէին:

Փա՛ռք հայ ճարտարապետական հանճարին:

Փա՛ռք մեր հայրենի վերածնունդին:

Լո՛յս և շնո՛րհք Ռաշափառ Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ և յաւիտեան: Ամէն:

Վահագն Դե Ռ

ՄԱՅՐԱԿՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 22-ն ապրիլի

1962 Փրկչական ամի,

և ի տունարիս Հայոց ՌՆԺԱ,

ի մայրավանս Արթուր Էջմիածնի:



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒՅՍԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ



Բրիտանական եկեղեցին ամեն տարի զարնան հետ քերում է աշխարհին և հավատալու մարդկայան՝ կյանքի և լույսի հավերժական ավետիսը Քրիստոսի հառությամբ, որ «ՄԱՀՈՒԱՄԲ ԶՄԱՀ ԿՈՒՅՆԱՑ» և «ՄԵՍ ԶԿԵԱՆՍ ՊԱՐԿԵՆԱՑ»:

«ԱՅՍՈՐ ՆՈՐ ԼՈՒՅՍ ԿԻՋՆԵ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ ԵՎ ՄԵՐ ՃՈԳԻՆԵՐԵՆ ՆԵՐՍ, — ասում է Վեհափառ Հայրապետը այս տարվա գատկական Իր Բարեգում, — ԶԻ ԱՀԱ ՆՈՐ ԳԱՐՈՒՆ ԿՐԱՑՎԻ ԵՐԿՐԻ ՎՐԱ ՀՈՐԻՋՈՆԵ ՀՈՐԻՋՈՆ, ԵՎ ՄԵՐ ՀՈՒՍԱՑՅԱԼ ՀՈԳԻՆԵՐԸ ՆՈՐԵՆ ԿՋԵՐՄԱՆԱՆ ՍՈՒՐՐ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԻՍՈՎ»:

Քրիստոսի հառության ավետիսը մարդկային կյանքի տարեգրության մեջ գաղափարական մի նոր շարժման, մի նոր դարաշրջանի առավոտը հանդիսացավ, որպես մարդու փրկության, ազատության և բարոյական վերածննդի սկզբնավորության:

Քրիստոսի հառության ավետիսը կերպարանափոխեց բարոյապես փտած և իմացալես դատարկված հին աշխարհը:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԻՍՈՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵՑ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԸ: Հառության լույսով կենդանացած առաքյալները, իրենց ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՔԱՐՈՋՈՒԹՅԱՄԲ կենդանացրին հին աշխարհը, ոգի, երազ և կրակ ենթանշեցին մարդկանց և կյանքը ստացավ նոր գեղեցկություն, խորհուրդ և իմաստ:

«ԵՎ ՓՇՐՎԵՑԱՆ ՇՂԹԱՆԵՐԸ ՄԱՀՎԱՆ, ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ, — ասում է Վեհափառ Հայրապետը: — ՀԱԼԵՑԱՆ ԿԱՊԱՆՔՆԵՐԸ ՄԻՂՔԻՆ ԵՎ ԶՆԵՔԻՐԸ ԶԱՐԻՆ: ՓԱՐԱՏԵՑԱՎ

ԾԱՆՐ ԽԱՎԱՐԸ ՄԻԱՅՆ ԴԱՐԵՐՈՒՆ: ԼՈՒՅՍՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՈՂՈՂԵՑ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՄԱՐԴԻԿԸ ԲՈՂՈՐ: ԵՎ ՍՈՒՐԲ ԽՈՍՔԸ ՍԻՐՈ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀՆՋՆՑ ՀԱՂԹԱԿԱՆ»:

Քրիստոսի հառությունը իբրև իրողություն, հաստատված բազմաթիվ սուրբգրական փաստերով և ժամանակակիցների բազմաթիվ վկայություններով, պատմական իրողություն է:

Քրիստոսի հառության առաջին ավետիսը և վկայությունը աշխարհին բերել է խումբը այն բարեպաշտ կանանց, որոնք կոչվում են Ավետարաններում «յուզարբեր կանայք»: Հառության հրաշափառ առավոտուն, Զատիկի միաշաբաթի օրը, «վաղ ֆաջ ընդ առաւօտն», երանք գնում են, հոգեկան ծանր ապրումների մեջ, խնկերով և անուշաճոտություններով, ոգեկոչելու հիշատակը Քրիստոսի: Գերեզմանում, փոխանակ նրա մարմինը գտնելու, երանք դեմհանդիման են գալիս ՓՐԿԶԻՆ՝ «ՅԱՐՈՒՑՆԱԼ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Հառության Տերը յուղաբեր կանանց ուղարկում է աշակերտների մօտ՝ լինելու վկաներ իր հառության:

Քրիստոսի հառության երկրորդ վկաներն են դառնում աշակերտները, որոնք, մի ֆառի օր առաջ, իրենց սիրելի վարդապետի հետ, գերեզման էին իջեցրել իրենց լույս հանդուգն երազները և ազգային հույսերը Մեսիայի անվան և գործունեության հետ կապված: Բայց ահա հառության առավոտուն Քրիստոսը նորից իր աշակերտների հետ է: Նրանք լսում են հառությունից հետո նրա առաջին պատգամը. «ԳՆԱՑԷՔ Ի ԳԱԼԻԼԻԱ ԵՆ ԱՆԿ ՏԻՄՈՒՅԷ ԶԻՍ... ԵՍ ԸՆԴ ԶԵՂ

ԵՄ ԶԱՄԵՆԱՅՆ ԱՌՈՒՐՍ ՄԻՆՁՆԻ Ի ԿԱՏԱՐԱՅ ԱՇԽԱՐՀԻ:

Քրիստոսի հաւորւթյամբ հաւորւթյուն է առնում աշակերտներին հուսախաքոված, լիզած և մեռած հոգիներ, նրանք դառնում են արիստիւն և համարձակ վկաներն ու քաղաքները «խաչեցեալ և յարուցեալ» Փրկչի արհամարհում են մահը և իրենց կյանքով պայծառ վկայութիւններ են բերում իրենց դավանած և քաղաքացիներ են, քաղաքացիներ են և քաղաքացիներ են:

ՍԱՀԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՄԱԳՈՒՅՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՆԱՍԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ ԵԿԵՂԵՑԱՐԱՄՅՈՒՆՈՒՆՆԵՐԻ:

«ԵՍ ԵՄ ՅԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԵԱՆՔ»: Եկեղեցին խառնովել է այս վկայութեան վրա: Քրիստոսի հաւորւթյունը, իբրև խորհուրդ և ոգեկան արժեք, իր նշանակութեամբ և հոգեւոր-քաղաքական ներգործութեամբ, հավերժաբար պատկանում է քրիստոնեայ բոլոր դարերին և սերունդներին:

Քրիստոնեական կրօնի անշարժ վեմն է Քրիստոսի հաւորւթյան հավատը: Հաւորւթյան այդ հավատը իր մեջ խտացնում է կյանքի անմահութեան, կյանքի հավերժութեան գաղափարը:

Եկեղեցին, Քրիստոսի հաւորւթյան պատգամով, իր հավատացյալներին տալիս է նոր կյանքի, հաւորւթյան և փառավորւթյան կյանքի զվարթ և կենսանորոգ ավանդույթ:

Ամեն տարի, գարնան հետ միասին, ի՞նչ է բերում Քրիստոսի հաւորւթյունը աշխարհին, մարդկութեան:— Հավերժական կյանքի հաղթանակը՝ մահվան վրա, քաղաքացիական հաղթանակը՝ առեւտրական դիմ, խաղաղութեան հաղթանակը՝ պատերազմի դիմ:

Ամեն Զատիկի, ամեն հաւան, Քրիստոս խորհրդավոր կերպով հաւորւթյուն է առնում իր հավատացյալների, իր եկեղեցու համար: «Ի կայս ի վիմէն» նոր առավոտ է ծագում հավատացյալների և եկեղեցու վրա: Եկեղեցու բեմերից, խորաններից, տաճարում է հաւորւթյան մեծ ավանդույթը՝ քաղաքացիական, կարիքի, իրավագիտական, նախապաշար-

ութների մեջ ապրող մարդկանց դժբախտ ուղիների համար. «ԱՐԻ՝ ՈՐ ՆԱԶԵՍԻ ԵՆ ԿԱՆԳԵՆԱՅ Ի ՄԵՌԵԼՈՅ, ԵՆ ԼՈՒՍԱՌԻՆՈՐԵՍԱՅ ԶՔԵԶ ՔՐԻՍՏՈՍ»:

Հաւորւթյան տոնը, իր սրբազան խոհերով, լույսի իր հաղթանակով, ամենից շատ խոսում է նաև քրիստոնեայ հայ մարդու սրտին: Հայ հավատացյալ ժողովուրդը, Քրիստոսի հաւաքաւոր հաւորւթյան տոնի մեջ տեսել ու երագել է իր ազգային-եկեղեցական վերածննդան հանդեր: Հայ ժողովուրդը, Քրիստոսի նման, իր կյանքը գոհաբերել է խաղաղութեան, արդարութեան, առաջադիմութեան և ազատութեան դատին: Մեր ժողովուրդը ապրել, ստեղծագործել է միշտ՝ հաւորւթյան հավատով և իմացել է միշտ իր նահատակութիւնը վերածել լույսի հաղթանակի: ԶԱՏԻԿԸ ՄԻՇՏ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԻՆ ԲԵՐԵԼ Է ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՅԱՆՔԻ ՀՈՒՅՍՆ ՈՒ ԽՈՍՏՈՒՄԸ: Ամեն Զատիկի, մեր ժողովուրդը տոնել է իր վերածննդած կյանքի Զատիկը, իր համազգային իղծերի, երգերի իրականացման Զատիկը:

Քսան երկար դարեր չեն կարողացել մարել հայ հավատացյալ ժողովուրդի հաւորւթյան հայսն ու հավատը: Այսօր ահա իր գերեզմաններից, իր հայրենի ավերակներից հաւորւթյուն է առել հայ ժողովուրդը և հաւորւթյան, ազգային վերածննդան գաղափարով ու հույսով գոտեպնդված, փայլում է դեպի իր լուսապայծառ ապագան:

Փա՛ռք մեր ժողովուրդի հաւորւթյան:

Փա՛ռք մեր հայրենի վերածննդին:

Ս. Հաւորւթյան այս առավանքն, Ազգիս Վեհափառ Հայրապետն է պատգամում և ավետում՝ «ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԻՆ ԵՎ ՓՐԿՅԻ ԻԶՄԱՆ ՏԵՂԵՆ ԶԵԶԻ ԱՄԵՆՈՒԴ ՄԻՐՈ ԶԵՐՄ ՈՂԶՈՒՅՆ ԵՎ ԲՅՈՒՐ ԾՐՀՆՈՒԹՅՈՒՆ: ...ՈՒԺ ՈՒ ԵՌԱՆԻ ԵՆ ՈԳԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՈՒ ԵՌԱՐԱՐ ԳՈՐԾԻ... ՈՐՊԵՍՅԻ ԱՄԵՆ ՄԵԿԻ ԶԵՐ ԿԵՐՊՈՎ ՈՒ ԶԱՓՈՎ, ԱՌԱՎԵԼ ԶՈՐԱՅՆԵՐ ՀԱՎԱՏՔԻ ԱՄՐՈՅ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՍՏՎԱՅԱԿԱՌՈՒՅՑ ՄԱՅՐ ԱՔՈՌԸ ՄԵՐ, ԵՎ ՈՐՊԵՍՅԻ ԱՄԵՆՔԻ ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՐ ՄԱԳԵՐԵՆ՝ ՀՈԳԻՈՎ, ՍՐՏՈՎ, ԳՈՐԾՈՎ, ԿԵՆԴԱՆԻ ԱՓ ՄԸ ԼՈՒՅՍ ՈՒ ԵՐԳ ԸՆԾԱՅԱՐԵՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ»:





**ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱԺԱՌ ԵՎ Ս. ՀԱՐՈՒՔՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅԻՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԵՎ ԿԱՐՈՂԻԿԱՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՆՈՒՔՅՈՒՆ
Տ. Տ. Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՈՂԶՈՒՅՆԷ ԴՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՆ**

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐԺ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻՆ (ՄՈՍԿՎԱ),
ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (ՍՏԱՄԲՈՒԼ),
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԺ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ),
ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐԺ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ԻՆ (ԴԱՄԱՍԿՈՍ),
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱթՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (ԹԲԻԼԻՍԻ),
ՔԵՆՏՐԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՌԵՄՋԻՆ (ԼՈՆԴՈՆ),
ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԺ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (ՔՈՒՆՍՏԱՆԴՍ),
ՔՐԻԼՂԱՐԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԺ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (ՍՈՖԻԱ),
ՍԵՐԲԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԺ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԵՐՄԱՆԻՆ (ԲԵԼԳՐԱԴ),
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՄՈՍԻՆ (ԱԹԵՆՔ),
ՆԻԿՈՋԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԿԻՊՐՈՍԻ
ՆԱԽԱԳԱՀ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (ՆԻԿՈՋԻԱ),
Եթովպական ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԺ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (ԱԴՂԻՍ-ԱԲԱԲԱ),

ՀՆԴԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
 ՄԱՐ ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ-ԻՆ (ԿԵՐԱԼԱ),
 ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
 ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (ՌԻԳԱ),
 ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
 ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (ՏԱԼԼԻՆ),
 ՄԽԻԹԱՐՅԱՆ ՌԻԽՏԻ ԱՔԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ
 ՍՐԱՊԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ
 (ԿԵՆԵՏԻԿ),
 ՄԽԻԹԱՐՅԱՆ ՌԻԽՏԻ ԱՔԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ
 ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (ԿԻԵՆՆԱ),
 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՎԻԼՅԱՄ
 ՎԻՍՍԵՐ 'Տ ՀՈՒՖՏԻՆ (ԺԸՆԵՎ):

Ջատկական մտախոթյամբ լեցուն սրտով. Ս. Էջմիածնեն Մենք ևս Ձեզի կրեւնեմ հոգեւոր վկայութիւնը Քրիստոսի հրաշափառ հաւության, որ մա-
 նուամբ զման կոխեաց» և «մեզ զկեանս պարզեցաց»:

Փառք Քրիստոսի սուրբ հաւության, որ մեր աշխարհի բոլոր մարդոց շնոր-
 հեց կենաւաւ հույսը հավիտենական կյանքին:

Սուրբ հաւության ավետիսով կշնորհավորենք Ձերդ Սրբութիւնը, մաղթե-
 լով Ձեզի երկար տարիներ պողոտատ գործունեությամբ, ի փառս Ձեր Ս. Եկե-
 ղեցիին և ի մխիթարութիւն Ձեր աստվածասէր ժողովուրդին, ու նաև հաւա-
 խութիւն Մեր:

Փրկչի հաւության շնորհներով թող առավել հաստատվի ու զօրանա մար-
 դոց և ժողովուրդներու հոգիներուն մեջ սիրո և համերաշխության ոգին, ի
 պանպաճումն աշխարհի խաղաղության:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱՍԻՆ



ՓՐԿՅԻ ՀՐԱՇՈՓԱՌ ԵՎ Ս. ՀԱՐԱԻԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅԻՐԱԳՈՒՅՆ ՊԱՏԲԱՐԴ
ԵՎ ԿՈՔՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՔՈՒՆԵՐԻ ՈՒ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌՈՒԹՅԵՐՈՒ ՊԻՐԱԻԹՅՈՒՆՆԵՐԸ
 ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ, ԵՐՈՒՍԱՂԵՍ.
 ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ, ՍՏԱՄԲՈՒԼ.
 ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԲԵՅՐՈՒԹ.
 ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ:

Փրկչի Իշման Ս. Տահաբեն Ձեզի կրեւեմ ավետիար Քրիստոսի հրաշա-
 փառ հարության, որ շմահումար գման կոխեալց» և շմեզ գկեանս սյարգեալց»:
 Մենն կհավատանք, թե իրավ հարալ Քրիստոս, և մեզի բոլորիս շնորհեց
 կենաւար հոյսը հավիտեանական կյանքի:

Ի սփյուռս աշխարհի ցրված հայ բարեպաշտ հոգիներու համար այդ հոյսը
 վառ է ու պայծառ մանավանդ Լուսավորչի անմար կանթեղով, որ բազում դա-
 րերէ ի վեր իր լույսը և իր շնորհները կսփռէ Ս. Էջմիածնէն՝ Հայաստանայց
 եկեղեցիին և համայն հայ հավատացյալ ժողովուրդին վրա:

«ՓԱՒԹ ՀՐԱՇՈՓԱՌ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՈ, ՏԻՐ»:

Փա՛ռք նաև քեզ՝ հոյսի նրազ, լույսի աղբյուր՝ Ս. Էջմիածին:

Հարության ավետիսով կշնորհավորենք Ձեր Ս. Ձատիկը և կմաղթենք Ձերդ
 Սրբազնության և քեմիդ հոգեւոր դասուն, քեմական ու քաղական խորհուրդ-
 ներուդ անդամներուն, եկեղեցւոյ երիտասարդաց, տիկնանց և օրիորդաց միու-
 լյուններուն, դպրաց դասերուն, Ձեր վարժարաններուն, ազգային-մշակութային
 և բարեսիրական կազմակերպություններուն և համայն Մեր սիրեցյալ աստվա-
 ծասեր ժողովուրդին՝ արեւատ երջանիկ խաղաղ տարիներ, եկեղեցաշէն ու ժո-
 ղովրդանվեր բեղուն զօրձունեւորքամբ:

Կմնանք նաև շնորհակալ աղօթող համայն աշխարհի խաղաղության և
 ժողովուրդներու եղբայրության ամրապնդման համար:

«ՇՆՈՐՀՔ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՓՐԿՅԻՆ ՄԵՐՈՑ» «ԵՒ ԵԱՂԱՂՈՒԹԻՒՆՆ
 ԲՐԻՍՏՈՍԻ ՀԱՍՏԱՆԵՍՅԱԻ Ի ՍԻՐՏՍ ՁԵՐ, ՅՈՐ ԵՒ ԿՈՅՆՅԱՐՈՒԹՅՆ ՄԻՈՎ
 ՄԱՐՄՆՈՎ» (Կողոս. Գ 15):

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅԻՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԹ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱՍԻՆ

Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ շնորհավորական գրու-
 րյուններ ուղարկվեցին նաև քեմական և կրօնական խորհուրդներին, Հայկա-
 կան Բարեգործական Ընդհանուր Սիւրբյան Կենտրոնական վարչության նա-
 խագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Դայուստ Կյուլպենկյան հիմ-
 նարկւրյան կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ.
 Ժոզե դե Ագերեդո Պերդիգալոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպա-
 ւանի հանձնախմբի. նախագահ պր. Նովանդ Աղանանյանին (Նյու-Յորք), Ար-
 արայան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն),
 Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովին (Բելյուրթ), Վարդանանց
 ասպետների կազմակերպության (Նյու-Յորք), հայրենակցական, մշակութա-
 յին, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց կազմակերպություններին, Մայր
 Աթոռի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

ՆՈՐԻՆ Ս. ՕՍՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Մ Ի Ն

Ս. Զատիկի բախտավոր առիթով մեր և մեր միաբանության կողմն Ձերդ Սրբության կենդանացնենք մեր ամենաանկեղծ և հարգալից շնորհավորանքները. մաղթելով Ձերդ Սրբության հաճախ առողջություն, երջանկություն և Մայր Աթոռին բարգավաճում:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԲ

ԵՐՈՒՍԱԳՆՄ

Մեր անունով եկեղեցական դասուն, համայնֆային մարմիններու և ամբողջ ժողովապետացյալ հոտին կողմն կշնորհավորենք Ս. Զատիկը, մաղթելով վեհիդ երկար տաճինն և արդյունաշատ հովվապետություն:

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐԲ


ԵՏԱՄԻՈՒԼ

Մեր և մեր համայնքին անունով ջերմակես կշնորհավորենք Ս. Զատիկը, մաղթելով փառառոյց կյանք և Մայր Աթոռին բարգավաճում:

ԽԱԴ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅԵՐՈՒԹ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև հարգալից զգացմունքներով և ամենաջերմ սրտով զոված բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասանմանի և ներքին բոլոր թեմերից, քեմակա, առաջնորդներից, ազգային-էկեռեցական և մշակութային կազմակերպություններից, նալ և օտար պաշտոնական անձնավորություններից:





ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՅՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՍՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԷՃՄՐՈՒՄ

Քրիստոսի Ս. Հարության տոնն է:

Ամենայն Հայոց Հայրապետը, լրիվ զգես-
տավորման մեջ, ամպհովանու տակ, եկեղե-
ցական թափուրով Վեհարանից առաջնորդ-
վում է Մայր Տաճար, ուր հանդերձյալ է
մատուցելու Զատիկի սուրբ և անմահ պա-
տարագրը:

Հավատացյալների խումբն բազմության
միջից, թափուրը, «Հրաշափառ»-ի քաղցր
հլենչներով, առաջնորդվում է դեպի Տաճար:

Ս. Սեղանին սպասավորում են գերաշնորհ
Տ. Սահակ և Տ. Հայկազուն արքեպիսկո-
պոսները, հոգեշնորհ Տ. Գրիգոր, Տ. Մես-
րոպ, Տ. Ներսես արեղաները, արժանապա-
տիվ Տ. Հովհաննես քահանան և Մայր Աթո-
ռի սարկավազները:

Սուրբ պատարագին ներկա են մեծ թվով
հյուրեր, Գերագույն Հոգևոր հորհրդի և Վե-
րստուգիչ հանձնաժողովի անդամներ, ուխ-
տավորներ Մեքսիկայից, Իտալիայից, Սի-
րիայից, Իրանից և այլ վայրերից:

Մայր Տաճարի երգչախումբը դաշն ու
հանդիսավոր կերպով երգում է սուրբ պա-
տարագրը:

Ամեն կողմ խունկ, լույս և աղոթք:

Տերունական աղոթքից առաջ, Վեհափառ
Հայրապետը, ներշնչված զատկական սուրբ
խորհուրդներով, տալիս է իր պատգամը:

«Ձրխտոս յարեալ ի մեռելոց,
Ի Բնուածք զմահ կոխեաց,
Եւ յարութեամբն իյրով
Ինչ զկեանս պարգևեաց»:

«Սիրեցյալ հաւատացյալ ժողովուրդ մեր,

Այսօր վերստին կտոնենք Զատիկը: Վերըս-
տին կտոնենք Ռիշատակը մեր Փրկչի հրաշա-
փառ Ռարության: Այսօր նոր լույս կիջնե աշ-
խարհի վրա և մեր հոգիներեն ներս, զի ահա
նոր գարուն կբացվի երկրի վրա հորիվոնե հո-
րիվոն, և մեր հուսացյալ հոգիները նորեն կջեր-
մանան սուրբ Ռարության ավետիսով:

Այսօր գարուն է: Այսօր Զատիկ է:

Այսօր տոնն է կյանքի հաւերժության՝ բնու-
թյան մեջ:

Այսօր տոնն է հավերժական կյանքի հույսին՝
մեր սրտերուն մեջ:

Զարթոնք բնության, պարթոնք հոգիներու:

Երկու աշխարհներ, ուր նոր արևներ կծագին
ահա:

Երկու աշխարհներ իրարու կյանք տուող:

Երկու աշխարհներ իրար լուսավորող, իրար
հավերժացնող:

Եւ այսօր, աշխարհները բոլոր փառքը կօրհ-
ներգեն արարչագործության և միակ Արարչին:
Եվ հարեավ Զրիստոս...

Եվ փշովեցան շղթաները մահվան, հուսա-
հատության: Հալեցան կապանքները մեղքին

ու պենքերը չարին: Փարատեցավ ծանր խավարը մաշյ դարերուն: Լուսն արդարության ողողեց աշխարհը և մարդիկը բոլոր: Եվ սուրբ խոսքը սիրո և խաղաղության հնչեց հաղթական:

Ահավասիկ, սիրելիներ Մեր, հրաշք շնորհները Փրկչի հարության, որ անգամ մը ևս Ձեզի կավետվին մեր սուրբ սեղաններեն, ամենուդ անխտիր, աշխարհին համայն:

Հարուցյալ Փրկչի Իջման այս սուրբ տեղեն՝ Ս. Էջմիածնեն, Մենք կշնորհավորեկք Ձեր Զատիկը լուս, և կաղոթենք, որ հարության շնորհներն այս բոլոր՝ բաշխվին ձեզի, ծիլ ծաղիկ բանան ձեր սրտերուն մեջ և կյանքի բոլոր գործերը ձեր ըլլան միշտ բարի, արդար, անիվ, շինարար:

Միշտ հաղթող հարության ավետիսը մեր սրտին մեջ առած, աղոթենք նաև, որ մարդիկ ու ազգեր բանան աչքերն իրենց հոգիներուն, ու տեսնեն, ընդունին նոր լուսը աշխարհի, խաչյալ և հարուցյալ Փրկչի գերեզմանեն ցաթող՝ լուսը նոր կյանքին, լուսն արդարության ու խաղաղության:

Կյանք, արդարություն և խաղաղություն. ահա իղձերը հավիտենական՝ բոլոր ազգերուն, բոլոր դարերուն:

Այսօր մանավանդ, մարդկությունը համայն ա՛յս այրող իղձով կապրի. կշնչե, ու կորոնե տիրական կամքով՝ իր նոր ապագան:

Գերեզման իջավ ու հարյավ Զրիստոս, որպեսզի աշխարհը մարդոց՝ առավել կյանք ունենա, առավել արդարություն, առավել խաղաղություն:

«Ջխաղաղութիւն թողում ձեզ, Վխաղաղութիւն զիմ տամ ձեզ»:

Ահա՛ կտակը Աստուծո Որդվույն:

Զրիստոսի Ավետարանը ավետումն իսկ է արդարության լուսին, խաղաղության լուսին և սիրո լուսին: Երանի՜ թե վերջապես այս լուսը փրկարար սփռվեր բոլորիս ու բոլորին վրա, և մարդիկ ու ազգեր սիրար ողջունեին ճշմարիտ սիրով, խաղաղ սրտերով, արդար գործերով:

Թող անդարձ հեռանան մեր սահմաններեն, կյանքի, աշխարհի բոլոր սահմաններեն, ոխն ու ատելությունը և անհանդուրժող ոգին:

Թող անհետ վերանան կապանքները ամեն տեսակի բռնություններու, շահագործություններու:

Թող արդարությունը և խաղաղությունը ապտ բաշխվին այս արևին տակ հավասարապես բոլոր մարդերուն, բոլոր ազգերուն:

Այլևս չտեսնենք ո՛չ մենք և ո՛չ զավակները մեր և ո՛չ զավաներն անոնց՝ ո՛չ մեկ պատերազմ վինու պոռությամբ:

Պետությունները թող խորտակեն մահ սըփռող պենքերը բոլոր ու մանգաղներ ծուլեն անոնց երկաթով:

Ջինաթափություն և արդարություն, հաց և խաղաղություն ազգերուն բոլոր:

Մարդկային կյանքը դեպի իրավ երջանկություն տանող աստվածահաճո այս համբուն վրա, աշխատանք ունին կատարելիք նաև եկեղեցիները և եկեղեցականները ամեն որոնք Զրիստոսի անունը կկրեն արդար պարճանքով:

Աշխարհի խաղաղություն, ժողովուրդներու բարեկամություն, ահա՛ գետին մը սրբապան գործի, ավետարանական գործի, որուն շուրջ կրնան և պե՛տք է հավաքվին քրիստոնեական քույր եկեղեցիները բոլոր, վասնզի ավետարանական իմաստով ճշմարտապես մարդասիրական գործ է աշխարհի խաղաղության համայն տարված աշխատանքը:

Ահավասիկ ուղի մը նաև սիրո ամրապնդման, միության և գործակցության եկեղեցիներու միջև, վասնզի խաղաղության աշխատանքը նաև կենդանի գործի ճանապարհ է՝ եկեղեցիները դեպի միություն տանող՝ Զրիստոսի սիրով, փոխադարձ հարգանքով ու գնահատանքով:

Մենք չենք հավատար եկեղեցիներու միության իրականացման՝ լոկ վերացական, մերօրերու կյանքեն կտրված եղանակներով:

Մենք չենք հավատար եկեղեցիներու միության իրականացման՝ քրիստոնեական որոշ Աթոռներու իշխանության տարածումով այլ եկեղեցիներու վրա, ի՛նչ ձևով ալ ըլլա այդ:

Մենք կհավատանք եկեղեցիներու միության իրականացման՝ պատմականորեն ծնունդ առած ու վարճացած քրիստոնեական եկեղեցիներու միջև, միմիայն ճշմարիտ և անկեղծ ավետարանական սիրով, ամեն մեկ եկեղեցի պահելով իր աստվածաբանական մտածելակերպը, իր կանոններն ու ավանդությունները, իր ծեսերն ու իր ազգային նկարագիրը, իր նվիրապետական դրությունը և ինքնագլուխ ղեկավարությունը:

Այս է, Մեր կարծիքով, իրավ ճանապարհը դեպի միություն տանող: Միություն Քրիստոսի սիրով: Դառնանք ուրեմն դեպի ճշմարիտ աղբյուրը սիրով միության՝ դեպի Քրիստոս, մրակ և անփոխարինելի Գլուխը Սուրբ Եկեղեցին:

Եվ մանավանդ, վերադարձնենք արքայության բանալիները իսկական Տիրոջը՝ մեր Փրկչին՝ Քրիստոսին, որպեսզի մուսը հավիտենական կյանքին բաշխվի բոլորին առանց խտրության, հավասարապես:

Եկեղեցիներն ու քրիստոնյաները, այսպես մտածելով, այսպես գործելով, հավերժական կյանքի դռները որոնելու իրենց ճամբուն վրա, գուցե հասնին վերջապես երկրային կյանքի խաղաղության ավին, ի կատարումն Աստուծո կամքին, «որպես յերկինս և յերկրի»:

Խաղաղություն, սե՛ր և միություն նաև Հայաստանյայց Եկեղեցին ու հայ ժողովուրդին:

Թող մեր մեջ ևս օրավուր առավել ամրանա ու ապառաժ դառնա այս սրբազան ոգին, պի մեկ է և հավերժ անբաժանելի Հայոց Եկեղեցին, իր միակ Գլուխ Սուրբ Էջմիածնով, մի է հայ ժողովուրդը իր պատմության գրքով, դարերու երկունքով բյուրեղացած իր մշակութով, և մի է վերջապես մեր օրերու իր վերածնունդով, ապրող ու շնչող, աճող ու ծաղկող ու հպարցող իր նոր Հայրենիքով՝ ամենայն հայոց Մայր Հայաստանով:

Թող Աստված օրհնե մեր Եկեղեցին, ժողովուրդը մեր, հարություն առած Մայր Երկիրը մեր:

Եվ ուժ ու եռանդ և ոգի միության ու ջինարար գործի՝ բոլորիդ, ձեզի, հարապատ որդիք հայ ժողովրդյան, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, որպեսզի ամեն մեկդ ձեր կերպով ու չափով, առավել պորաքենք հավատքի ամրոց մեր Սուրբ Եկեղեցին և աստվածակառույց Մայր Աթոռը մեր, և որպեսզի ամենքդ աշխարհի բոլոր ծագերեն՝ հոգեով, սրտով, գործով կենդանի՝ ափ մը լույս ու երգ ընծայաբերեք Մայր Հայաստանին:

Հայոց աշխարհին և Փրկչի Իցման տեղեն ձեզի ամենուդ սիրո ջերմ ողջո՛ւյն և բյուր օրհնություն:

Արդ, սիրելիներ՝ Մեր, հարապատներ՝ Մեր, սուրբ հարության լույս ավետիսով, «լամենայն

ժամ ուրախ լերուք», «և ինքն Աստուած խաղաղության սուրբ արասցե՝ զձեզ հավորէնս, և բովանդակ ձեր ոգի և շունչ և մարմին՝ անարատ պահեսցի ի գալուստ Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Ա Թեսաղ. Ե 16, 23), այլմ և հավիտյան:

Ամեն»:

Վեհափառ Հայրապետի դատկական քարոզը նույն զիշեր ձայնասփոփում է նրեանի ռադիոկայանից:

Հավարա սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, որտեղ, Մաղկյա դահլիճում, լուսարարապետ զերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, հանուն միաբանության և հայ հավատացյալ ժողովրդի, շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Զատիկը, մաղթելով երկար, բաշատոջ և բեղմնավոր տարիներ:

Նորին Սրբությունը օրհնում է բոլորին և մաղթում խաղաղություն և բարգավաճում մեր երկրին ու ժողովրդին, շինություն և պայծառություն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն:

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատանը, Վեհափառ Հայրապետը, Ս. Զատիկի տոնի առթիվ, հայրապետական սեղանին մասնակից է դարձնում Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնական անձանց և հարգելի հյուրերին:

Զատկական սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը: Սեղանի շուրջ ստեղծվում է ջերմ մթնոլորտ: Վեհափառ Հայրապետը բոլոր ներկաներին առանձին-առանձին բարեմաղթություններ է անում:

Սարկավազների կողմից սեղանը զվարթացվում է խմբերգերով և մեներգերով:

Երկու ժամ տևող այս հաճելի սեղանը առիթ է դառնում, որ ներկաները մի անգամ ևս էջմիածնի անունով ապրեն, լցվեն հայ ժողովրդի սիրով և Վեհափառ Հայրապետի գործով ուրախանան:

Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով փակվում է դատկական ընդունելությունը:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՄԱՐՏԻ 18-ին, ԿԻՐԱԿԻ, «ԱՆԱՌԱԿԻՆ»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը, Քարոյ խոսեց հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա Նզիբյանը, բնարան ունենալով «Զի ալսպէս ուրախութիւն լինիցի յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

ՄԱՐՏԻ 24-ին, ՇԱՐԱԹ, «տօն է Սրբոյն Գրիգորի խոստումը մերոյ սոսկալի լարչարանացն և մտին ի վիրապն»։ Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ, պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա Նզիբյանը և հավուր պատշաճի քարոզեց, բնարան ունենալով «Եթէ ունիցիք հատուտ որպէս զհատն մանանխոյ և ասիցէք թթենտոյս այսմիկ, խլեաց և տնկեաց ի ծովու, և հնազանդեսցի ձեզ»։

ՄԱՐՏԻ 24-ին, ՇԱՐԱԹ, Հոգեւոր Ճեմարանի դահլիճում, տեղի ունեցավ երեկոյթ նվիրված Կոմիտաս վարդապետին։ Դասախոսեց Ճեմարանի հայկական խաղաղութիւն ուսուցիչ պր. Վարշամ Փարսադանյանը։ Գեղարվեստական բաժնում կատարվեցին խմբերգեր և հայկական խաղաղութիւն բերեցողութիւններ։

ՄԱՐՏԻ 25-ին, ԿԻՐԱԿԻ, «ՏՆՏՆՍԻՆ»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարոքյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը, բնարան ունենալով «Եւ զովեաց Տէր զտնտեսն անիրաւութեան»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

ՄԱՐՏԻ 28-ին, ՉՈՐԻՔՇԱՐԹԻ, «ՄԻՋԻՔ»։ Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահութիւնով, կատարվեց Ա-

րեազալի հոգեպարար արարողութիւն, ի ներկայութիւն համատացյալների հոծ բաղմոթիւն։

Արեազալի երգերը զգացումով կատարվեցին Հոգեւոր Ճեմարանի ուսանողութիւն կողմից։

ԱՊՐԻԼԻ 1-ին, ԿԻՐԱԿԻ, «ԴԱՏԱԻՐԻՆ»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը, քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողոսյանը, բնարան ունենալով «Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս և մի ձանձրանալ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

ԱՊՐԻԼԻ 5-ին, ՀԻՆԳՇԱՐԹԻ, Հոգեւոր Ճեմարանի հանդիսատահում, տեղի ունեցավ մեծահոշակ երգչուհի Գոհար Գասպարյանի համերգը, ընկերակցութիւնով դաշնակահարուհի Նորա Ոսկանյանի և ֆլեյտիստ Լեոն Ալոյանի։

Տաղանդավոր երգչուհին հանդես եկավ դասական ու կրօնական մասնավոր պատրաստված ճոխ հայտագրով։

Հայտագրի առաջին բաժնում ներկաներին հոգեկան իսկական բավարարութիւն պարպնեցին Ստրատիլայի «Մեղեդի»-ն, Հենդելի «Արիացի» դուետը Սիոնի»-ն, Մոցարտի «Ալեկուիա»-ն և Բախ-Գունդի «Ավի Մարիա»-ն։

Հայտագրի երկրորդ բաժնում շնորհալի երգչուհին ապրումով երգեց նաև Կոմիտասի «Կուռնիկ»-ը և «Ծիրանի ծառ»-ը։

Համերգին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր աթոռի միաբանութիւնը, Հոգեւոր Ճեմարանի դասախոսներն ու ուսանողները, Մայր Աթոռի պաշտօնեութիւնը և աշխատողները։

Համերգն ունկնդրվեց մեծ բավականութիւնով։



ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ, ՇԱՐԱԹ, «Աւետումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա նդիսյանը։



ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ԳԱԼՍՏՅԱՆ»։ Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա նդիսյանը, քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը, բնարան ունենալով «Զի այնպէս սիրեաց Աստուած դաշխարհ, մինչև զՈրդին իր Միածինն ետ, զի ամենայն, որ հաւատայ ի նա, մի կորիցէ, այլ զհեանս յաւիտենականս րեկայցի»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ, ՀԻՆԳՇԱՐԹԻ, Հոգեւոր Ճեմարանի հանդիսասրահում, Մայր Աթոռի միաբանության, ուսանողության և աշխատողների համար շահեկան դասախոսություն տվեց պրոֆեսոր Զաղարյանը՝ սրտի արտոնների վիրահատության մասին։ Հարգելի պրոֆեսորի հետաքրքրական դասախոսությունը լավեց մեծ ուշադրությամբ և զուգունակությամբ։

Դասախոսությունից հետո ցուցադրվեց սրտի վիրահատության վերաբերյալ հատուկ կինոժապավեն։ Ապա հարգելի դասախոսը պատասխանեց ներկաների հարցերին։



ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ԾԱՂԿԱԶԱՐԴ»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, բնարան ունենալով «նստեալ ի յէջ և յաւանակ, կրկին ազանց զոլ սրինակ» շարականի տողերը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ, ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱՐԹԻ, «Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողոսյանը։

Հոգեւոր Ճեմարանի ուսանողությունը, առաջնության ժամերգությունից հետո, խոստովանվեց և հաղորդվեց։

Երեկոյան Ռոմայվայի կարգը կատարեց Մայր Տաճարի յուսարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Գիշերվա ժամը 8-ին Մայր Տաճարում սկսվեց հսկումի ժամերգությունը։ Քարոզը խոսեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը՝ «Միտ իմ սասանի, սարսափ զիս ունի, վասն Յուզայի» բնարանով։

Արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։



ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ, ԱՎԱԳ ՇԱՐԱԹ, «Ժրագայոյց Զատկի»։ Երեկոյան ժամը 5-ին սկսվեց ժամերգությունը և ապա սուրբ պատարագը։ Պատարագին էր գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, որը նախագահեց նաև Զատկի նախատոնակի հանդիսությանը։


Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, «Քրիստոս յարեալ ի մեռելոց» Հարության շարականի երգեցողությամբ, առաջնորդվեց Վեհափառը։




ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենցյանը։ Հավարտ սուրբ պատարագի, Հոգեհանգստյան պաշտոն կատարվեց «վասն համօրէն նեջելոց»։



ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, Հոգեւոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը, ընկերակցությամբ քարեշնորհ Անաստաս սարկավազ Մովսիսյանի և տիրացու Կարպիս Մերայդարյանի, մեկնեց Բաբու, հայոց եկեղեցում նախագահելու համար հին տոմարով Զատկի տոնակատարությանը։





Պ Ա Տ Մ Ա-Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՑ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

Ծ Ե Ս Ր Ո Պ Ծ Ա Շ Տ Ո Ց*

§ 4

Մենք պիտի ժամանակագրությունը ճշտիմ վերականգնելու ժամանակ պետք է նկատի ունենալ, որ թե՛ Կորյունի և թե՛ մյուս պատմագիրների մեջ կան մի քանի թվական անճշտութիւններ, որոնք առաջացած են ձեռագրական վրիպակներից և խանգարիլ են հանդիսանում գործին:

Այս վրիպակները պատճառ են եղել ոմանց համար տարբեր եզրակացութիւններ հանելու, տարբեր թվականներ դնելու, սրանով էլ որոշել են ուրիշներին նորանոր քննութիւններով հաճախ ծայրահեղութիւնների դիմելու: Ուստի անհրաժեշտ ենք համարում այստեղ քննարկել նախ այդ անճշտութիւնները և երկրորդ՝ քննադատների խրճրածանքները:

1. Առաջին թվական անճշտութիւնը Կորյունի պատմութեան մեջ հետևյալն է.

Կորյուն (տպ. Վենետիկ, 1894, էջ 17) պատմում է, թե Դանիելյան նշանագրերը Վոսադապուհի ճիւղերուց տարին Հայաստան բերվեցին. «ի հինգերորդ ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանելու: Մենք այդ տառերը փորձեց երկու տարի. «իրիկ ամս երկու կարգիս ղ վարդապետութիւն իւր և նովին նշանագրովք տանելու: Այնուհետև Մենք տեսնում է, որ թերի են այդ տառերը և մեկնում է Միջագետք» նոր

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1954 թվականի XI—XII, 1955 թվականի I, II, III, IX, 1956 թվականի I, II, IV—V, VIII—IX, XI—XII, 1961 թվականի Ժ, ԺԱ, ԺԲ և 1962 թվականի Ա, Բ և Գ համարները:

խուզարկութիւններ կատարելու համար դարձյալ Վոսադապուհի ճիւղերուց տարին. «իսկապուհի ղնայր ի հինգերորդ ամի Վոսադապուհի արքային Հայոց» (էջ 18): Օգնւիւթիւթ և Սամուսատում մի ժամանակ աշխատելուց հետո, հայերեն տառերը դաժնում է Հայաստան, «ի վեցերորդ ամի Վոսադապուհի արքային Հայոց Մեծաց»:

Ամեն մի ընթերցողի համար էլ հայտնի է, որ երկու ճիւղերուց-ներից մեկը սխալ է: Բանասերները զանազան բացատրութիւններ են տվել սխալը ուղղելու համար: Չամչյան, Ա, էջ 263, մտածում է, թե Կորյունի հիշած առաջին հինգերորդ տարին վերաբերում է ոչ թե Դանիելյան գրերի գլուտին, այլ, ըստ Փարպեցու, Մենք պիտի քարոզութեան սկզբնավորութեան, Կորյունի վերջաբանից հայտնի է, որ Մենք պիտի քարոզութեան սկսելուց մինչև գրերի գլուտը անցավ տասը տարի, ուստի եթե Մենք պիտի քարոզութեան սկզբնավորութիւնը տեղի ունեցավ ըստ Չամչյանի Վոսադապուհի հինգերորդ տարին, գրերի գլուտն էլ տեղի ունեցած պիտի լինի նրա 15-րդ տարին: Այս մտածութեամբ Չամչյանը Կորյունի առաջին ճիւղերուց բացը անփոփոխ պահելով, երկրորդ անգամ հիշված Ն թիւը դարձնում է ԺԵ և նրա հաջորդ 2 տարին էլ դարձնում է ԺԶ, համարելով, թե գրիչների անհամարժեքութեամբ Ժ տառը հետո բնկել է:

Բայց այս բոլորը անշուշտ սխալ է. նախ՝ որովհետև Կորյունը հայտնապես ասում է, թե այս հինգերորդ տարին Դանիելյան տառերը բերելու տարին է և կարիք չկա դարձնելու Մենք պիտի քարոզութեան սկզբնավորութեան:

թյունը Երկրորդ՝ սրանով անտես է առնվում Կորյունի տված երկու տարին՝ Դանիելյան տառերի փորձարկության համար:

Իսահակ Հարությունյանն էլ («Հայոց գիրք», էջ 337—338) մտածում է, որ եթե Մեսրոպը ըստ Փարպեցու Վռամշապուհի հինգերորդ տարին եկավ Սահակի մոտ, չի կարող այս տարին նրա քարոզության տարին համարվել (ինչպես անում է Զամյան): որովհետև նույնիսկ Կորյունի վկայությամբ Մեսրոպ Սահակի մոտ զարույց առաջ՝ երկար ժամանակ քարոզած էր Գողթան գավառում, հետևաբար դուր են Զամյանի ժն, ԺԶ սրբազրույթյունները:

Ոմանք էլ Կորյունի առաջին հիևգեւորդ-ը պահում են անփոփոխ, և որովհետև Դանիելյան նշանագրերի փորձարկությունը երկու տարի տևեց, երկրորդ հիևգեւորդ-ը դարձնում են Լոթենուրդ, ասելով, թե Ե (5) և է (?) տառերը շատ հեշտ էր շփոթել: Այսպես է վարվում, օրինակ, Լ. Լ. Թորոսյան, «Բագմալիկա», 1922, էջ 21: Բայց այս դեպքում հաջորդ վեցերորդ բառն էլ պետք պիտի լիներ փոխել ութերորդ:

Ուրիշները այսքան փոփոխություն շատ համարելով, Դանիելյան գրերի փորձի համար Կորյունի նշանակած «ամս երկուս քաջատրությունը դարձնում են «ամիսս երկուս», և այսպիսով բոլոր մյուս թվականները մնում են անփոփոխ: Այսպես է վարվում, օրինակ, Իսահակ Հարությունյան (անդ, էջ 170): Սրանով եթե Դանիելյան գրերը ուղարկվեցին Վռամշապուհի հինգերորդ տարին, փորձն եղավ նույն տարին, Մեսրոպ ճամբորդության դուրս եկավ դարձյալ նույն հինգերորդ տարին և վերադարձավ վեցերորդ տարին: Այս սրբազրույթյունը հարմար կլիներ նաև այն նկատառումով, որ գրերը փորձելու համար տրված երկամյա չափազանց երկար միջոցը կարճացած և երկամյա պատշաճավոր ժամանակի վերածված կլիներ: Սակայն այս սրբազրույթյունը անհարմար է այն տեսակետով, որ Կորյունից հետո Դանիելյան գրերի փորձի վրա խոսող մյուս հեղինակներն էլ տարի գիտեն և ոչ ամիսներ: Այսպես, հորենացին այս փորձը համարում է թզամս սակալս», Սամվել Անեցին «ԳԴանիէլի նշանագիրն յօրինէին... յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր նշանագրօք» և այլն:

Ավելի վճռական է Մարկվարտ (Պատմություն հայ նշանագրերու, Վիեննա, 1913, էջ 27), որ Կորյունի սույն հատվածից թե իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր բառերը ամբողջովին հետին յուսանցազրույթյուն է համարում և ջնջում է, որով դարձյալ երկու հիևգեւորդ-ները կմը-

նան, ինքադրելով, որ փորձարկության միջոցը շատ կարճ էր և Մեսրոպ հենց Դանիելյան գրերը ստացած տարին էլ մեկնեց Ասորիք: Գրեթե նույն ձևով է վարվում Ալիեյան, որ «Հանդես ամսօրյա», 1935, էջ 457, ամբողջ հատվածը փոխադրում է ուրիշ տեղ և մի մասն էլ ջնջում է. իսկ անդ, էջ 512, երկու տարին բոլորովին դուրս գցելով, ասում է, որ Սահակ և Մեսրոպ առաջին հայացքով իսկ համոզվեցին, թե այդ նշանագրերը հարմար չեն և թիրք անպետք մեկդի նետեցին:

Գալուստ Տեր-Մկրտչյան (Մերաբարտ, 1912, էջ 508 և 511) նկատում է սխալը, առաջին հիևգեւորդ-ը համարում է ուղիղ, երկրորդը՝ անորոշաբար գրում է «Հի...երորդ», իսկ վեցերորդ-ը դարձնում է ԺԶ փոխանակ Զ (16-րդ տարին, փոխանակ 6-րդի): Սրանով երկու տարվա հաշիվը մնում է առանց քաջատրության:

Յետգլյան, Կորյունի քննական հրատարակության մեջ (Երուսաղեմ, 1930, էջ 18) սխալ է համարում հիևգեւորդ-ը, որովհետև, ասում է, «Դանիելյան նշանագիրներուն յաեկարծազլստ հասնիլը ավելի տպավորիչ ըլլալով՝ ժամանակը ավելի ճշտիվ պահված ըլլալու է»: Կարծես թե սխալը Կորյունը կատարած լիներ և ոչ թե հետին գրիչները: Այնուամենայնիվ, էջ 21, վեցերորդ բառը անփոփոխ պահում է:

Վերջապես Օրմանյան («Ազգապատմ», Պոլիս, 1912, Ա, էջ 277) մատնանշում է սխալը, բայց ոչ մի փոփոխություն չի առաջարկում, ասելով, թե թվականներու հարմարությանց համար ավելի երկարելը ծանծարալի կրնա դառնալ:

Ամենից ճիշտ սրբազրույթյունը առաջարկեց Մալխասյան: Այս սրբազրույթյամբ Կորյունի հիշած թվականների մեջ առաջին հիևգեւորդ բառը պետք է դարձնել եւրորդ, որով ամեն ինչ ուղղվում է և բոլոր անպատեհությունները հեշտությամբ վերանում են, անփոփոխ պահելով Կորյունի վեցերորդ-ը, երկու ամ-ը և երկրորդ հիևգեւորդ-ը: Մալխասյանից շատ հետո, բայց անկախաբար նույնը մտածեցի նաև Ես և գրեցի այս մասին Արմֆանի տեղեկագրում, 1941, № 1, էջ 170: Սխալը քաջատրել եմ հետևյալ ձևովով, Կորյունի ձեռագրերում գրված է եզել երդ (համառոտագրված և առաջին տառի վրա պատվի նշան դրած), որ քնականաբար պիտի կարդացվեր «երրորդ»: Մի խեղճ գրիչ, վրան պատիվ դրած Ե-ը թվանշան համարելով, կարգացել է հիևգեւորդ: Մնացյալը պահել է ճիշտ նախկին ձևով, առանց անդրադառնալու, թե 5+2 չի տա 5:



Ուրեմն եզրակացնում եմ, որ Դանիելյան գրքերը Հայաստան ուղարկվեցին Վառձապուհի երբեք տարին, մի տարի մնաց Նոբ-սիա և Սամուալ, վերագրված Հայաստան Վառձապուհի վեցերորդ տարին:

2. Երկրորդ թվական անճշտությունը պատկանում է Փարպեցուն և Խորենացուն. Սահակի մահվան թվականը որոշելու համար, Փարպեցին ասում է «ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի որդւյ Վառձապ»՝ Ճիշտ նույն ձևով ունի նաև Խորենացին, որ ասում է «սկիզբն ամին երկրորդի Յազկերտի եղբւյ Պարսից թագաւորի»: Այս երկուսից պարզ երևում է, որ Սահակ վախճանվել է Հազկերտի (Բ-ի) երկրորդ տարվա սկիզբը, Այս հաշիվը հակառակ է գալիս Կորյունին, որ Սահակի մահը դնում է Հազկերտի (Բ-ի) առաջին տարին:

Բայց այս հաշիվը ո՛չ միայն հակառակ է Կորյունին, որ նույնը կրկնում է երեք անգամ և հանգամանորեն, ո՛չ միայն հակառակ է Փոքր-Կորյունին, Կաղանկալտվացուն և Կան-ձակեցուն, որոնք հայտնապես հիշում են Հազկերտ Բ-ի թառաշին տարին», այլև հակառակ է նույնիսկ իրեն՝ Խորենացուն, որ քիչ վերև, ավելի մանրամասն խոսելով մամանակակից դեպքերի մասին, ասում է. «Ձ21 ամ թագաւորեալ Պարսից Վառձ» մեռանի, թողով գտէրութիւնն որդւյ իւրում Յազկերտի: Որոյ մոռացեալ զհաշտութիւնն, իսկ ն իսկ ընդ քաղաւորելն դիմէ ի վերայ զօրացն Յունաց... Յայնժամ մեծին Սահակայ հասեալ հիւանդութիւն մահուոյ:

Եթե Հազկերտ իսկ և իսկ թագավորած միջոցին գիմել է հունաց վրա և նույն միջոցին չլ վախճանվել է Սահակ, ուրեմն դա Հազկերտի առաջին տարին է և ոչ երկրորդ:

Հաշիվը հակառակ է դարձյալ Մեսրոպի մահվան թվականին; քանի որ Մեսրոպ բոլոր պատմագիրների համաձայն վկայությամբ մեռել է Սահակից 6 ամիս հետո, որ համապատասխանում է ըստ Կորյունի՝ դարձյալ Հազկերտի առաջին տարվան:

Այս բոլոր թյուրիմացությունները կվերանան, եթե Փարպեցու և Խորենացու հիշյալ հատվածները մի Ա տառի հավելումով՝ սրբազանը հետևյալ ձևով. «ի սկզբան Ա ամին երկրորդի Հազկերտի...» (Փարպեցի), «Սկիզբն Ա ամին երկրորդի Հազկերտի...» (Խորենացի), այսինքն երկու հաջորդական ա-երից մին ընկել է, ինչ որ շատ սովորական երևույթ է գրչագրերի մեջ: Սրանով երկրորդի բառը անցնում է Հազկերտին և ամեն ինչ կարգի է ընկնում:

Այս նկատողությունը արել է Նորայր, «Կորին վարդապետ», էջ 388, որին համաձայն է նաև Օրմանյան, «Ազգապատում», Ա,

էջ 321: Բայց Օրմանյան սխալվում է մի կետում. նա (էջ 319) Վառձի մահը և Հազկերտ Բ-ի գահակալությունը դնում է 433 թվականին և ընդունելով հանդերձ, որ Սահակ մեռավ Հազկերտ Բ-ի առաջին տարին, Սահակի մահը դնում է (էջ 321) 436-ին. Մեսրոպի մահն էլ 437-ին. Թյուրիմացությունը ականերն է, ուստի և տպագրական սխալ, փոխանակ 438 և 439:

3. Երրորդ թվական անճշտությունը դարձյալ Կորյունին է պատկանում, Իր համահայալ տեղեկության առաջին մասում, Կորյուն մանրամասն հաշվարկելով Մեսրոպի կյանքը, գտնում է, որ նրա մահը եղել է 439 թվականին, իսկ դպրության սկիզբը՝ 35 տարի առաջ, այն է 404: Իսկ նույն տեղեկության վերջին մասում ասում է, թե դպրության սկիզբը Հազկերտի ութերորդ տարումն է, Հազկերտ Ա նստավ 399 թվականին, ուստի նրա ութերորդ տարին լինում է 408, երկու տարի տարբեր նախորդից: Այս երկուսից մեկը սխալ է, Բայց որովհետև առաջին մասում հաշիվը շատ մանրամասն է և ճիշտ համաձայն Սասանյան պատմության, ուստի կարելի չէ սխալ համարել: Սխալը երկրորդն է:

Մարկվարտ և Նորայր ուղղում են այս ութերորդը. Մարկվարտ («Պատմություն հայ նշանագրերու», էջ 57) դարձնում է Ե (հինգերորդ), որով գրերի գյուտի թվականը լինում է 402/3, իսկ Նորայր ութերորդը դարձնում է վեցերորդ, որով գրերի գյուտը դառնում է ճիշտ 404:

Օրմանյան, «Ազգապատում», Ա, էջ 277, մի ուրիշ բացատրություն է տալիս. ընդունում է Կորյունի առաջին թվականը (404)՝ իրեն Դանիելյան գրի գյուտի թվական, իսկ երկրորդը՝ 406 (անփոփոխ պահելով Կորյունի «յութերորդ ամէ Յազկերտի») համարում է Մեսրոպյան գրի գյուտի թվականը: Զենք ընդունում այս բացատրությունը, որովհետև 1) ըստ մեզ Մեսրոպյան գրերը գտնվեցին 404-ին, Դանիելյան գրերը 401-ին, 2) կարելի չէ Կորյունի համահավաք տեղեկության առաջին կեսը մի հաշվով դնել, երկրորդ կեսը ուրիշ հաշվով:

Ֆնտզյան, Կորյունի հրատարակության մեջ, էջ 76, ուրիշ հաշիվ է անում Հազկերտի ութերորդը՝ անփոփոխ պահելու համար՝ նա ենթադրում է, թե Կորյուն սխալ է իմանում Վառձ Կրմանի թագավորած տարիների թիվը (6 փոխանակ 10), և Հազկերտ Ա-ին գահ է քաթարացնում 396 թվականին (փոխանակ 399-ի), որով Հազկերտի ութերորդ տարին (396+8=404) լինում է ճիշտ դպրության սկիզբը: Սրան ասում են ունքը շինելու տեղ աչքը հանել. փոխանակ ութերորդը վեցերորդ շինելու (մի՞ սխալ միայն), ենթադրում

է երկու սխալ: Բայց սրանով շատ բան է խանգարվում. այն ժամանակ Հազկերտ Ա-ի թագավորության 21 տարին էլ պետք է փոխել և դարձնել (396—421)՝ 25 տարի: Մենք հետո ջուլջուլ կտանք, որ Կորյունի բոլոր թվերն էլ ճիշտ են, միայն Հազկերտի օրեր-րոգը-ը պետք է դարձնել վեցերորդ:

4. Կարենոյ է ճշտել, թե երբ Կորյուն ասում է գրի գյուտի սկիզբը (աղարթութիւն Հայոց), ո՞ր գիրն է հասկանում, Դանիելյան թե Մեսրոպյան: Այս կետը կարենոյ է նրա համար, որ իմանանք, թե այն 404 թվականը, որ վերևում նշանակեցինք իրո՞ւ գրերի գյուտի թվականը. իրապես ո՞ր դրի համար է:

Կորյունի խոսքերից և նրա համահավաք տեղեկությունից ոչինչ չի հասկացվում: Նա պարզապես ասում է թի դպրութենէն Հայոց մինչև ցվախեան սրբոյն՝ ամբ 35... և զըպրութեան Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առաջ սկիզբնա:

Այս հարցով առանձնապես զբաղվել է Գալուստ Տեր-Մկրտչյան (սկրարատա, 1912, էջ 505), Նա ասում է. «Գրի գյուտի պատմությունը տեական գործողություն է, ի՞նչ մոմենտն էին համարում նախնիք, հատկապես հինգերորդ դարում, այդ գործողության սկիզբը, որից և հաշվում էին այդ գյուտի տարիները»: Ապա, աչ ու ձախ որոնումներ անելուց հետո, գրի գյուտի սկիզբը համարում է Դանիելյան գրերի Վաղարշապատ րեբվելը 405 թ. փետր. 25-ն (տե՛ս էջ 512): Մնա համար տալիս է երկու ապացույց, այն է՝ Կորյունի և Փարպեցու վկայությունները: Կորյունի համար ասում է սեկզբնակետը, որից հաշվում է Կորյուն հայ դպրության տարիները՝ Դանիելյան տառերի Վաղարշապատ րեբվելու և Վոսմապուհի թագավորության հինգերորդ տարիներն են, այն է, ինչպես տեսանք, 405-ը» (սկրարատա, էջ 505—506): Իսկ Փարպեցու համար մեջ է քերում այն փաստը, որ նա հայերեն գիր ասելով հասկանում է միայն Դանիելյան գիրը և ամենեին չի էլ հիշում ո՞ւր Մեսրոպի Ասորիք գնալը, ոչ այնտեղ տառեր հնարելը և այլն: Ըստ Փարպեցու, Դանիելյան նշանագրերն են սկիզբ և վերջ ամեն բանի:

Բայց ինչպես քիչ առաջ տեսանք, Կորյունի ասածների մեջ ո՞չ մի ականարկ չկա այն մասին, թե դպրության սկիզբը ո՞ր տեղից պետք է հաշվել: Նա միայն ասում է, թե դպրության սկզբից մինչև Մեսրոպի մահը 35 տարի է: Գալով Փարպեցուն, շատ երկար ենք խոսել նրա մասին: Հիշենք այստեղ Մարկվարտի որակումը. «Ղազար արժանի է սաստիկ կշտամբանաց այս փորձին համար, զոր պետք ենք իրրն պատմական ան-

պատկառ խարգախություն մը մատնանիշ ընել»:

Դիտենք որ Դանիելյան գրերը բերվեցին Վոսմապուհի երրորդ տարին, իսկ Մեսրոպ հնարեց հայերեն գրերը Վոսմապուհի վեցերորդ տարին: Եթե մենք ճիշտ կնքաով իմանալինք Վոսմապուհի գահակալության թվականը, անմիջապես կարող էինք հետևել նաև թե՛ Դանիելյան գրերի, թե՛ Մեսրոպյան գրերի և թե՛ հայ դպրության սկիզբը-նավորության ճիշտ թվականները: Բայց բանն այն է, որ Վոսմապուհի թվականն է անստույգ և հանվում է միայն գրերի գյուտի հաշվից: Այնպես որ եթե Կորյունը դպրության սկիզբը համարում է Դանիելյան գիրը, ուրեմն Վոսմապուհի գահակալությունը եղել է 402 թվականին: Այս թվականը ձեռք ենք բերում այսպես. Մեսրոպի մահվան թվականից (439) հանում ենք 35 տարի (դպրության սկիզբը), ստանում ենք 404, որ է Վոսմապուհի երրորդ տարին, որից հետո գնալով 2 տարի, ստանում ենք 402՝ Վոսմապուհի գահակալության սկիզբը կամ առաջին տարին: Իսկ եթե Կորյուն դպրության սկիզբը համարում է Մեսրոպյան գիրը, ուրեմն Վոսմապուհի գահակալությունը եղել է 399 թվականին, 404-ը համարելով նրա վեցերորդ տարին:

Այս երկուսից մեկն ու մեկը ճշտել և ստուգել առ այժմ անկարելի է:

Բայց ես կարծում եմ, որ Կորյուն գրերի գյուտ և դպրության սկիզբ ասելով հասկանում է Մեսրոպյան գիրը (և ոչ Դանիելյանը), Դանիելյան գիրը փուշ դուրս եկավ. և երկու տարվա փորձից հետո դեն գցեցին. «Ելետ այնորիկ դարձեալ կրկին անգամ է նոյն հոգս ռառնալին, և նմին իսկ խնդրէին ժամանակս ինչ» (Կորյուն) ի՞նչ բանի համար են Մեսրոպի և իր աշխատակիցների թղաղօթ և զտքնութիւնս և զպաղատանս արտասուալից, զխըստամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս: Ի՞նչ բանի համար է կրկնում մարգարեի խոսքը, թե «Յորժամ հեծեծեսցես, յախժամ կեցցես»: Ավելադնենք սրա վրա «և այնպէս բաղում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան դառնելոյ, Որում պարգնէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական յափուն ծնանել ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին» (Կորյուն):

Չեմ խոսում այն հիացական համեմատության վրա, որ անում է Կորյուն՝ Մեսրոպին՝ տառերը ձեռքի՞ն՝ նմանեցնելով աստվածատես Մովսեսին, որ Տասնաբանյա պատվիրանով իջնում էր Սինա սարից. «Երեւ մեծին Մովսէսի, ընդ աստուածախօսին, սքանչելագործին նմանեցուցեալ հասարեացս: Ինչի

համար են այն օրեր տեղ տոններն ու հանդեսները, որով նախարարներն ու ամբոխը գնծում, ուրախանում են: Վերջապես ինչի համար է այն հրճվալի նկարագիրը, որ տալիս է Կորյուն, թե «այսնա ժամանակի երանելի և ցանկալի աշխարհ» Հայոց, անպայման սքանչելի լինէր... Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն և ակնվայել տեսիլ հայելուն...», և այսպես երկու էջ ներքոգ ու գովասանք:

Այս բոլորը Մեսրոպյան գրի համար է և ոչ թե Դանիելյան:

Ասում են մինչև անգամ, թե Թարգմանչաց տոներ, որ ամեն տարի տոնում է Հայ Եկեղեցին, Ռահ գետի հանդիպման հիշատակն է: Այսպիսով մենք կարծում ենք, որ հայ գրչության սկիզբը 404 թվականն է, Մեսրոպյան գրերի գյուտը Վոսաձապուհի վեցերորդ տարում (Վոսաձապուհը գահակալել է 399 թվականին), հետևաբար Դանիելյան գրերը Հայաստան են եկել 401 թվականին, այն է Վոսաձապուհի երրորդ տարին:

5. Հայերեն տառերի գյուտի թվականը համարվել է սովորաբար 404 թվականը: Այս հարցի վերաբերմամբ մի ցնցող հոգված հրատարակեց Գալուստ Տեր-Մկրտչյանը «Արարատ» ամսագրում, 1912, էջ 499—514, որով հերքում է այդ թվականը և գնում 1 ութից մինչև տասներկու տարի ավելի ուշ, 412—416 թվականին: Նա հիմնվում է ասորոց եպիսկոպոս Ռաբուլասի վրա: Այս նշանավոր մարդը գահակալեց 412 թվականին: Ընթերցողները հարկավոր են ծանոթանալ Ռաբուլասի եպիսկոպոսից, այդ ընդունելությունը կամ հանդիպումը չէր կարող 412 թվականից առաջ լինել, բայց այդ կարող էր լինել նաև 412-ից հետո («Արարատ», էջ 509), «Այդ թվականից առաջ, մեր ունեցած տեղեկությունների հիման վրա, անհնար է դնել Մեսրոպյան տառերի գյուտը: Թերևս այդ գյուտը ասորական հետևյալ տարումն է (412 սեպտեմբեր—413 սեպտեմբեր), բայց հավանորեն ոչ դրանից ավելի ուշ» («Արարատ», էջ 513): Զորս տարի էլ հաշվում է Սամուսատ զնալու, Հոուփանոսի պնակիրտը պատրաստել տալու և Առակաց գիրքը թարգմանելու համար և վերջապես 416-ին վերագրվում է Հայաստան:

Այսպիսով, ըստ Գալուստ Տեր-Մկրտչյանի, բուն Մեսրոպյան գրերի գյուտի թվականն է 412—416 քառամյակը («Արարատ», էջ 513): Այս 416 թվականին է, որ Մեսրոպ վերադարձավ Հայաստան:

Գալուստ Տեր-Մկրտչյանի հոգվածին նման մի հոգված էլ ունի շ. Հ. Թորոսյան («Բազմավայր», 1922, էջ 99—104), որի վերնագիրն է «Կորյան հիշած Ռաբուլասի եպիսկո-

պոսը (Եղեգիտ Ռաբուլաս կամ Ռաբուլաս հայրապետը)»: Այստեղ հոգվածագիրը մի տարի էլ առաջ քշելով հայոց գրերի գյուտի թվականը, դարձնում է 413. «Ս. Մեսրոպյան երթալու պարագան՝ մեր նշանագրերու գյուտին համար, և Ռաբուլասի եպիսկոպոսանալուն թվականը, երկուքն ալ պատմականորեն ճշտված և հաստատված, վերջնականապես և անվիճելիորեն կհասցնեն մեր այրուքների գյուտին թվականը մինչև 413 տարին» («Բազմավայր», 1922, էջ 100ա): Իսկ եթե լսենք Peeters-ին («Revue des études arméniennes, IX, էջ 209») «Ռաբուլասը Եղեգիտի գահի վրա բարձրացած չէր 412 թվից առաջ և շատ հավանաբար 414 թվի վերջումն էլ դեռ բարձրացած չէր» (այս մասին խոսել է «Recherches de science religieuse», հատ. 18, 1928, էջ 178—203): Այս հաշվով գրերի գյուտի թվականը պետք պիտի լինի քչի ուրեմն դեպի 415 թիվը...

Հակառակ եմ Գ. Տեր-Մկրտչյանի ենթադրության և պահում եմ 404 թվականը հետևյալ պատճառաբանություններով:

Հակառակ իր զգայացունց բնույթին, Գալուստ Տեր-Մկրտչյանի հոգվածը անուշադիր մնաց մեր բանասերների կողմից: Նրանից առաջ Իսահակ Հարությունյան («Հայոց գիրք», էջ 188) Saint-Martin-ի միջոցով ծանոթանալով Ռաբուլասի թվականին, ամենայն հանգստությամբ ասում է. «Այս անձնավորությունը չի կարող հորենացու հիշած Ռաբուլասը լինել, որովհետև գրի գյուտը տեղի ունեցավ 412 թվից ութ տարի առաջ—402 թ. ա. Գ. Տեր-Մկրտչյանից շատ ավելի առաջ էր նաև Մարկվարտ, որ իր «Պատմություն հայկական նշանագրերու» աշխատության մեջ («Հանդես ամսօրյա-ի մեջ տպված 1912 թվականին, բայց Քանանյան մրցանակին արժանացած 1905 թվականին») ասում է. «Ռաբուլաս անուն եպիսկոպոս մը սակայն այս ժամանակաշրջանին մեջ ծանոթ չէ: Ռաբուլասը պետք է ընթերցող Ռաբուլաս, որ սակայն 411/12-ին եպիսկոպոս եղավ և մեռավ 8 ար 746=8 օգոստոս 435: Իսկ 398 նոյեմբեր 23-ին մինչև 409 օգոստոս 1 Ռահայի Աթոռը կգրավեր Պեկիդա: Ուրեմն հոս անտարակույս ժամանակագրական վրիպակ մը գոյություն ունի, որ սակայն պատմական իրողություններով շատ դյուրավ կմեկնվի» (էջ 58): Ռաբուլասի մասին խոսում է դարձյալ Նահապետյան («Բազմավայր», 1913, էջ 136): Նա գիտե, որ Ռաբուլասը Եղեգիտի եպիսկոպոս է եղել 412—435 թվերին, բայց «կարող է հանգիստ յուր տարեթիվն պահել ամուրձ: Իսկ ժամանագրական անտեղույթյան համար տալիս է հետևյալ շատ զեղեցիկ բացատրությունը. «Եթե Կորյուն չի հիշատա-

կեր վայս (= Եղեհայի ժամանակակից Պեկիդա եպիսկոպոսին), պետք է բնական մոտացության տալ այն մեր թարգմանիչներուն եղեկա և ընկերաց, որոնք գեղեցիկ հյուրասիրություն ընդունելով Բաբելոն եպիսկոպոսին, որ թարմ տպավորության տակ խոսելով իրենց վարդապետի Մեսրոպի ժամանցը Եղեհո մեջ, կարծել տված է, որ 404-ին Ռաբիլասն արդեն եպիսկոպոս եղած էր Եղեհոյում:

Գրեթե նույն պատճառարանությամբ խոսում է նույն նյութի մասին Գ. Ֆետչլյան (առանց սակայն հիշելու Գ. Տեր-Մկրտչյանի հոգվածը, որին թըրես ծանոթ չէր, ինչպես նաև նահապետյանի հոգվածը), իր հրատարակած Կորյունի մեջ, էջ 83: Ահա իր բառերը. «443—444-ին իր մատենիկը դրող Կորյուն հավաստիորեն չէր գիտեր Եղեհո եպիսկոպոսներուն ժամանակագրությունը, բայց իր գրության ժամանակին ամենն մոտ և երկար ստան Եղեհո եպիսկոպոսությունը րրած այս բարձր և նշանավոր եկեղեցականը համարել է եպիսկոպոս եղած ըլլալ 404-ին ես, երբ Մաշտոց գնաց ՀԱՍՏՈՐԻԱՆՆԵՐԿԱՅԱՆԱՅ և Եղեհո եպիսկոպոսին... Ինչ որ ալ լինի, անկարելի է հայ այբուբենի գյուտը եպիսկոպոսության ստույգ թվականին հետ միաբանելու համար՝ դեռ այնքան ուշ որքան է 412»:

Բաբելոսի մասին խոսում է նաև Ակինյան («Հանգես ամսօրյա», 1935, էջ 514), որ Կորյունի այս բարձր պարգևակն սխալ է համարում և ուղղում է Պակիդա, որ նույն ժամանակ Եղեհայի եպիսկոպոսն էր: Թեև Ակինյան չի հիշում, բայց նրանից 3 տարի առաջ նույնպիսի ուղղում առաջարկել էր Թորոսյան («Բաղմավեպ», 1932, էջ 260), բայց փոխանակ գրելու Պակիդա, արևմտյան տառագրությամբ գրում է Քալիդա: Եթե Կորյուն ուղենար հիշատակել Ռաբիլասին, ասում է Ակինյան, նախ՝ ասորական անունը հունական վերափոխությամբ լպիտի տար, երկրորդ՝ լպիտի տառադարձել Ռաբուլաս, այլ Հոբբուդա, ինչպես ունի Rufinus = Հոուփինոս, աղավաղված Հոուփանոս:

Ժիշտ չէ, որ ասորի Ռաբուլաս պիտի տար հայերեն Հոբբուդա. նախաձայն ու տալիս է հայերեն նո՝ միայն հունարեն բառերի մեջ, ինչպես Հոուփանոս. իսկ պարսկերեն և ասորերենի rahbona > ռաբունս թրգմակալն և լեռնալիս > Ռառլանա (հատուկ անուն): Մյուս կողմից ասել, թե Պակիդա կարող էր գրել սխալով դառնալ Բաբիդաս՝ դուր երևակայություն է:

Արդ, Կորյունի մեջ Բաբելոսի անունը հետին հավելված է: Կորյուն, ընայած որ մի քանի անգամ առիթ է ունենում հիշելու այդ

եպիսկոպոսին, բայց միայն մի անգամ տալիս է նրա անունը. «Ընդդեմ լինելի սուրբ եպիսկոպոսացն, [որոց առաջնուն Բաբելոս անուն և երկրորդին Ակակիոս,] հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահալ» (Կորյուն): Մյուս դեպքերում տեսե՛ք ինչ ձևերով է հիշում. «Ես ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց... և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոշ նախրեկալն եղև, առաջի արկեալ նոցա զերշանագիրսն աստուածատուր. վասն որոյ բազում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանալին»: Այս բոլոր խոսափուկ ձևերը հետաքրքիր են, մանավանդ երրորդը. «Ես որ արոնցից որ առաջին անգամ ընդունվեց, նրանց ներկայացրեց գրերս»: Մենք արդեն ցույց ենք տվել, որ Կորյունի մեջ հետին հավելված է Մելիտինեի Ակակիոս եպիսկոպոսի անվանումը: Այս խոսափուկ և տարօրինակ հիշատակություններն էլ ցույց են տալիս, որ Կորյուն նույն եպիսկոպոսների անունը չգիտեր: Եվ եթե առաջին հիշատակության մեջ էլ անկյունավոր փակագծի մեջ առնված մասը հանձնեք, նախադասությունը ամենեվին լպիտի կաղար:

Իր ասածը հաստատելու համար Գ. Տեր-Մկրտչյան մի ուրիշ հնարագետ միջոցի էլ է գիտնում: Կորյուն Գանիկյան նշանագրերը բերված է համարում Վոսմապուհի Նիկեոսի տարին, փորձարկության համար տալիս է երկու տարի, հետո Մեսրոպը մեկնում է Միջագետք Վոսմապուհի դարձյալ Նիկեոսի տարում և վերադառնում է Վոսմապուհի վեցերորդ տարում, Գ. Տեր-Մկրտչյանն ասում է, որ այս վեցերորդ ընթերցվածը շատ հին է և զովար է փոփոխել կամ ջնջել: Այնուամենայնիվ ինքը փոխում է և վեցերորդ դարձնում է ԺԶ (16): Սրա համար էլ հիշում է մի ճառերտիր, որ այս վեցերորդ բառից առաջ բաց տեղ է թողված, պակասը լրացնելու համար («Արարատ», էջ 511): Ենթադրենք, թե Կորյունի բնագրում բոլոր թվերը թվանշանով էին գրված և ոչ թե բառերով, որովհետև հակառակ պարագային կարելի լպիտի լինե՛ր այնպես հեշտությամբ վեցերորդ վեշտասաներորդ դարձնել, ինչպես անում է Զ—ԺԶ: Բայց ի՞նչ է անում Մեսրոպ Միջագետքում ամբողջ ինը տարի Գ. Տեր-Մկրտչյան Գանիկյան գրերի Հայաստան թերվելու դեմ է 405 թվականին, Վոսմապուհի Նիկեոսի տարին: Երկու տարի փորձ է կատարվում, դառնում է 407՝ Վոսմապուհի յոթերորդ տարին, երբ Մեսրոպ մեկնում է Միջագետք: Վերադառնում է Վոսմապուհի ԺԶ—16-րդ տարին, այն է 416 թվականին: 407-ից մինչև 416 ունենք 9 տարի. որից չորսը (412—416) դնում է Եղե-

սիայի և Սամուսատի աշխատանքների համար. իսկ մնացյալ 5 տարի՝ նա:

Ահա թե ինչպիսի՝ լաբիրինթոսի մեջ է գցում Ռարուպսի 412-ը. ահա թե ինչպե՞ս է «կործանվում» հայդ հիմքի վրա մեծ խնամքով կառուցված շենքերը:

Մեր մի հոգավածում (Արմֆանի «Տեղեկագիր», 1941, էջ 169—170) ցույց տվինք, որ Կորյունի նրդ—ը պետք է կարգալ ու թե հինգերորդ, այլ ինչպես գրված է՝ երեքորդ, երկու տարվա փորձից հետո կունենանք հինգերորդ, ինչպես որ գրված է: Մենքուպը մեկնում է Վոսմշապուհի հինգերորդ տարում և վերադառնում է վեցերորդ տարում: Ուրեմն Միջագետքում մնում է մեկ տարի. և այսքանը բոլորովին բավական է մի գրադարան այցելելու, մի այրուրեն հնարելու, մի պնակիտ պատրաստելու և Առակաց գրքի նման մի փոքրիկ գիրք (ունի ընդամենը 60 էջ ութածալ) շորս հոգով (Մենքուպ, Հովհան, Հովսեփ, Հոսիֆանոս) հայերենի թարգմանելու և գրի առնելու համար:

Գ. Տեր-Մկրտչյանի հետ մեր հարցը փակելուց հետո անցնենք Ադոնցին, որ «Հանդես» ամսագրում, 1925, մայիս—նոյեմբեր, մի ընդարձակ ուսումնասիրություն ունի Մենքուպի այս շրջանի գործունեության մասին: Չենք խոսում Թորոսյանի մասին, որովհետև «Բազմավեպ», 1932, էջ 259—260, հրաժարած իր նախկին կարծիքից (Բարուպսից և 413-ից), գրերի գյուտը դնում է 407 թվականին:

Իր ուսումնասիրության մեջ (հատկապես տե՛ս «Հանդես» ամսագրում, էջ 435—436), Ադոնց, որ տեղյակ չէ ո՛չ Գ. Տեր-Մկրտչյանի հոգավածին և ոչ էլ Թորոսյանի, ո՛չ միայն մեջ է քաշում Ռարուպի (412—435), այլև Ակակին, որ Ամիդի եպիսկոպոս էր 419—420 (sic!) թվականից սկսած՝ նա եզրակացնում է, որ Մենքուպի հանդիպումը նրանց հետ չէր կարող լինել ո՛չ ավելի առաջ 420-ից և ո՛չ ավելի ուշ 435-ից: Ուրեմն այս միջոցին պիտի ընկնե՞ր գրերի գյուտը, հետևաբար Կորյունի ուղած թվականը սխալ է:

Երևույթը Ադոնց որակում է «ծամանակական անհեթեթություն» անունով:

Ավելի հետո, ուսումնասիրության վերջին մասում (էջ 535), Ադոնց, ընդունելով հանդերձ, որ 406 թվականից առաջ արդեն տառերը զտնված էին, երկրորդ անգամ ճամբորդել է տալիս Մենքուպին Միջագետք՝ 420—425 թվականներին, այս անգամ զուտ կրոնական նպատակներով՝ նեստորական դավանանքի գործով:

Զարմանալիս այն է, որ Ադոնց խաբեքա է համարում Կորյունին կամ ծածկամիտ և մենքուպի այս ճամբորդությունը, որին ըստ Ադոնցի Կորյունն էլ մասնակից ու գործակից էր, թաքցրած է համարում: Ինչո՞ւ պիտի թաքցնե՞ր Կորյուն այդպիսի մի բան, որի

նպատակը նփեսասի ժողովի դադարեցնելի պաշտպանությունը և ուղղափառ հավատի քառագույնությունն էր:

Բայց Ադոնց գրերի գյուտի իբրև «որոշ և դրական տարեթիվ» դնում է 383—392 տասնամյակը (տե՛ս «Հանդես» ամսագրում, 1925, էջ 531), իր պատճառաբանությունը հետևյալն է.

Հունաց Փոտ պատրիարքը (ծնված 820 թ.) թողել է մի հիշատակություն, թե Թեոդորոս Մոպսուեստացին իր քահանայության ժամանակ գրել է երեք ճառ պարսից կրոնի դեմ և պաշտպանել է քրիստոնեական հավատը: Այդ ճառերը ուղղված են եղել Հայաստանի քորեպիսկոպոս Մաստուրիոսին:

Թեոդորոս Մոպսուեստացու կյանքը և գործունեությունը շատ հայտնի է մեզ: Նա ծնվել է Անտիոքում 350 թվականին. քահանա է ձեռնադրվել 383 թվականին, իսկ 392 թվականին Կիրիկիայի Մամեստիա քաղաքի եպիսկոպոս է նշանակվել. իր քահանայությունը (Անտիոքում) ընկնում է 383—392 տասնամյակին: Եպիսկոպոսական պաշտոնը վարել է 36 տարի և մեռել է 428 թվականին՝ 78 տարեկան հասակում: Իր գրական ու քարոզչական նշանավոր գործունեությունը չի հետաքրքրում մեզ: Այս Թեոդորի աշակերտն էր Ռուփին քահանան, որ 399 թվականին Հռոմ գնաց և եղավ հիմնադիր Պելագիական կողմած վարդապետության:

Ադոնցը այսպես է դատում. 1) «Մեզ թվում է, որ այս Ռուփինը ուրիշ անձն չէ. եթե ոչ այն գրիչ Հոսիֆանոսը, որը հիշվում է գրերի գյուտի պատմության մեջ» (առաջին ենթադրություն). «Հանդես» ամսագրում, 1925, էջ 441): 2) «Եթե Թեոդորի աշակերտը իբրև սոսկ գրիչ մասնակցում է գյուտին, հարկավ, նրա ուսուցիչն ավելի շոշափելի նպաստ պիտի բերած լինե՞ր նույն խնդրին» (երկրորդ ենթադրություն): 3) Մենքուպ, «որ իր երազների համար շրջել էր Մեջիտին, Ամիդ, Նդեսիա, Սամուսատ, այցելել էր և Ակակին, Ռարուպին, մյուս Ակակին, Միջիտինի եպիսկոպոսին, այլև Սամուսատի եպիսկոպոսին, մի խոսքով Հայաստանի սահմանակից նշանավոր հոգևոր գործիչներին, նա չէր կարող զանց առնել այն շրջանի ամենից հեղինակավոր և գիտնական եկեղեցական հոր՝ Թեոդորոս Մամեստացուն» (երրորդ ենթադրություն): 4) «Անակնունելի էլ ընավ, որ Թեոդորի ծանոթ հալազն եպիսկոպոս Մաստուրիոսը լինի Մաշտոցը» (չորրորդ ենթադրություն):

Այս բոլորից հանկարծ եղբակացնում է թե Մենքուպ հայերեն տառերը հնարեց 383—392 թվականներին:

Գեղեցի՜վ թռիչք...

Ընդունենք չորրորդ ենթադրությունը իբր ստույգ և հավատանք, թե Մաստուրիոսը

մեր Մաշտոցն էլ ի՞նչ իրավունք ունենք Մամեստիայի եպիսկոպոսի աշակերտ Ռուփին քահանային նույնացնելու Սամուսատի գրիչ Հռուփանոսի հետ, երբ այլուստ գիտենք, որ Հռուփանոսը հետո եղավ Սամուսատի եպիսկոպոս (440 թ.)։ Սրանով ընկնում է առաջին ենթադրությունը և իբրև նրա հետևանք նաև երկրորդ ենթադրությունը, որ արդեն ոչ մի քնական կապ չուի նրա հետ։ Մեսրոպ գնաց Ամիդ, որովհետև ճանապարհի վրա էր, գնաց Նղեսիայ՝ գրադարանը պրպտելու համար, դնաց Սամուսատ՝ դեղագրի համար, իսկ ի՞նչ գործ ունենք Ասորիքի Անտիոք քաղաքում։ Սրա հարակցությամբ՝ Մեսրոպ ծանոթացել էր Լամիդի, Նղեսիայի և Սամուսատի եպիսկոպոսների հետ, իբրև ճանապարհի վրա եղած պաշտոնական անձանց։ Իսկ ի՞նչ գործ ունենք Անտիոքի Թեոդորոս քահանայի հետ (որ հետո Սամեստիայի եպիսկոպոս եղավ), թեկուզ նա շատ գիտնական մարդ լինելով հետո, Մեսրոպ գնաց Անտիոք՝ Թեոդորոսի մոտ, թե՛ Թեոդորոս եկավ Մեսրոպի մոտ (Նղեսիա կամ Սամուսատ)։ Այս բոլորը հարցեր են, որոնց պատասխան է պետք փոփոխ գրածը այն է ասում, թե Թեոդորոսը մի պիտի է գրել մոզական կրոնի դեմ և ուղղել Մաշտոցին։ Այս է ամբողջ եղածը։ Կարելի է միթե սրանից հետևել, թե ուրեմն Մեսրոպ գրերը հնարել է Թեոդորոսի օգնությամբ և հենց նրա քահանայության 383—392 թվականներին, երբ գրած պիտի լինի մոզական կրոնի դեմ այն երեք ճանքեր։

Այսպիսի եզրակացություն հակառակ է քանական դատողության։ Ուրախ ենք, որ Ակինյան ևս («Հանդես ամսօրյա», 1935, էջ 515) տեսել է Աղոնցի այս անտեղի վարմունքը և պահանջում է, որ չլափավոր լինի իր անհեթեթ եզրակացությանց մեջ։ Ամենից ղվարձալին այն է, որ Աղոնց, հայտնի չէ գիտության մեր թե անգիտության մեր, ելծում է Ակակի եպիսկոպոսության թվականը և 400-ի փոխարեն դնում է 419—420, որպեսզի Մեսրոպին բերի Միջագետք այս թվականին...

6. Մեսրոպի և Սահակի մահվան թվականների մասին առարկում է Գ. Տեր-Մկրտչյան («Արարատ», 1912, էջ 500)։ Խոսելով Նորայրի քննության մասին, («Ստույգ թուականք մահուան Սրբոյն Սահակայ և Սրբոյն Մաշտոցի», տե՛ս «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», էջ 386—390), գտնում է, որ սխալ է հիմնվել Հագկերտ Բ-ի գահակալության այն թվականի վրա, որ տալիս է Նյուդեքեն (438)։ Շնչ չգիտեմ հարգելի հակաբանը կարող է գերմաներեն թե ոչ, ապա թե ոչ խորհուրդ

կտայի դիմել իսկական Նյուդեքեն։ Այսպես է ասում հոգվածագիրը հպարտ ձևով, իբր թե ինքը շատ գիտենար գերմաներեն և կամ թե Նորայրը անկարող լինելու Եվդոհիայում մի գերմանագետ գտնելու Ապացույց է տալիս, որ ըստ Նյուդեքենի ցուցակի պարսից թագավորները գահակալում են խումբ-խումբ, վերից վար, առանց ընդհատման սեպտեմբերի 26-ին, 22-ին, 14-ին, 13-ին, 9-ին, 5-ին, ապա օգոստոսի 19, 18, 16, 14, 8, 4 և այլն և այլն։ «Այդ ինչպիսի խելոք և քննադատներին նեղություն չպատճառող թագավորներ են», քաջականչում է հոգվածագիրը։ Այս ամբիւցնում. «Փոքր ինչ ամբիւի ծանոթություն պարսկական իրականության» պիտի համոզեր հարգելի Նորայրին, որ այս կանոնավոր թվերի շարքը չէ կարող գահակալության օրեր ցույց տալ, այլ զրույնք բոլորովին նման մեր շարժական տոմարին՝ նավասարդի օրերն են։ Այնուհետև քաջատրելով, որ պարսիկները թագավորի գահակալությունը հաշվում էին ոչ թե գահ նստած օրից, այլ նավասարդից, նորից քաջականչում է. «Ուրեմն և հիմնովին պիտի հերքված համարել Նորայրի հավաստածը... կործանվում է և այդ հիմքի վրա մեծ խնամքով կառուցված շինքը»։ Ափսո՛ս...

Այս կործանումից հետո ի՞նչ թվական է տալիս. «Հագկերտ առաջինի (ուզում է ասել «երկրորդի»)»... գահակալության... տարին... կարող է պատահած լինել և 438-ին և 439-ին»։

Բայց մենք վերը ցույց տվինք, որ 438-ն է ճիշտը։

Ստուգելու համար Սահակի և Մեսրոպի մահվան թվականը, հոգվածագիրը օգնության է կանչում «Պատմութիւն վասն Սրբոյն Սահակայ», որ հետին շրջանի մի գործ է, գրված խորենացուց հետո և 850 թվից առաջ։ Այստեղ Սահակի մահվան օրը նշանակված է «հինգշաբթի»։ Տոմարական հաշիվներով կարելի է ստուգել, որ նավասարդի 30-ը (=7 սեպտեմբերի) հինգշաբթի է ընկնում 439 թվականին, ուրեմն այս թվականին էլ վախճանվել է Սահակ և հետևաբար Մեսրոպ էլ 440 թվականի փետրվարի 17-ին (տե՛ս Dulaurier, «Recherches sur la chronologie arménienne», Paris, 1859, էջ 135—136, ծան. 40)։ Սահակի մահը չի կարող լինել 438-ին, որովհետև 438-ի սեպտեմբերի 7-ը ընկնում է չորեքշաբթի։

Հաշիվը և դատողությունը շատ ճիշտ է. բայց ի՞նչ վատհուսություն Սահակից ու Մեսրոպից մի-երկու դար ուշ եկող հեղինակի տված այսքան մանր տեղեկության վրա, երբ այլուստ պիտենք և հաստատում ենք, որ Մա-

Հակի մահը 438-ին է։ Այս նյութով զբաղվել է նաև Օրմանյան, «Ազգապատում», Ա, էջ 321 և ահա թե ի՛նչ է ասում. «Թեպետ Սահակի հետին ժամանակաց ներրողարան մը լատուր ճիւղաբաժնու էր, սակայն ժամանակակիցներեն ո՛չ մեկը յոթնյակի օր չի հիշեր, և մեր եզրակացությունը կարդարանա (ինքը գնում է չուեհշաբթի) տոմարական կանոններու հիմամբ կազմված հաշիվով»։

Սահակի ներբողարանը անդուշտ նավա-
սարդի 30-ը կամ սեպտեմբերի 7-ը իր իմա-
ցած որն է ժամանակի համեմատ է հաշվել և
թեքնա այն տարով՝ երբ գրել է իր ներբողը:
Սեպտեմբերի 7-ը հինգշաբթի է դալիս ամեն
մի դարում 18 անգամ. օրինակ, հենց Ծ դա-
րում այդ օրը հինգշաբթի է լինում 400, 405,
411, 416, 422, 428, 433, 439, 444, 450, 456,
461, 466, 472, 478, 484, 489 և 495 թվական-
ներին:

7. Այժմ ուզում եմ քննել Կորյուհի համա-
հավաք տեղեկությունը, որ վերհեռում ի նկա-
տի ունեցանք մի քանի անգամ և որի մեջ
ոմանք մի քանի ուղղումներ են մտցնում,
անարդար կերպով:

Մեզ եմ բերում հատվածք մաս առ մաս, ա-
մեն մեկին կցելով իմ բացատրությունը:

ա) Եւ արդ լինի ճամբար ճաւատոց երանե-
լոյն ամբ Բաղասուն և ճինգ:

«Համար հաւատոց» ասելով Կորյուն հասկանում է Մեսրոպի կրօնավորական կյանքի հաշիվը. Մեսրոպի մահը դեկտվ 439 թվականին, սրանից 46 տարի հանած կլինի 394-ուրեմն նրա ձեռնադրության տարին է 394: Նորայր («Կորյուն վարդապետ և նորին թարգմանութիւնք») և Ալկիւսյան («Հանդես ամսօրայա», 1935, էջ 543) այս 45-ը դարձնում են 47. քնականարար Խէ կարող էր հշտությամբ դառնալ Խնւ. Երկուսն էլ ամենէին չեն պատճառարանում, թե ինչու՞ 47 և ոչ 45. քայք պատճառը անշուշտ ներքին զ և և կետերն են, որ սխալ են հասկացել և որ կարելի է հշտությամբ հարգարել Ծրմանյան («Ազգապատում», Ա, էջ 267) և Ֆետղլյան էլ (էջ 76)՝ զնում են Մեսրոպի ձեռնադրությունը 394: Ինքնին հասարակ է, որ Մեսրոպի արքունական ծառայությունն էլ, վերջացած պիտի լինի սույն 394 թվականին:

բ) Եւ ի պարտութենէն Հաւագ մինչև ցլախ-
նան Սրբոյն՝ ամբ երեսուն և ունգ:

Եթե Մեմորայի մահը եղավ 439 թվականին և հայոց գաղությունից (գրերի գյուտը) մինչև այդ 35 տարի է անցել, ուրեմն գրերի գյուտը եղել է $439 - 35 = 404$ թվականին, Այս է Մեստրոպյան գրերի գյուտի թվականը (ինչպես վերջ տարրին երկվորորեն քաղատրիցիքս)։ Այս թիվը համապատասխանում է Վնաժա-պուհի թաղավորության 6-րդ տարուն, ուրեմն

և Վոսաձապուհուհի նստել է 399 թվականին, Վոսաձապուհուհի հրորորդ տարին Դանիելյան գրեթե բերվել են Հայաստան, ուրեմն 401 թվականին: Ըստ այսմ Մեսրոպի կրոնավորական կոչումից մինչև գրերի գյուտը (394—404) անցել է 10 տարի:—(Ակիկյան, «Հանդես ամսօրյա», 1935, էջ 543, Կորյունի 35-րդ արձևում է 32, առանց պատճառաբանության):

7) Որք համարին այսպես: Բազառուեալ
Դիսմեռայ Պարսից արեայի ամս վեց և Յազ-
կերտի ամս ռսան և մի:

Այստեղ Դիսմոն ասելով պիտի հասկա-
նանք Վոամ Կրման, իսկ Հաղկերտն է Հաղ-
կերտ Աւ Վոամ Կրման գահակալեց 389—399
թվականներին, ուրեմն 10 տարի. Հաղկերտ
Ա 399—420 թվականներին, ուրեմն 21 տա-
րի, Կորյուն ճիշդ է գրում Հաղկերտի համար
ամս Բաւն Ե մի, Բայց Վոամ Կրմանի համար
«ամս վեց»։ Նորայր սխալ համարելով ամս
վեց-ը, ուղղում է ամս տասն. իսկ Ֆնտղյան
կարծում է, թե Կորյուն սխալ դիտե այս եր-
կու թաղավորների թվականը՝ համարելով
Վոամին գահակալած 389 90-ից մինչև 396
և Հաղկերտն էլ նրան հաջորդած 396-ին, մինչ-
դեռ 399-ին է գահակալած։

Սխալվում են Նորայր և Ֆնտզլյան. ուղիղ է
Կորյուն, և ահա թե ինչո՞ւ:

Եթե Կորյուհ ըստ Ֆեռզվյանի կարծած լինեիր, թե Հազկերտ գահակալիւ է 396 թվականին, այսինքն 3 տարի ավելի շուտ, այն ժամանակ չէր տար Հազկերտին 21 տարի (որ է 399—420), այլ 24 տարի: Ուրեմն սխալ է նաև ասել, թե Կորյուհ Վռամին թագավորած է կարծում 389—396՝ վեց տարի:

Հարց է, թե Կորյուռն սորք համարին այսպէսառասելով, ի՞նչն է հաշվում. հայոց դրպութիւնն տարիններ, թե՛ Մեսրոպի ահամար հաւատոցս-ը՝ Տփած թվերը հետեւյալներն են. Դիսմոն 6 և Հաղկերտ 21. երկուսը միասին 27. բայց այս 27 ո՛չ դպրութիւն 35 տարիններ են և ոչ հավատոց 45 տարինները Թուր թագաւորները հիշված են, միայն չի հիշվում քնավ Վռամ Ե, որ նստել է 420—438 թվականներին, այն է 19 տարի, ի՞նչն այս 19 ավելացնենք վերի 27-ի վրա, կունենանք 45: Սրանից հայտնի է լինում, որ Կորյուռն հաշվում է Մեսրոպի կրօնավորական տարինները, ինչպես պիտի անի երկրորդ անգամ քիչ հետո (տե՛ս կետ Ե), սկսելով Վռամ Կրմանի լորրորդ տարուց, Վռամ նստել է 10 տարի և եթե Մեսրոպ նրա լորրորդ տարին է ձեռնադրվել, ուրեմն Վռամից մնում է դեռ 6 տարի: Ուրիշ խոսքով, երբ Վռամ մեռավ, Մեսրոպ 6 տարի էր որ ձեռնադրված էր: Ահա այս է Կորյուռնի վեցը, որ քուրդուպին ճիշտ է երբեք չպետք է խախտի: Պետք է միայն Կո-

բյուրնի հիշյալ տողերի վրա ավելացնել «և Վոսմայ ամս ութնասան» — Զարմանալի կերպով սխալ է հաշվում Ակինյան («Հանդես ամսօրյա», 1935, էջ 543) և Վոսմ Ե-ին տալով 421 հունվարից մինչև 438 օգոստոս, դնում է 19 տարի (փոխանակ 18-ի և այն էլ ոչ լրիվ) և րստ այսմ Կորյունի մեջ ավելացնում է «և Վոսմայ ամս ԺԹ»։ Մյուս համար է, որ սխալ է հաշվում նաև Մեսրոպի «համար հաւատոց»-ը և 45-ը դարձնում է 47, հաշվելով նաև Հազկերտ Բ-ի առաջին տարին։

դ) Եւ յառաջնումն ամի երկուրդ Յազկերտի օրդյոյ Վոսմայ, լախնանեցաւ երանելին։

Վերը երկար խոսքերն են ցույց տվինք, որ Հազկերտ Բ զահակալն է 438 թվականին. իր առաջին տարին է 438—439. Մեսրոպի մահն էլ այս թվականին էր և Կորյունի ավելի մանրամասն մի հաշվից երևում է, որ նա միտել է 439 թվականի փետրվարի 17-ին։

ե) Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի շորորոցում ամլն Կոմանայ արւացի միեջն յառաջին ամն երկուրդ Յազկերտի օրդյոյ Վոսմայ։

Կորյուն մի անգամ արդեն հաշվել էր Մեսրոպի կրոնավորական տարիները (համար հաւատոց. տե՛ս կետ ա) և զումարն էլ դրել էր 45 (տե՛ս կետ ա)։ Այստեղ ցույց է տալիս, թե 45 տարին ե՛րբ սկսեց և ե՛րբ վերջացավ։ Մենք դիտենք, որ այդ տարիներն են 394—439, Այս 439 թիվը Հազկերտ Բ-ի առաջին տարին է, այո՛ւ. բայց 394-ը Կրմանի շորորոց տարին է, Կրման գահ է նստել 389 թվականին. Կորյուն հաշվել է այսպես.

389—390 առաջին տարի,

390—391 երկրորդ տարի,

391—392 երրորդ տարի,

392—393 չորրորդ տարի։

Կրմանի զահակայության շորորոց տարին լրացել է միայն 1—2 ամիս էր անցել անշուշտ, երբ Մեսրոպ կրոնավոր ձեռնադրվեց։ Այս 1—2 ամիսը Կորյուն ի նկատի լառնելով, կտր հաշվով ասում է չորրորդը՝ Կորյուն սիրում է կտր հաշվել. օրինակ՝ Սահակ մեռել էր Նավասարդի 30-ին, Մեհականի 13-ին. միջոցը անում է 5 ամիս 10 օր, բայց Կորյուն դնում է կտր թվով 6 ամիս, ավելի հաշվելով 20 օր։ Այստեղ էլ նույնն է։

Բայց այսպես չի մտածել Նորայր, այլ վերցրել է 392—393 թվականը (առաջին տարի Մեսրոպի կրոնավորության), ավելացրել Կրմանի մնացյալ 6 տարին, Հազկերտ Ա-ի 21 տարին, Վոսմի 18 տարին և Հազկերտ Բ-ի մի տարին, որով ստացել է $1+6+21+18+1=47$ տարի և սրա համար էլ մի կողմից Կորյունի 45-ը փոխում է 4-ի (տե՛ս կետ ա) և մյուս կողմից «Դիսմոնայ ամս վեց»-ը

դարձնում է 10 (տե՛ս կետ գ)։ Եթե Կորյուն 392—393 թիվը հաշված լիներ, չէր ասի «թաղաւորեալ Դիսմոնայ ամս վեց», այլ «եօթն»։

Յնագլյան էլ ուրիշ ձևով է առարկում Նորայրի դեմ. նա Կրմանի թվականն է եղծում և դնում 390 (փոխանակ 389-ի). վրան ավելացնում է 4 և ստանում 394. Բայց սա ճիշտ չէ, որովհետև նույնիսկ եթե եղծելով դնենք 390, չորրորդ տարին կլինի 393։

գ) Եւ զպրութանն Հայոց յուրերորդ ամլ Յազկերտի առնալ սկիզբն։

Այս կետի վրա խոսել ենք վերևում. ընդունելով Նորայրի սրբագրությունը՝ վեցերորդ փոխանակ ուրերորդ-ի։

Յնագլյան այստեղ էլ դուրս է գալիս Նորայրի դեմ և Կորյունի ուրերորդ-ը պահում է անփոփոխ, վերադարձնելով Կորյունին մի ուրիշ սխալ՝ իբր թե Կորյուն Հազկերտ Ա-ի զահակայության թվականը 396 է կարծում. այն ժամանակ իրոք նրա ութերորդ տարին կլինի 404, որ է թվական զպրության հայոց։ Մենք վերը ցույց տվինք, թե սխալ է Յնագլյանի այս կարծիքը և Կորյունի այս մի թվականը իրոք պետք է Նորայրի հետ սրբագրել վեցերորդ։

Զ. Այս քուրք քննություններին հետո և հիմնվելով նախորդ թվականների վրա, կարելի է որոշել մի քանի ուրիշ թվականներ էլ։ Ե՛րբ եղավ թարգմանիչների երթը Պոլիս։

Այս հարցին պատասխանելու համար երկու կողմն ունենք. առաջին և վստահելի կովանն է Եղեկիի այն նամակը, որ նա գրում է Պոլսից իր ուսուցիչ Մեսրոպին, ուր հայտնում է նաև, թե տեղի է ունեցել Եփեսոսի ժողովը և այնտեղ նգովել են Նեստորին. Եփեսոսի ժողովը տեղի ունեցավ 431 թվականի հունիսի 22-ին. Ուստի նամակը գրված է այդ թվականից մի քիչ հետո։

Երկրորդ կովանն է խորենացու այն տեղեկությունը, որ տալիս է թարգմանիչների մասին (խորենացի, Գ Կ) և վերջը ավելացնում. «Որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոսն Բիւղանդացւոց»։

Մաքսիմիանոս պատրիարքական դահն է բաւժրացել Նեստորի անկումից քիչ հետո. 431 թվականի հոկտեմբերին. և եթե նա է, որ մեծ ընդունելություն է ցույց տվել մեր թարգմանիչներին, ուրեմն թարգմանիչները գնացել են Պոլիս 431-ին կամ մի քիչ ավելի ուշ (Մաքսիմիանոս նստել է 431—431 թվականներին)։

Ժիշտ այսպես է մտածում նաև Նորայր (Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք, էջ 384—385) և թարգմանիչների երթը դնում է զույգ-զույգ. 431 կամ 432 թվականներին։

Բայց այս երկու կովանների մեջ մի փոքր հակասություն կա: Եղնիկի թղթից այնպես է երևում, որ նա 431 թվականի կեսից հետո չի գնացել Պոլիս, այլ անշուշտ մի քիչ էլ առաջ, այնպես որ Մաքսիմիանոս պատրիարքը չէր որ ընդունելություն պիտի ցույց տար նրան, այլ նեստոր: Բայց խորհնացին, եթե իրոք տեղյակ էր թարգմանիչների երթի՝ ճիշտ ժամանակին, չէր կարող տալ նեստորի անունը: Հետևաբար դրել է Մաքսիմիանոսի անունը:

Այժմ տեսնենք թարգմանիչների վերադարձը:

Նորայր նույն տեղում գտնում է, որ թարգմանիչները վերադարձան 434—435 թվականին, որովհետև իրենց հետ բերել էին Նիկիայի և Եփեսոսի կանոնները, Ս. Գրքի ընդհանուր մի օրինակ և Պրոկղի նամակը: Պրոկղ պատրիարք է նստել Մաքսիմիանոսից անմիջապես հետո 434 թվականին և մեռել է 447 թվականին: Իր թուղթը գրել է 435 թվականին, ուստի կարելի չէ դնել թարգմանիչների վերադարձը 434 թվականին, այլ միայն 435-ին:

Բայց ինչպե՞ս կարելի է ընդունել, որ Սահակ ու Մեսրոպ Եփեսոսի կանոնները ստանալու համար ամբողջ շուրջ տարի (431—435) սպասեին Մանավանդ որ կար Ս. Գրքի մի ընտիր օրինակ Հայաստան բերելու հարցը, որի մասին կխոսենք հաջորդ հատվածում: Այս բոլորը ի նկատի ունենալով, թարգմանիչների առաջին խմբի վերադարձը պետք է դնել 431 թվականին:

Բայց թարգմանիչները գնացել էին Պոլիս նաև ուսանելու և թարգմանություններ անելու, ուստի եթե դրա համար էլ գոնե երկու տարի ժամանակ տանք, թարգմանիչների երթը ղեպի Պոլիս պետք է դնել 429 թվականին: Այս թվականին Եղնիկ արգեն Պոլսում էր:

Բայց Եղնիկ իր ընկեր Հովսեփի հետ նախապես Եղեսիա էր ուղարկվել ասորերենից հայերեն թարգմանություններ կատարելու համար: Այս պատվերը կատարելուց հետո, նրանք իրենց թարգմանությունները ուղարկեցին Սահակին ու Մեսրոպին և առանց Հայաստան գալու՝ Պոլիս գնացին նույն գործով: Ուրեմն եթե մենք դրա համար էլ երկու տարի տանք, Եղնիկի և Հովսեփի երթը ղեպի Եղեսիա պիտի դնենք 427 թվականին:

Կորյուն (էջ 33) ասում է, թե Եղնիկի և Հովսեփի մեկնելուց հետո (ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելույս) ինքն էլ Ղեոնդի հետ ուղարկվեց Պոլիս: Երկուսը գնացին և միացան իրենց հին ընկեր Եղնիկին, որի հետ աշխատակցելուց հետո, Նիկիայի և Եփեսոսի կանոնները և Ս. Գրքի ընտիր օրինակը վերցրած, վերադարձան Հայաստան, ինչպես ասացինք:

Ամփոփելով այս բոլորը, եզրակացնում ենք.

427 թվականին Եղնիկ և Հովսեփ գնում են Եղեսիա:

429 թվականին Եղնիկ և Հովսեփ Եղեսիայից գնում են Պոլիս:

429 թվականին Կորյուն և Ղեոնդ Հայաստանից գնում են Պոլիս:

431 թվականին թարգմանիչները դառնում են Հայաստան:

Թարգմանիչների երթի մասին խոսում է նաև Peeters («Revue des études arméniennes», IX, 213) և շատ սխալ բաներ է ասում: Նախ՝ թարգմանիչների երթը դնում է 431-ից հետո, իբր թե այս ժամանակ է, որ Հովսեփ և Եղնիկ գնացին Եղեսիա, հետո էլ Պոլիս: Բայց ինչպե՞ս կարելի է 431-ից հետո ուղարկել Եղեսիա, հետո էլ Պոլիս, երբ Եղնիկ արգեն 431-ին Պոլիս է և այնտեղից նամակ է գրում իր ուսուցիչ Մեսրոպին:

Երկրորդ՝ ծագումը և անհավատալիքը է վերաբերում Կորյունի այն խոսքին, թե Հովսեփ և Եղնիկ ուղարկվեցին Եղեսիա՝ առորական հայրերի գրքերը թարգմանելու հայրենի: Եղեսիայում, պարսկական զրպարոցի այդ կենտրոնում ասորերեն գիրք... րացականում է Peeters...: Իբր թե, եթե Եղեսիայում պարսկական դպրոց կար, ասորական էլ չէր կարող լինել: Հապա ո՞րն էր ասորական կենտրոնը, ինչու՞ համար էր հուշակավոր եպիսկոպոս Ռաբուլասը, ի՞նչ էր անում նա այդտեղ: Ինչու համար էր Մեսրոպ գնացել այնտեղ 404 թվականին և իր աշակերտներին էլ այստեղի դպրոցի մեջ կառուցել (Կորյուն, էջ 18):

Բայց այս բոլորը անում է Peeters հակառակ պատմության, որպեսզի թարգմանիչների երթը կապի նեստորական շարժման հետ, որ շատ ավելի ուշ եղած բան է: Այս մասին արդեն խոսել ենք վերջը:

9. Երբ եղավ Ս. Գրքի վերագնությունը:

Գիտենք որ թարգմանիչների վրա պարտ էր դրված Ս. Գրքի մի ընտիր օրինակ բերել Պոլիս: Թարգմանիչները այդ պարտավորությունը կատարեցին 431 թվականի վերջում Հայաստան վերադառնալու ժամանակ: Սահակ վերցրեց այդ ընտիր օրինակը և նրա հետ համեմատելով նախորդ թարգմանությունը, կարևոր ուղղումներ կատարեց: Եթե այս համեմատության կամ վերաքննության համար տանք մի տարի, ուրեմն Ս. Գրքի երկրորդ թարգմանությունը վերադած կլինի 432 թվականին: Կորյուն ասում է, թե այդ վերաքննությունը Սահակ կատարեց հանգիստ Եղնիկի, ուրեմն և հաստատվում է, թե 431 թվականին վերադարձող թարգմանիչների մեջ էր նաև Եղնիկը:

Նորայր կարծում էր, թե թարգմանիչները Ս. Գրքի օրինակի հետ բերել էին նաև

Պրոկդի նամակը, Այս հիման վրա պետք էր ենթադրել, որ թարգմանիչները դարձան Հայաստան 435 թվականին: Մենք այդ բանը անտեղի գտնելով, թարգմանիչների դարձը դրինք 431 թվականին:

Այժմ ավելացնում ենք, որ եթե թարգմանիչների դարձը գնեինք 435 թվականին և մի տարի էլ տալինք Ս. Գրքի վերաթննության աշխատանքին, այն ժամանակ երկրորդ թարգմանությունը վերջացած պիտի լիներ 436 թվականին: Շատ ուշ է այդ, որովհետև Սահակի մահվան միայն երկու տարի է մնում. և եթե իրոք Սահակ ապրել է 90 տարի («Ազգապատում», Ա, էջ 321), 435 թվականին եղած պիտի լիներ 87 տարեկան ծերունի, ուստի և անկարող նման աշխատանք կատարելու:

Ուրեմն իրոք որ Պրոկդի նամակը չպետք է կապել թարգմանիչների վերադարձի հետ. արդեն Կորյուն (էջ 33) չի կապում նրանց հետ, այլ թարգմանիչների վերադարձը, Ս. Գրքի երկրորդ թարգմանությունը և ուրիշ գանադան րաներ պատմելուց հետո, նոր միայն (էջ 40) սկսում է խոսել Սահակի և Մեսրոպի ծանոթ թղթակցության մասին, որից անմիջապես հետո պատմում է նրանց մահը:

10. Երբ եղավ վրաց գրերի գյուտը՝

Շատ էի փափագում, որ վրաց գրերի գյուտի համար էլ կարելի լիներ ինձ գտնել մի այնպիսի հաստատուն թվական, ինչպես Դանիելյան գրերի, Մեսրոպյան գրերի, թարգմանիչների երթի ու դարձի, Ս. Գրքի վերաթննության և Սահակի ու Մեսրոպի մահվան համար: Բայց այստեղ պետք է խոստովանել, որ կովանները քիչ են և թույլ: ու տարածությունը երկար: Այնուամենայնիվ փորձենք մոտենալ ճշմարտության:

Վրաց գրերի գյուտը ավելի հետո է Մեսրոպյան գրերի գյուտից (404) և բավական առաջ թարգմանիչների երթից (427). ուրեմն գտնվում է 405—425 քսանամյակում: Պետք է աշխատենք կարճել այս միջոցը:

Գրերի գյուտից հետո Մեսրոպ գնաց Փայտակարան քարոզության (405), և եթե մեկ տարի ղնենք այս քարոզության համար, 406 թվականին վերադարձավ Վաղարշապատ: Այս թվականին արդեն Սահակ գրեթե կատարել, վերջացրել էր Ս. Գրքի առաջին թարգմանությունը: Այս ժամանակ բաց արին Վաղարշապատի վարդապետարանը (406 թ.), որից հետո Մեսրոպ գնաց Գողթն քարոզության (407 թ.), այնտեղից գնաց Սյունիք (408 թ.), ուր հնարելով վրաց գրերը, անցավ Վրաստան (409 թ.):

Բայց Մեսրոպ Վրաստան գնաց երկու անգամ, առաջինը իր երրորդ քարոզական գործունեության ժամանակ (409 թ.) և երկրոր-

դը՝ իր հինգերորդ քարոզական գործունեության ժամանակ:

Երկուսի միջև գտնվում է Հունահայոց քարոզությունը և Պոլիս ուղևորությունը: Ո՞րչափ օգտակար պիտի լիներ մեզ, եթե որևէ բյուզանդական ժամանակագրության մեջ Մեսրոպի այցելությունը նշանակված լիներ:

Այն ժամանակ Հունաց կայսրն էր Թեոդոս և պատրիարքը Ատտիկոս. դժբախտաբար սրանք շատ երկար են գահակալել. Թեոդոս նստել է 408—450 թվականներին, իսկ Ատտիկոս՝ 405—425 թվականներին: Մեսրոպ երկայացել է այս երկուսին, ուրեմն, 408—425 թվականներին պիտի լիներ այս տեսակցությունը:

Մեսրոպի երթն ու դարձը Պոլիս ցամաքի ճանապարհով, ինչպես և Հունահայաստանի քարոզական գործունեությունը երկու նահանգի մեջ (Թարձր Հայք և Զորրորդ Հայք) անշուշտ երկու տարի խլեցին Մեսրոպից: Երբ Մեսրոպ վերադարձավ Վաղարշապատ, Արտաշես Գ նոր էր գահակալել: Փարպեցու և հորենացու վկայությամբ, Արտաշես նստել է 6 տարի և որովհետև մեր Արշակունի թագավորության կործանումը դրվում է 428 թվականին, ուրեմն Արտաշես գահակալել է 422 թվականին: Ճիշտ է այս թվականը: Նկատենք, որ Արտաշեսի նախորդն է Շապուհ (Հազկերտի որդին), որ հորը հետ սպանվել է 420 թվականին: հորենացին դնում է 3 տարի անիշխան, որ ըստ այսմ պետք է հաշվել 420, 421, 422:

Այսպիսով ուրեմն Մեսրոպ Հունահայաստանից վերադարձած պիտի լինի 422 թվականին, իսկ Հունահայաստան ճանապարհ ընկած պիտի լինի 420 թվականին:

Յնտղյան էլ (էջ 41) զրազվում է համառոտիվ Մեսրոպի Պոլիս երթալու թվականի հարցով. նա էլ մեզ հետ վերադարձը դնում է 422 կամ 423-ին. բայց Հայաստանից մեկնելը դնում է 416—417-ին, որովհետև երթի համար տալիս է 4—5 տարի: Իմ կարծիքով 4—5 տարին շատ է: Նկատենք նաև, որ Յնտղյան Մեսրոպի Աղվանք երթալն էլ մինչև 422 է դնում սխալմամբ, մինչդեռ դա Պոլսից վերադառնալուց հետո է:

Մեսրոպի ղեպի Պոլիս ճամբորդելու մասին խոսում է նաև Peeters («Revue des études arméniennes», IX, 212) և այս ճամբորդությունը դնում է 422 և 426 թվականների միջև: Նա պատճառաբանում է հետևյալ ձևով:— Ատտիկոսը մեռել է ամենաուշը 426 թվականին, ուստի Մեսրոպ չի կարող այն թվականից հետո գնացած լինել Պոլիս. 421 և 422 թվականներին պատերազմ էր սկսված Վուսմի և Թեոդոս կայսեր միջև և հենց Աղծ-

Քեանան՝ մեռանէքա (էջ 18)։ Նույն օրը սպա-
նում են և Շապուհին։ Սրանից հետո գահա-
կալում է Վոսմը, որ հայոց գահն է բարձ-
րացնում Արտաշէս Գ-ին։

Քի որքան սխալ են այս տեղեկությունները և որքան սարսափելի է Փարպեցու տգիտությունը իրենից մի դա՞ռ առաջ գահակալած պարսիկ թագավորների ժամանակադրության մասին՝ անկարելի է նկարագրել։ Այդ կարելի է տեսնել, երբ համեմատենք այս բոլորը պարսից թագավորների ցանկի հետ։

Մասանայան թագավորների շարքում ունենը երկու Շապուհ, այն է Շապուհ Բ, որ զահակայից 310—379 և Շապուհ Գ, որ գահնստավ միայն չորս տարի (384—388)։ Փարպեցիին լի ատամ, թե ո՞ր Շապուհն է, որ թագավորեցրել և հետո գահընկեց է տրել հոսորով Գ-ին և նրա տեղ գրել է Վոամշապուհին, որի մահից հետո ինքն էլ մեռել է։ Եվ որովհետև այս մահից հետո հաջորդել է իր ողջին Վոամ Կրման, ուրեմն խոսքը Շապուհ Գ-ի մասին է։ Բայց Շապուհ Գ ընդամենը նստել է չորս տարի և չորս տարվա մեջ ինչպես կարելի է տեղավորել հոսորով Գ-ին (որին առնվազն տարիս են 3 տարի) և հետո Վոամշապուհի՝ «ամս քաղումս»։ Պետք է ուրեմն հետևենք, թե Շապուհ Բ և Շապուհ Գ իրար են խառնվել ու միացել, հոսորով Գ և Վոամշապուհ ըստ հորենացու գահ են բարձրացել Շապուհ Բ-ի ժամանակ։ Իսկ Վոամ Կրմանի հայրը Շապուհ Գ-ն էլ։ Այս երկուսը միևնույնն է Փարպեցու համար։ Երկուսի միջև գտնվում է Արտաշես Բ-ը, որ ամբողջապես ջնջվել է և կույզնացել Փարպեցու մոտ։ Բացի սրանից, Շապուհ Բ նստել է 69 տարի, Արտաշիս Բ 4 տարի և Շապուհ Գ 4 տարի։ Այս բոլորը դումարվելով տրվել է Շապուհին, որ ըստ այսմ զահակայել է 77 տարի։ Ի՞նչ տռլանգ թագավոր... Իրոք որ Շապուհ մերն արդգանդից սկսեց թագավորել, բայց ապրեց միայն 69 տարի։

Վոսմ Կոման նստել է 389—399 թվականներին, ուրեմն զահակալի է 10 տարի, երբ սրա թագավոր նշանակած հոսորով Գ-ը ապրեց միայն 8 ամիս, հապա մնացած 9 տարին ո՛վ էր հալոց թագավոր: Հազկերտ Ա-ը թագավորել է 399—420 թվականներին, այն է ամբողջ 21 տարի և այս 21 տարին Փարպեցու մոտ դառնում է չլև ևս յերկարեալ, ի թագաւորութեանն:

Ըթն ուրեմն մենք կարևորություն տալինք Փարպեցուն, պիտի ասենք, թե Վոսաձապուհը մեռավ 388 թվականից առաջ, որովհետև այդ թվականին է մեռնում Եսայուն Գ-ը և հաջորդում է Վասմ կրման 389 թվականին: Ի՞նչ որովհետև զորքի ղեկումն էլ հեղինակը:

է Վոսմշապուհի մահվանից առաջ, ուրեմն պիտի ընդունենք, թե գրերի գյուտը տեղի է ունեցել 380-ական թվականներին:

Գծարխտարար այսպես է վարվել Մանանդյան իր վերջին ողոսերեն աշխատության մեջ: Հավատալով անվստահելի Փարպեցու սուտ տեղեկություններին (էջ 26—27), պարսից Շապուհ Գ թագավորի ժամանակ է դնում հոսսրով Գ-ի դահակալությունը, անկումը և Վոամշապուհի գահ բարձրանալը (386 կամ 388 թվականին): Եվ որովհետև գրերի գյուտն էլ եղել է Վոամշապուհի 6-րդ տարին, ուրեմն գրերի գյուտի թվականը ընդունում է 391 կամ 393:

Փարպեցու վկայությունը հետևյալն է. «Իսկ իբրև մերժեալ ինչէր հոսսրով ի թագաւորութենէն՝ խնդրէին շաք ընդ Շապուհ: այլ թագաւոր իւրեանց. և նա հաւանեալ թագաւորեցոցանէր նոցա զՎոամշապուհ զեղրայր նորին հոսսրովու» (Փարպեցի, էջ 13): Բայց շարունակենք Փարպեցին. «Ենկաց յետ այնորիկ թագաւորն Վոամշապուհ ամս բա՛զումս և հասեալ ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ... յետ այնորիկ մեռաւ և Շապուհ արքայն Պարսից և թագաւորեաց Վոամ որդի նորա, որ էր Կրման արքայ, յորմէ խնդրեցին իւրեանց շաք թագաւոր զնոյն միւսանցամ զհոսսրով զեղրայր Վոամշապուհ, զոր յառաջնոյն բանսարկութեամբն ստուն մերժել զնա շաք՝ Շապուհ այքային Պարսից» (Փարպեցի, էջ 18):

Շապուհ Գ թագավորին է 4 տարի (384—388) և վոամ Կրման նստել է 389 թվականին, Այս 4 կամ 5 տարվա շրջանի մեջ ինչպես՝ կարեւի է տեղավորել հոստով Գ-ի երեք տարին և Վոամշապուհի բազմաթիվ տարիները, Պարզ չէ՞, որ բոլորովին սխալ է Փարպեցիին և նրա ասածների վրա հիմնրվել էլ անխոհեմություն:

Այս բոլորը տեսնելուց հետո, ավելորդ է ասել, թե ընավ կարևորություն պետք չէ տալ Փարպեցու այն տեղեկության, որ ասում է, թե Մեարոպ ճգնավորական կյանք վարեց մինչև Վասմշապուհի հինգերորդ տարին, Այս ճհինգերորդ»-ը կորույնի տված թվականն է, երբ Մեարոպ գնում է Միշա-գետը։ Ինչքան լավ է հասկացել Փարպեցին կորույնի պատմածը. և որպեսզի թյուրիմա-ցություն չլինի. այդ հինգերորդ տարին հի-շելուց անմիջապես հետո ավելացնում է. «Եւ զայս թէ կամիցի ոք գիտել հաւատաւա-ր պատմութենէ զրոց առն ցանկալի կո-րեան... կարդացեալ տեղեկասացի» (Փարպե-ցի, էջ 13)։

Շատ վատ է արել Չամչյան, «Պատմություն Հայոց», Ա, էջ 763, ուր ո՛չ միայն արժեք է տվել Փարպեցու այս ճիճեհրոգին, այլև եղծելով Փարպեցու ասածը, այս ճինգի-

բողոք համարում է ո՛չ թե Մեսրոպի դուրս գալը անապատից, ինչպես հայտնաբար ասում է Փարպեցին, այլ Մեսրոպի կրոնա-վորության սկիզբը, որից 10 տարի հետո էլ գրքերի գրուտը նմ այս պատճառով է, որ Կորյունի Ե և Զ տարիները դարձնում է ԺԵ և ԺԶ:

Փարպեցուց անհամեմատ ավելի բարձր է հորենացին, որ ըստ կարելիության ծանոթ է պարսից և հունաց թագավորների, ժամա-նակագրության, ժշտիվ գիտե հունաց կայսրների շարքը՝ Թեոդոս Մեծ, Արկադ և Թեոդոս Փոքր: Պարսից թագավորների շարքը գնում է այսպես՝

Շապուհ Բ 70 տարի.

Արտաշիս Բ 4 »

Վուամ Կրման 10 »

Հազկերտ Ա 11 »

Վուամ Բ 21 »

Հազկերտ Բ —

Այս շարքը և տրված տարիները ճիշտ են. միայն փախցրած է Շապուհ Գ՝ 4 տարի. տրված տարիներից սխալ են Հազկերտ Ա 11 տարի, որ պիտի լինի 21 տարի և Վուամ Ե (որ սխալմամբ կոչում է Վուամ Բ) 21 տարի, որ պիտի լինի 18 տարի: Սխալ է նաև պարսից և հունաց թագավորների ժամանակագրությունը. այսպես Շապուհ Բ-ի դեմ գնում է Արկադ, որ ճիշտ չէ. իսկ Վուամ Կրմանի դեմ Արկադ և Հազկերտ Ա-ի Թեոդոս Փոքր, ինչպես նաև Արկադի ժամանակ Հովհաննես Ոսկեբերան ճիշտ են:

Հայոց թագավորների շարքը գնում է հետևյալ ձևով.

Խոսրով Գ, 5 տարի = Շապուհ.

Վուամշապուհ, 21 տարի = Շապուհ, Արտաշիս, Վուամ Կրման, Հազկերտ.

Խոսրով Գ, 1 տարի = Հազկերտ.

Շապուհ, 4 տարի = Հազկերտ.

անիշխան, 3 տարի = Վուամ Բ.

Արտաշես Գ, 6 տարի = Վուամ Բ:

Այս համապատասխանությունները և տարիների հաշիվը ճիշտ են. այսպես՝ ներքևից վերև գնալով, Վուամ Բ-ի համար ունենք Արտաշես Գ-ի 6 տարին և անիշխանության 3 տարին, միասին 9 տարի, որ հանելով 428-ից (Արտաշեսի անկման թվականը), ստանում ենք 419, որ համարյա նույն է Վուամի զահակալության թվականի հետ (ճիշտը (410).— Հազկերտ Ա-ի համար ունենք Շապուհից 4 տարի, Խոսրով Գ-ից 1 տարի, որոնց վրա ավելացնելով Վուամշապուհից 6 տարի, կունենանք Հազկերտի զահակալության 11 տարիները, ինչպես գիտե հորենացին.— Վուամշապուհին մնաց (21—6) 15 տարի, որ ճիշտ Վուամ Կրմանի 10,

Արտաշիսի 4 և Շապուհի վերջին մի տարվա գումարն է:

Վերևում ցույց տվինք պարսից թագավորների ժամանակագրության սխալները, որ 11 տարի պակասում է: Զդիտենք միայն, թե հայոց թագավորների ժամանակագրությունն է ճիշտ և նրան զոհարեցված է պարսից ժամանակագրությունը, թե՛ պարսից ժամանակագրությունը սխալ լինելով, հայոցն էլ սխալ է:

Ինչ էլ որ լինի, ցանկը չի կարելի օգտագործել իրեն ճշմարիտ ուղեցույց, հակառակ դեպքում մենք բազմաթիվ սխալների միջև կընկնեք: Օրինակ՝ Խորենացու համաձայն Վուամշապուհի զահակալության տարին պիտի ընենք Շապուհի վերջընթեր տարին, որ է 378. բայց գա որքա՛ն տարբեր է Կորյունից, որից մենք գուրս բերինք 399 (Մարկվարտ գնում է 398/9, Օրմանյան (սևզգապատում, Ա, էջ 264) 389 թ.):

Հետաքրքրական է քննել Խորենացու վերջին թվական տեղեկությունները Սահակի մահվան առթիվ: Այս տեղեկությամբ Սահակ, որ վախճանվել էր 438 թվականին, աթոռակալել էր 51 տարի, սկսած Խոսրովի երրորդ տարուց: Ըստ այսմ՝

Սահակ նստել է 438—51 = 387.

Խոսրով նստել է 5 տարի = 385—390.

Վուամշապուհ 21 տարի = 390—411.

Խոսրով կրկին՝ 1 տարի = 411—412.

Շապուհ 4 տարի = 412—416.

անիշխանություն 3 տարի = 416—419.

Արտաշես Գ 6 տարի = 419—425.

Այս բոլորը ըստ Խորենացու վերջին տեղեկության, որի մեջ սխալ է Արշակունյաց անկման թվականը՝ 425 փոխանակ 423, սխալ է Շապուհի մահվան թվականը՝ 416 փոխանակ 420, սխալ է Վուամշապուհի զահակալության թվականը՝ 390 փոխանակ 399: Բայց այս վերջինը հակասում է նույնիսկ իրեն՝ Խորենացուն, որ (Գ Ժ) Վուամշապուհի զահակալությունը գրել էր Արտաշիս ձեռքով՝ Շապուհ Բ-ի վերջընթեր տարում, այն է 378:

Խորենացուց կարող ենք քաղել Սահակի հաջորդ երեք հակաթոռ կաթողիկոսների թվականը, որ է՝

Սուրմակ 1 տարի = 428—429.

Բրքիշո ասորի 3 տարի = 429—432.

Շմվել ասորի 5 տարի = 432—437.

Տարօրինակ բաներ է ասում Ասողիկ: Ըստ այս պատմիչի՝ Խոսրովի եղբայր և հաջորդ Վուամշապուհը նստել է 15 տարի. իր զահակալության 5-րդ տարին համապատասխանում է Արտաշիսի երկրորդ տարվան, երբ բերվեցին Դանիելյան գրերը: Արտաշիս նրստավ 379 թվականին, իր երկրորդ տարին է

330, հետևաբար Վոսմշապուհ նստել է 376 թվականին և 380 թվականին է Դանիելյան գիրքը: Հաջորդ տեղեկություն մեզ էլ ասում է, թե Վոսմշապուհի 6-րդ տարին համապատասխանում է Վոսմ Կրմանի առաջին տարվան, հոր հնարվեցին Մեսրոպյան գրերը: Վոսմ Կրմանի առաջին տարին է 389, ուրեմն այս թվականին է հնարվել Մեսրոպյան գիրքը: Բայց այս տարին Վոսմշապուհի 6-րդ տարին է, ուստի Վոսմշապուհը նստել է 384-ին: Որչա՞փ պարմանալի մարդ է այս Վոսմշապուհը, որ մեկ զահակալում է 376 թվականին, մեկ 384 թվականին, որի զահակալության 5-րդ տարին համապատասխանում է Արտաշրի երկրորդ տարվան (380), իսկ 6-րդ տարին համապատասխանում է Վոսմ Կրմանի առաջին տարվան (389): Ասողիկ անիշխանության շրջանը դնում է 11 տարի, փոխանակ հորեհնացու 3-ի:

Սնացյալ տեղեկությունները ճիշտ են կամ դո՞նե խանգարիչ հանգամանք չունեն:

Իհարկե Ասողիկ այնքան անմիտ չէր, որ այսպիսի հիմարություններ դուրս տար. պետք է ուրեմն կարծել, որ ձեռագիրը չափազանց խանգարված է և հետևաբար անօգտագործելի:

Շնորհալիս իր Վիպասանության մեջ Մեսրոպի ամբողջ գործունեությունը դնում է հոսսրով Գ-ի օրով, նախքան Վոսմշապուհ: Բայց «Վիպասանութիւն»-ը Շնորհալու տշակերտական գործն է:

Սամվել Անեցին պարսից Արտաշիր թագավորի զահակալությունը դնում է նԻԱ (421) թվականին, նույն թվականին և Դանիելյան գրերի գյուտը, 422-ին էլ Մեսրոպյան գրերի գյուտը, իսկ 467-ին Սահակի և Մեսրոպի մահը: Սահակի և Մեսրոպի մահը շատ լավ հայտնի է մեզ (438), ուստի 29 տարի սխալ է Անեցին: Արտաշիր Բ նստել է 379 թվականին, ուստի 42 տարի սխալ է Անեցին:

Էլ ի՞նչ վստահություն մնաց գրերի գյուտի թվականի վրա:

Երևի Անեցին քրիստոնեական թվականը ուրիշ կետից էր հաշվում:

Վարդան պատմիչն էլ գրերի գյուտը դնում է Վոսմշապուհի հինգերորդ տարին (համարյա՝ ճիշտ է), որ համապատասխանում է Արտաշրի առաջին տարվան (379). ստեղծելի սխալ: Սա էլ Ասողիկից է քաղված:

Մխիթար Այրիվանեցին գրերի գյուտը դնում է 423-ին. հետևել է Սամվել Անեցուն, միայն մի տարի ավելացնելով:

«Կայսերաց պատմութիւն»-ը գրերի գյուտը դնում է Արկադիոսի 10-րդ տարին՝ Վոսմշապուհի ժամանակ: Արկադիոս նստավ

395 թվականին, 10-րդ տարին անում է 404. զարմանալի կերպով ճիշտ:

Այս բոլորից դուրս պիտի հիշենք նաև Սեբեոսի ժամանակագրությունը հայոց, պարսից և հունաց թագավորների մասին (տե՛ս Սեբեոս, Երևան, 1939, էջ 19—20):

Պարսից թագավորներից հիշենք՝

Շապուհ Բ, 70 տարի.

Արտաշիր, 4 տարի.

Վոսմ Կրման, 11 տարի.

Հազկերտ Ա, 21 տարի.

Վոսմ Ե, 22 տարի.

Հազկերտ Բ, 19 տարի.

Հունաց կայսրներից հիշենք՝

Արկադիոս, 19 տարի.

Ոնորիոս, 22 տարի.

Թեոդոս Բ, 22 տարի.

Հայոց թագավորներից էլ հիշենք՝

Խոսրով, 3 տարի.

Վոսմշապուհ, 8 տարի.

Վերջ Արշակունյաց:

Այս ցուցակից տեսնում ենք, որ Սասանյան թագավորների ժամանակագրությունը ընդհանրապես ճիշտ է. պակասում է Շապուհ Գ՝ 4 տարի և սխալ է Վոսմ Ե-ին տրված 22 տարին (փոխանակ 18-ի): Սխալ են նաև հունաց կայսրների տարեթվերը. Արկադիոսին տրված է 19 տարի, մինչդեռ պիտի լինի 13 տարի, Ոնորիոսին տրված է 22 տարի, մինչդեռ պիտի լինի 28 տարի, իսկ Թեոդոս Բ-ին տրված է 22 տարի, մինչդեռ պիտի լինի 42 տարի: Այսպիսով հունաց կայսրների բոլոր տարեթվերը սխալ են:

Հայոց թագավորներից ոչ խոսրովն է հիշված երկրորդ անգամ, ոչ Շապուհ և ոչ Արտաշես Գ:

Շատ ավելի վատ են պարսից և հունաց ժամանակագրության հաշիվները: Այսպես, ըստ Սեբեոսի, Շապուհի 70-րդ տարին (որ է 379 թ.) հունաց գահն է բարձրացել Արկադիոս. մինչդեռ Արկադիոս նստել է 395 թվականին. ուրեմն 16 տարի սխալ կա:

Շապուհի որդին Արտաշիր զահակալել է ըստ Սեբեոսի՝ Արկադիոսի 5-րդ տարում: Արկադիոսի 5-րդ տարին է 400 թ., իսկ Արտաշիր նստել է 379 թվականին. ուրեմն 21 տարի սխալ կա:

Հազկերտ Ա և Ոնորիոս ըստ Սեբեոսի գահ են բարձրանում միևնույն տարում, մինչդեռ սրանց միջև 4 տարի տարբերություն կա:

Այսպես և բոլորը:

Ժամանակակից հայ թագավորներից Խոսրով Գ գահ է բարձրացել ըստ Սեբեոսի՝ Վոսմ Կրմանի երկրորդ տարում (=391) և Արկադիոսի 11-րդ տարում (=416), Վոսմշապուհ գահ է բարձրացել Վոսմ Կրմանի 6-րդ տարին (=395) և Արկադիոսի 14-րդ տարին (=409): Հայոց Արշակունի թագավո-

բուժությունը վերացնել է Հազկերտ Ա-ի երկրորդ տարում (=401) և Ունորիոսի երկրորդ տարում (=397)։

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր թվականներն էլ սխալ և անհարիր են և նրանց վրա հենվել բոլորովին սխալ է։

Միայն Կորյունն է, որի տված թվականներն ընդհանուր համապատասխանում են ճշտիվ Սասանյան թագավորների տախտակ, որ պարունակում է նրա կյանքի բոլոր զեպքերը, ծնունդից մինչև մահը (364?—439)։ Այս բոլոր թվականները մեր անձնական խուզարկության արդյունքն են ներկայացնում, հիմնը՝ մած միակ ժամանակակից և վավերական պատմիչ Կորյունի վրա, Կան ջնիշներ, որոնք տարբեր եզրակացություն են հասել և տարբեր թվականներ են գնում։ Դրանցից մի քանի կարևորների վրա արդեն խոսեցինք և տվինք մեր հերքումը։ Բայց կարիք չկար, որ ամեն մեկի վրա երկար ծանրանայինք։ Ուստի մնացյալների համար տալիս ենք մի ընդհանուր համեմատական տախտակ, որ մեզ ենք բերում Չամչյանի, Գաթրճյանի, Գարազաշյանի, Ալիշանի և Օրմանյանի տված թվականները։ Ֆնտգլյանի տված թվականները չհիշեցինք, որովհետև ընդհանրապես մեր հանած թվականների հետ համաձայն չուրս հկան, չնիշն տարբերությամբ։ Պատճառն այն է, որ երկուսս էլ մեզ առաջնորդ ենք բռնել միշտ Կորյունին։ Մյուսները, եթե տարբեր թվականների են հասել, մեծավ մասամբ նրանից է, որ կարևորություն են տվել Փարպեցու, Խորենացու կամ ավելի ուշ եկող պատմիչների ասածին, սոսանալով աղբյուրների աղբյուր Կորյունին, և կամ Հազկերտ

Բ-ի մահվան տարեթիվը դնելով 439 (փախանակ 438-ի)։ Օրինակի համար Չամչյան, Ա, էջ 764, Մեսրոպի մահը դնելով առաջին լրացնելով ամ թագաւորութեան երկրորդ Յազկերտի. իսկ թագաւորել այս Ծագկերտի եղև ի վախճան 439 ամիս, այնուամենայնիվ մահը համարում է 441 թ.։ Եթե Հազկերտ գահակալեց 439-ի վերջը, ուրեմն նրա առաջին տարին է 439—440 և Մեսրոպի մահն էլ պիտի լինի 440 թվականին (ինչու՞ն է գնում 441)։ Այս 441-ից հանելով 35, ստանում է գրերի գյուտի թվականը՝ 406. մինչդեռ հենց իր հաշվով պիտի վերցնեն 440 և սրանից էլ 35 տարի հաշվելով՝ գրի գյուտը պիտի դնեն 405. իսկ Հազկերտի գահակալությունը դնելով մի տարի շուտ (այն է 438), գրերի գյուտն էլ պիտի լինեն ճիշտ 404. ինչպես դրինք մենք էլ։ Սրա նման էլ էմին, ինչպես և Ֆեթթեր հայագետը Մեսրոպի մահը գնում են 441 թվականին (տե՛ս վերջինիս ճշակական աշխատությունը, Վիեննա, 1895, էջ 67)։ որովհետև կարծում է, թե Սահակը մեռավ Հազկերտ Բ-ի երկրորդ տարին, այսինքն 440-ին, Իբրև հիմք է ընդունել ուրեմն Խորենացու թերի տեղեկությունը, որ հերքված է։ Ակիսյան (ճշանդես ամսօրյա, 1935, էջ 512) Մեսրոպյան գրերի գյուտը գնում է 407—408 թվականին, Վոսմաշապուհի 6-րդ տարում. բայց այս թվականը նույնիսկ իր ասածին հակառակ է, որովհետև եթե Վոսմաշապուհ նստել է ըստ Ակիսյանի 400 թվականին (տե՛ս ճշանդես ամսօրյա, 1935, էջ 465), ուրեմն առաջին տարին լինում է 400—401, երկրորդը՝ 401—402, երրորդը՝ 402—403, չորրորդը՝ 403—404, հինգերորդը՝ 404—405 և վեցերորդը՝ 405—406. ինչու՞ն գուց 407—408։ Անհասկանալի է մնում ինչ, թե ինչու՞ Մարկվարտ (էջ 58) գրի գյուտի թվականը գնում է 402—403.

Մեսրոպի ծնունդը

Սահակ գահակալում է

Վոսմաշապուհ հաջորդում է Խոսրով Գ-ին

Մեսրոպ կրոնավոր է դառնում

Վաղարշապատի ժողովը

Դանիելյան գրեր

Մեսրոպյան գրերի գյուտը

Վոսմաշապուհի մահը

Խոսրով Գ (երկրորդ անգամ)

Շապուհ թագավոր հայոց փախչում է

Արտաշես Գ գահակալում է

Վերջ Արշակունի հարստության

Սահակի մահը


Մեսրոպի մահը

Գամչյան	Գաթրճյան	Գարազաշյան	Օրմանյան	Ալիշան	Ակիսյան
360	361	361 ?	353	354	361 ?
390	388/9	388	387	389	386
392	391/2	391	389	390	400
390		395	394	396	391
402			403	403	
403		396/7	404	404	
406	406	405	406	406	407
413	414	414	414	412	409
414		415	415		
419		420	419		
422	422		422	422	421
428	428		428	428	428
440	440	440	438	439	438
441	441	440	439	440	439

- 364? Ծնունդ Մեսրոպ Մաշտոցի.
 389? Մտնում է պետական ծառայության.
 զահակալում է Վոսմ Կրման.
 390
 391 Նեկտարիոս նստեց պատրիարք.
 392
 393
 394 Մեսրոպ թողնում է արքունիքը և կրո-
 նավոր է դառնում.
 395 Մեռավ Թեոդոս և և զահակալեց Ար-
 կադիոս.
 396
 397 Մեռավ Նեկտարիոս.
 398 Ոսկերեքան նստում է պատրիարք-
 քարոզություն Գողթնի. մեռնում է
 Վոսմ Կրման, զահակալում է Հագ-
 կերտ և.
 399 Գահակալում է Վոսմշապուհ (և տա-
 րի).
 400 Մեսրոպ գումարում է Վաղարշապատի
 ժողովրդի գյուտի համար.
 401 Դանիելյան դրերը քիվում են Հայաս-
 տան (Գ տարի Վոսմշապուհի).
 402 Փորձում են Դանիելյան գրերը.
 403 Մեսրոպ գնում է Միշագետք (ե տարի
 Վոսմշապուհի).
 404 Մեսրոպ հնարում է հայերեն տառե-
 րը (2 տարի Վոսմշապուհի). Ոսկերե-
 քան զահերեկեց. նստում է Արսակիոս
 պատրիարք.
 105 Լուսավորություն Փայտակարանի.
 մեռնում է Արսակիոս, հաջորդում է
 Ատտիկոս.
 406 Ս. Գրքի թարգմանությունը վերջացավ.
 րացվեց Վարդապետարանը.
 407 Լուսավորություն Գողթնի.
 408 Լուսավորություն Սյունիքի. հնարում
 է վրաց գրերը. մեռավ Արկադիոս և
 զահակալեց Թեոդոս Բ.
 409 Լուսավորություն վրաց.
 410
 411
 412
 413
 414 Լուսավորություն Տուրուբերանի,
 Աղձնիքի, Մոկաց, Կորճալքի,
 Վասպուրականի և Պարսկահայքի
 415
 416
 417
 418
 419

- 420 Հագկերտ և սպանվեց. Շապուհ փա-
 խավ և սպանվեց. զահակալեց Վոսմ Ե.
 Մեսրոպ գնաց Հունահայաստան և
 Պոլիս.
 421 Անիշխանություն.
 422 Գահակալում է Արտաշես Գ. Մեսրոպ
 հնարում է ազվաներեն գրերը. վերա-
 դառնում է Մեսրոպ Հունահայքից.
 423 Լուսավորություն Աղվանից, Թաղասա-
 կանի և Գարդմանի.
 424 Լուսավորություն Վրաստանի և Գու-
 զարաց.
 425 Մեռնում է Ատտիկոս պատրիարք.
 426 Սիսինիոս նստում է պատրիարք.
 427 Եղնիկ և Հովսեփ գնում են Եղեփա.
 Սիսինիոս մեռնում է.
 428 Արտաշես Գ գահընկեց է լինում. պաշ-
 տոնանկ է լինում Սահակ, նստում է
 Սուրմակ հակաթոռ Սահակի. Նեստոր
 նստում է պատրիարք.
 429 Եղնիկ, Հովսեփ, Ղևոնդ և Կորյուն
 գնում են Պոլիս. հակաթոռ է նստում
 Բրերիշտ ասորի.
 430
 431 Եփեսոսի ժողովրդ. Նեստոր կարդա-
 յույժ. նստում է Սաքսիմիանոս. Թարգ-
 մանիչները վերադառնում են Հայաս-
 տան.
 432 Ս. Գրքի երկրորդ թարգմանությունը.
 հակաթոռ է նստում Շմվել ասորի.
 433
 434 Մեռնում է Սաքսիմիանոս և նստում
 Պրոկղ պատրիարք.
 435 Թղթակցություն Սահակի, Մեսրոպի.
 Պրոկղի և Ակակի.
 436
 437 Մեռնում է Շմվել ասորի.
 438 Մեռավ Վոսմ Ե և զահակալեց Հագ-
 կերտ Բ. Մահ Ս. Սահակի.
 439 Մահ Ս. Մեսրոպ Մաշտոցի:





Հ. Ն. ՍԻՐՈՒՆԻ

ՕՐՄԱՆՑԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

8. ՀԵՏԱԴԱՐՁ ԱԿՆԱՐԿ

«Խոսք և խոսք»-ը Օրմանյանի տեսակ մը ինքնակենսագրությունն է:

Մոտ հարյուր գլուխներու մեջ, Օրմանյան իր կյանքն է պատմած իր զանազան երեւելիքներով ու հանգրվաններով, ու պարզած իր մտածումները, Երկու տասնյակ գլուխներ գրաված են իր ժանձնական կյանքի պարզանքները և ռետանեկան հիշատակները: Բայց գրքին մեծագույն մասը հատկացված է իր գործը բացատրելու, սկսելով Անտոնյան միաբանության մեջ իր դերին, հակահասունյան պայքարին և իր վերագրված մինչև վախճանը կյանքին, իր վարած մասնավոր պաշտոնները, Կարեն առաջնորդությունը, ուսուցչությունը էջմիածնի մեջ, Արմաշի դպրեվանքը, Կոստանդնուպոլսո պատրիարքությունը, անպաշտոն շրջանը, Երուսաղեմի նվիրակությունը և այլն:

Բայց ինչ որ ավելի այժմեություն կուտա այս գրքին՝ իր բուն խոհերն ու խոսքերն են, այսինքն՝ իր այն մտածումները, զորս կպարզե իր շրջապատին մասին, դեպքերուն մասին, որոնց խառնվեցավ, ու մարդոց մասին, որոնց հետ շփվեցավ այդ գեպքերու ընթացքին, և այսպիսով պարզելով նաև իր ներսի մարդը: Այս տեսակետով որքա՞ն շահեկան է կարդալ իր մտածումները Համի, և անոր քաղաքականության, հեղափոխական շարժման ու ջարդերուն, ու հայ ժողովուրդի ապարդյուն վրա՝ նվազ հետաքրքրա-

կան չէ, երբ կշռափն հարցեր ալ, որոնց հանդեպ չէր կրնար անտարբեր ըլլալ հոգեվորական մը, ինչպես կուսակրոնությունը, քահանայական հարցը, ամուսնական խնդիրը և ապահարզանը, և ի մասնավորի Հայ եկեղեցվո բարեկարգությունը: Եվ վերջապես Օրմանյանը ճաննալ ուզողին համար քացառիկ շահագրգռություն կներկայացնեն էջերը, երբ ան կբացատրե իր բմրոնումը հավատքի և սիրո, ազատության, կանխատեսության, վաղյակեան եղանակի, պարտքի և պարտականության մասին:

Այնպես որ այս գիրքը տեսակ մը ուղեցույց է Օրմանյանը դատելու, որովհետև ան լրիվ հնարավորություն կուտա մեզի կշռելու անոր առած քայլերը, և խորքը անոր խառնված դեպքերուն: Անոր լույսով կարելի է քացատրել իր վրեպներն ու բիծերն ալ և շրջապատին տիրելու իր ճիգը: Բարեբախտաբար ջանացած է անկեղծ ըլլալ «Խոսք» և խոսք»-ին մեջ և իր բուն մտածումները մեզմե չէ ծածկած: Այնտեղ, ուր փորձած է ժլատ ըլլալ իր արտահայտությանց մեջ, իր բուն մտածումը կզգացվի տողերուն տակեն:

Օրմանյան իր «Ազգապատում»-ին մեջ տված էր արդեն պատմությունը իր պատրիարքության, Բայց ճերբորդ դեմք» մըն է հոն: Պատմագիր Օրմանյանն է, որ կխոսեր պատրիարք Օրմանյանին վրա: Զիշտ է, որ այնտեղ ալ լայն տեղ տված էր իրեն՝ իր շրջանին մասին խոսելու առթիվ, և հաճախ պատմություն գրելու տեղ իր պատրիարքության պաշտպանողականն էր ըրած ավելի: Բայց վերջապես քիչ մը կաշկանդված էր

* Ետևումակված «էջմիածնի» ամսագրի 1981 թվականի Մ Մ Ե-ից, Զ-ից, Է-ից, Ը-ից, Ս-ից, ԺԱ-ից, ԺԲ-ից և 1982 թվականի Մ Մ Ա-ից, Բ-ից և Գ-ից:

Հոն, թեոհճ և խոսքս-ին մեջ արդեն միմիայն ինքն էլ Հոն մեզ կպատմեն իր ներքին մարդը, և իր շրջապատը կդիտեն այլևս իր աշխարհում միայն և իր զգացումներովը, Հոն ավելի որոշ են հետևաբար իր նախասիրություններն ու իր ատելությունները, և ավելի որոշ հոգեղեն մարդը:

Ցոթանասունըտ տարեկան է արդեն Օրմանյան, երբ կսկսի իր թեոհճ և խոսքս-ը գրել, այսինքն ծերունի մըն է արդեն Հոն, որ կզգա, թե թավական ապրեր է, թե մոտեցեր է կյանքի վախճանին, թե ստիպված է ալ մահվան մասին մտածել:

Եվ արդարև, առաջին իսկ տողեն կզգաս մահվան պատրաստվող մարդու մը արտորանքը՝ լսեռած ըսելու համար իր վերջին ըսելիքը: Եկողապատմամ-ին մեջ ան երկար պատմեր էր իր կյանքն ու գործը մեզի. բայց կվախենա, որ զեռ բան մը պակաս է ըսած, թե այդ բանը եթե չըսե, վաղվան մարդիկ սխալ պիտի ճանչնան ու դատեն զինքը, թե վերջապես, լսեռած պետք է արատ մը լծողիլ հետին: Ինքն է, որ արդեն կրացատրեն իր մտահոգությունը այս գիրքը գրելու ատեն. Եփրիի առնել կյանքիս և ընթացքիս և դործերուս մասին բռնած ուղղությունս և հետևած սկզբունքներս, ըլլա իր խոստովանություն, ըլլա իր կենսագրություն, հուսալով որ աշքս լույսին փակելն ետքը, երբ այս տողերս ի լույս ելլան, կարենան իմ վրա ուղիղ դատաստան մը կազմելու նպաստել:

Երբ ինքնոր ալ օգտակար ըլլալը: Եվ արդի գիրքը կաշխատի նպատակը իր վրա օգտակար դատաստան մը կազմելու: Խոստովանություններ գրեթե չկան Հոն, որովհետև ան միշտ զգուշացած է իր վրեպները բացատրել, ու ծանրացած է ուրիշներու վրեպին վրա, բայց կարելի է իրեններն ալ քաղել իր իսկ արտահայտությունաց մեջն:

Իզուր է կարգ-կանոն փնտռել թեոհճ և խոսքս-ին մեջ: Ոչ իսկ լափի զգացում կրնաս պահանջել մարդե մը, որուն միակ մտահոգությունը պատմությունն կորզել է նպատատավոր վճիռը: Օրագրությունն մըն է ավելի, որ օրը օրին ան թուղթին վրա կշարի փաստերը, որ միտքը կուզան: Ան չի վախնար և

կրկնություն, թավ է, որ ընթերցողները լավ մը համոզվին, երբ օր մը իր այս գիրքը կարդան:

Ինքն է, որ արդեն կխոստովանի. Միտք լուսնիմ ժամանակի և կամ նյութի դասավորություն պահել, որուն համար պետք էր ծրագիր կազմել, այլ ինչ որ միտքիս ներկայանա, զայն պիտի գրեմ անշատ և ընդհատ հատվածներով:

Թեոհճ և խոսքս-ը գրած ատեն, փաստանյութեր և աղբյուրներ լուսնի ձեռքին տակ, ու պարզապես նոթերն է, որ կառաջնորդվի ու զարմանալու չէ հետևաբար, եթե հիշողությունը իրեն կղավաճանե երեման:

Ինքն է, որ կրսե. Նախ և առաջ հայտարարեմ, որ ոչ հետևած աղբյուր ունիմ և ոչ ուսումնասիրած գիրք: Երուսաղեմն մեկնած եմ առանց գիրքի և առանց հիշատակագրի. հազիվ թե առնեմ համառոտ օրագրություն մը առած եմ մեկտեղ, որով կրցա ճշտել ինչ-ինչ թվականներ²²²,

Եվ լսողանք նաև, որ այդ գիրքը կգրե անկյուն մը քաշված ու կտրված աշխարհին, միշտ զեռ դուրսը զեռ կզոռան ուսմանը ու փողոցները լեցուն են հայ գիականներով: Ու մյուս կողմն զծվար կրուն արդեն գրիչը: Մարմնույս մեքենան իր հինցած ըլլալը կմատեն: Մազերս թափած, կես ճաղատ, աչքերս վատացած, ակնոցով ալ համարձակ կարդալ չեմ կրնար, ականջներս ծանրացած, ակոսներս արվեստական, պորտս գոտիի կարոտ, ծունկերս հոգացավով, ոտքիս երակները ուռած՝ առածգական գուլպայի պարտավորված, վերջապես ամեն մասեր տկարացած:

Թեոհճ և խոսքս-ը ծերունիի մը վերջին զրույցներն են, երբ արդեն կյանքը խույս տալ սկսած է իրմ և երբ ալ հույսը լուսնի, թե պիտի կարենա վախճանի մը հասցնել իր գիրքը, բայց միշտ մղձավանջ մը ունենալով մտքին մեջ. — Թե լսեռած պետք է սրբվիլ ամեն բիծերն ու անարատ ներկայանալ անողոք դատավորին առջև, որ պատմություն կկոչվի:

Իզուր էր այս մտատանջությունը: Մենք առանց թեոհճ և խոսքս-ին ալ Օրմանյանը անպարտ պիտի հանձնեինք պատմության:

9. ՈՐՊԵՍՁԻ ԴԻՄԱՆԱ ՀԱՅ ԵՎԵՂԵՑԻՆ

Օրմանյանի մտքի վաստակին վրա այս րեզնանուր ակնարկը նետած ատեն, չէինք կրնար բազմաթիվ այն տեսություններուն մեջ, դորս ան նվիրած է հայոց պատմության այլազան երևույթներուն և հայ կյանքը հուղող զանազան հարցերու, լառանձ-

նացնել գոնե մեկ քանին, իրեն հիմնական կետեր իր մտածումին մեջ:

Շալոց Եվեղեցիս հատորին մասին խոսելու առթիվ, անդրադարձանք իր մտածումներուն Հայ Եվեղեցի ինքն և վար-

²²² Թեոհճ և խոսքս, էջ 486:

դապետությունը շուրջ, ինչպես և անոր տեսությանը Հայ Եկեղեցվո ապագային նկատմամբ իր խոհերուն ալ:

Հոգեւորականի մը համար, որ այնքան մոտեն ուսումնասիրած է Հայ Եկեղեցին իր վարդապետությանը ու ծանրուն մեջ, և այնքան խոր է պրպտած ալ ինչ Եկեղեցվո պատմությունը իր բոլոր շրջաններով, ոչինչ ավելի բնական է քան ճանչցած ըլլալ քաղաքացուականները, որոնց կկարողի Հայ Եկեղեցին մեր օրերուն:

Ու հիմա, որ սեղանի վրա է կրկին այդ հարցը, կարծիք գիտնալ, թե ի՞նչ եզրակացությունը հանգած էր ինքը Օրմանյան:

Պետք է ըսել սկիզբն, որ Օրմանյան անոնցմէ չէր, որոնք կրողային հիմնական բարեփոխությանը ենթարկել Հայ Եկեղեցին, նոր օրերուն պատշաճեցնելու համար զայն բացարձակապէս Արդարեւ, իր օրերուն ալ, ինչպես և հիմա, շատեր կան հայ հոգեւորականության մեջ, որոնք կուզեն հիմնական բարեկարգել Հայ Եկեղեցին, ինչպես իրենք կըսեն, կամ զայն արգիականացնել, ինչպես որ կըրողան իրականին մեջ:

Օրմանյան Հայ Եկեղեցվո համար բարեկարգության ծրագիր մը հղացած է ինքն իսկ, Մակար կաթողիկոսի օրով, երբ էջմիածին կզտվեր իբրեւ դասախոս:

Ճերբոր էջմիածին ուսուցիչ էի, — կըրն Օրմանյան, — երջանկահիշատակ Մակար կաթողիկոսի խոսած եմ, քանի որուն և կարող և խոհական եկեղեցականներն հանձնաժողով մը կազմել, որ խնամով ուսումնասիրեն նախնական Հայ Եկեղեցին յուր ամեն տարրերով, դոն ու զատն հինն ու նորը, սեփականն ու եկամուտը, և յուր աշխատությանը արդյունքը կանոններու և հրահանգներու կերպով բանաձևեն, և յուր աշխատությունը անպաշտոն տպագրությանը հղվի եպիսկոպոսներու, կարող վարդապետներու, ուսլալ քահանաներու և հմուտ աշխարհականներու, և անոնց տեսություններն ու կարծիքները համաքվելով հանձնաժողովին դառնան, որ երկրորդ խմբագրութեամբ ընդունելի կարծիքները յուրացնեն, և այդ երկրորդ խմբագրութեանը իբրեւ պատրաստ նյութ ազգային եկեղեցական մեծ ժողովի մը հանվի, և հաստատություններով ու փոփոխություններով վավերանա, և Հայ Եկեղեցվո դավանության ու վարչության, կանոնականության ու արարողության օրինագիրք ըլլա, և ըստ այնմ սկսի կատարվիլ ամենայն ինչ, որ Հայ Եկեղեցվո կյանքը կկազմեն և անոր զուտ ինքնությունը կպահպանու²²¹:

Օրմանյան կըսեն, թե կաթողիկոսը իր առաջարկը ընդունելի դատած է և իրեն պիտի հանձնեն նախապատրաստություններով զբաղիլ ամառնային արձակուրդին տունն, բայց իր մեկնելու ստիպվիլը էջմիածինն ծանոթ պայմաններուն տակ վիճեցուցած է գործը, և հետագային ալ չէ արձարծված. որովհետև կաթողիկոսը ինքն ալ շատ ապրած չէ անկե ետք: Ու կավելցեն. «Սակայն ինչ որ հապաղած է՝ կորած չէ, կըսեն լատինապետը. (Quod differtur non auportur), և ոչինչ կարգելու որ ինչ որ այն տունն չկորցավ գործագրվիլ, առաջիկային կարենա իրականանալ»:

Օրմանյանի կարծիքով, Հայ Եկեղեցվո բարեկարգման հարցը սկսած է արժարծվիլ իրականին մեջ 1905-ի ուստական հեղափոխութենէն և 1908-ի օսմանյան ազատութենէն հետո ստեղծված մթնոլորտին մեջ, թերև որ ամեն կողմ վերանորոգություն և բարեկարգություն սկսավ խոսվիլ և երբ մեր Ազգին մեջ ալ եկեղեցական բարեկարգության խնդիրը ընդարձակվեցավ, և ամեն կողմն խոսակցություններ և խմբագրություններ, ծրագիրներ և առաջարկներ սկսան երևան գալ, յուրաքանչյուր ոք իր տեսությանը կամ հաճոյից համեմատ եկեղեցական նոր կացություն մը ստեղծել փափագելով:

Այս խառն ու բուռն արտահայտությանը մեջ ես սիրեցի համառ լուծություն պահել, գիտնալով որ բոլոր պրոպոներ և խոսողներ զինովս առածն, և զգալի հետևանք մը պիտի չկարենան ունենալ, քանի որ իրենց համար հաստատուն հիմ մը չունենին, և բոլոր փաստերնին ժամանակին պահանջին, ժամանակակից հոգւոյն, և ժամանակներու փոփոխության վրա հիմնված էր, որոնք առաձգական իմաստ ունին և հաստատուն գետին չեն ընձեռներ:

Բայց եթե այն տունն լոնցի ու չխոսեցա, հարկավ ես ալ իմ տեսություններս ունեի, մանավանդ եկեղեցական նյութերուն մասին շատերն ավելի ծանոթություն ունենալովս: Արդ, ինչ որ ցարդ գրավորապէս չեմ հրատարակած, գոնե այս Խոհք և խոսքերու մեջ, հիշատակել կուզեմ, բոլորովին ծածկած լըլլալու համար²²¹:

Օրմանյան հետո կպարզեն իր տեսակետը Հայ Եկեղեցվո բարեկարգության հարցին մասին, ըսելով առաջին հերթին, թե այդ բարեկարգությունը ուրիշ բան պետք չէ ըլլա, բայց եթե մոտենալ առաքելական դարերուն, որդեգրելով եկեղեցիներու սկզբնական պարզությունը և հասնելով մինչև անոնց վերջնական դիմագծութեան շրջանին,

²²¹ «Խոհք» և խոսք, էջ 300—301.

²²² Խոհք, էջ 305.

խել նետել հետամուտ տարրերը, որոնք սպորդած են Հայ եկեղեցվո մեջ 431 թվականին, այսինքն Եփեսոսի ժողովին հետո, ոչ թե սակայն ուստումով մը առաջին դարուն վերադառնալ փորձելով, ինչպես ըրին բողոքականները, առանց իրենց հիմ ունենալու ավանդության շարունակությունը:

Հետամուտ տարր ըսելով Օրմանյան կհասկնա այն գիշողությունները, զորս հայերն ըրին հույներուն իրրև փոքրագույն շարիք, այսինքն Օրթոդոքս եկեղեցին տարրեր մտցնելով Հայ եկեղեցվո մեջ, հեռացնելու համար ամբողջական ձուլման վտանգը, և այն լատինական եկամուտները, որոնք մտան Հայ եկեղեցվո մեջ ունիտոններու միջոցով, երբ Հայ եկեղեցվո վարդապետները շլատին դպրոցամոլ դրությամբ (scolasticisme) փայլին շլանալով, ժանջատման շորս կետերին, այսինքն պապությունն և, քաղաքացի, Որդւ Քրիստոսն ու երկու լուսններն դուրս եկած լատին վարդապետությունները առհասարակ յուրացուցին²²⁵, «կրօնական սկզբանց մեջ պահպանողական մըն եմ,— կըսեն Օրմանյան,— բայց պահպանողությամբ աղավաղմանց և հավելմանց պաշտպանը չեմ. հինն է իմ նպատակս, նորելիքները և եկամուտները և օտարամուտները պաշտպանել պահպանողականությունն չէ: Դարուս հոգին թեթևություն կուզի. պարտավորել կետեր քիչ, միտք հոգնեցնողները սակավ, ձեռք կաշկանդողը պակաս, բեռ ավելցնողը նվազ, և այսպես է Հայոց եկեղեցին: Բայց պիտի կարենա՞նք այդ վիճակը իրականացնել, օտարամուտը թոթափել, նորելիքները կարճել, եկամուտները վտարել»²²⁶:

«Ես աղատարար կրնդունիմ բառնալ և հեռացնել մեր եկեղեցին ամեն հունական և լատինական հետին ժամանակներու հավելվածները ու աղավաղումները, և համամիտ եմ մեր դավանականը ամփոփել Եփեսոսի ժողովով, մեր կանոնականը կազմել Թարգմանչաց դարով, մեր ծիսականը առ առավելն Օմենցիի ժամանակով, մինչև իսկ կհավանիմ Շնորհալիի հավելվածները կամավորությամբ վերածել և պարտավորել լծանշնալ: Ահա՛ իմ ըմբռնած եկեղեցական քարեկարգությունս, հիմնական սկզբունքներու շնորհալի, հայկական դրությամբ հավատարիմ մնալով, և իրապես ու տիրապես բեռները թեթևացնելու նպատակին ծառայելով:

Շատ առթիվներ ունեցած եմ իբրև ուսուցիչ և ուսումնասիրող մասնավոր կետեր գննելու և քննելու, և միշտ թեթև և շատ

ամփոփ գտած եմ Հայ եկեղեցվո նախնականը, նվազ բեռնավորյալ յուր դավանականը, աղատական յուր դյուրությունը, և դյուրատար յուր կանոնները»²²⁷:

Օրմանյան խորհուրդ կուտա բավականալ եկամուտները վերցնելով և ոչ թե ժամանակին մտայնությամբ կետ առ կետ համաձայնեցնել Հայ եկեղեցին, բայց մանավանդ գործադրության մեջ խոհեմությամբ և խոհականությամբ շարժել, «սլասրեզի դիտեմ թե,— կըսեն,— դյուրին չէ նախապաշարմանց դեմ մարտիլ, օգտակար չէ խիղճեր վրդովել, վնասակար է գահավիժ որոշմանց հետևիլ, փտանգավոր է առանց նախապատրաստությանց ձեռնարկներ ընել»:

Ուստի կթելադրեն, որ ժինչպես անզգալարար մուտք գտած են եկամուտները և տեղ գրաված են աղավաղումները, պետք է, որ նույնպես ալ անզգալարար վերցվին և աստիճանաբար անհետանան:

Հիմնական ալ սկզբունքի կողքին, Օրմանյան պարզած է հաճախ իր տեսակետները հրատապ հարցերու մասին ալ, որոնք սեղանի վրա կուգան ստեպ և որոնց վերջնական լուծումը նույնպես կապված է եկեղեցվո բարեկարգության և ուղի առթիվ մշակվելիք նոր կանոններու հետ: Անոնցմէ ոմանց լուծումը կյանքը հարկադրած է արդեն ստիպողական պարագաներու առթիվ, բայց որենք դառնալու համար անոնք նվիրագործման կարիք ունին միշտ:

Ընդհանուր մտայնություն մը կա նախ կուսակրոն հոգևորականությունը վերցնել Հայ եկեղեցին: Օրմանյան կյտտազգով, ընդհակառակը, կուսակրոն հոգևորականությունը և դեմ է զայն ջնջելու. «Նախ և առաջ ընություն հակառակ չեմ կարծել» ընություն բերումներն կանոնավորել և զսպել. ընդհակառակն անրնական կկարծեմ մարմնո հաճույքներու և հեշտանքներու և բերմունքներու անպայման հետևիլ, և կերպով մը մարմինին դերի ըլլալ, հոգվո գերազանցությունը անարգել, միտքի կանոններուն չհպատակելու ... Այս սկզբունքով անտեղի և անբնական չի կրնար ըսվիլ, որ ոմանք ինքզինքնին մարմնական հեշտանքների դրկել ուզեն, և կուսակրոն կենցաղի հետեվին ... Ամուրի եկեղեցականությունը, ինչ ալ ըլլա անոր ծագումն ու զարգացումը, այլևս օրինական պահանջի կարգ անցած է և կրոնական ընկերականության մեջ այդ ընթացքին հետևողներու պետք կա»²²⁸:

Իր կարծիքով անչափահաս տարիքեն կուսակրոն ուխտի նվիրված հոգևորականները

²²⁵ «Երեզ և խոսք», էջ 309:

²²⁶ Անդ, էջ 460—461:

²²⁷ Անդ, էջ 309:

²²⁸ Անդ, էջ 48—49:

նաև մեր շին քննորոշեր նախ, և հետո անոր համար, որ Լուսավորչին չի սկսիր հայ քրիստոնեությունը:

Իսկ եթե անպատճառ անհրաժեշտ նկատվի, որ Հայաստանյայց Եկեղեցին ալ երկրորդական կամ վարդապետական անուն մը ունենա, մեր տեսությունը հարմարագույն է Ուղղափառ կոյումբը նախընտրել, հայերեն ընդհանրապես, յուր իմաստով՝ արևելյան եկեղեցիներու կոյումբին համապատասխանե-

լու առաջնությունն ունեցած կրլա, այսինքն է հույներուն Ուրոդոքս և ուսաներուն Պրավոսլավ կոյումբներուն²³⁴:

Տարբեր խնդիր, որ Օրմանյանի առաջարկած ձևն ալ իր անպատեհությունն ունի, օտար լեզվով գրվելու ատեն, որովհետև պետք պիտի ըլլար տարբեր ձևերով տառադարձել «Ուղղափառ» բառը զանազան լեզուներով: Ի՞նչ ալեկի պարճախոս, քան «Հայ Եկեղեցի» տիտղոսը:

10. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԵՎ ԻՐ ԴԱՍԸ

Այս էջերու ընթացքին հաճախ անդրադարձանք Օրմանյանի տեսություններուն և տեսակետներուն հայ կյանքի ամենն հրամայ հարցերին մեկուն՝ Հայկական դատի մասին, հարց, որ իր ամենն ուշադրով փութին մեջ մտած էր այն պահուն, երբ Օրմանյան հայ կյանքի բնմը կուգար, և որ տազնապալի բազմաթիվ փութերի անցավ Օրմանյանի հետադա քառասնամյա գործունեության զանազան հանգրվաններու ընթացքին: Այնպես որ լրիվ գիտենք, թե ի՞նչ կ'մտածեր Օրմանյան Հայկական հարցի և հայ ազատագրության պայքարին ծնունդ տվող պայմաններուն, անոնց անցուցած ճղնաժամերուն և հավանական ելքի մասին:

Հիմա, որ մտքի վաստակը վերջին ակնարկի մը բովեն կանցնենք, շինք կրնար վերջին քաղ մը լրենել նաև իր մտածումներին այդ դատին մասին, մանավանդ ինչ կ'վերաբերի իր տեսությանց քաղաքակիրթ կոչվող աշխարհին բռնած դիրքին շուրջ:

«Աղղապատում»-ին մեջ լայն տեղ տված հանգրվաններուն, ուրկն անցած Հայ դատն ու հայ ազատագրական շարժումը, «Խոհ» և խոսք»-ին մեջ կ'ստացնեն իր դատաստանները: Շատ տեղին դիտել կուտար «Խոհ» և խոսք»-ի հրատարակիչը զայն հետմահու լույս ընծայելու առթիվ 1929-ին. «Պետք է քանի, որ «Խոհ» և խոսք»-ին մեջ մասնավոր ուշադրության արժանի էջերը անոնք են, ուր հեղինակը իր կարծիքները կ'հայտնեն հայ ժողովուրդի քաղաքական ճակատագրի մասին և դիտել կուտա նվրդական պետություններու մեզի աննպաստ դիվանագիտությունը»:

Հայը տառապած էր Քուրդիո բոլոր վարչակարգերուն տակ: Հայ ժողովուրդի պատմությանը զբաղող մը չէր կրնար չգիտնալ այդ և չէր կրնար հետևաբար Քուրդիո կապել Հայկական դատը, մանավանդ տեսնել հետո արհավիրքը, զոր հայ ժողովուրդին բերավ Օսմանյան Սահմանադրությունը, և պատմության մեջ իր նմանը քիչ անգամ արձանագրված այն մեծ եղբունը, զոր «երիտասարդ թուրք»-երը մեզ բերին:

«Երիտասարդ թուրք»-երու կազմակերպած սպանդը 1915-ին և անոր հաջորդող տարիներուն հարևանցի միայն քննած է Օրմանյան: Եվ այդ շատ քնական էր: Երբ այդ մասին ան կ'գրեր «Խոհ» և խոսք»-ին մեջ, պատերազմը դեռ ավարտած չէր. ոչ միայն զգույշ էր ինքը իր մտածումները թուղթին հանձնելու ատեն, այլև սպանդը դեռ լրիվ ծանոթ չէր իր բովանդակ արհավիրքին մեջ: Հետագային, երբ հայ ժողովուրդին այդ նոր մարտիրոսագրությունը լրիվ պարզ եղավ մեզի, Օրմանյան ոչ ևս էր:

Փոխարեն Օրմանյան լրիվ գիտեր, և այդ դեռ շատ կանուխեն, թե ի՞նչ եղած է նվրդական պետությանց վերաբերումը դեպի փոքր ժողովուրդի մը մեծ գատը: Տասնյակ տարիներ ապրած նվրդականի ծոցին մեջ, ան մոտեն գիտեր, թե ի՞նչ են նվրդապա և իր քաղաքականությունը:

Օրմանյան մոտեն շոշափած էր զանոնք, ու գիտեր որ նվրդական չի շարժի տեղեն, և թե անմիջական շահ մը չունենա:

Ակնարկելով մեծ պետությանց դիրքին 1895—1896-ի դեպքերուն ատեն, Օրմանյան կրսն. «Միջազգային միջամտությունը, որ 1878-ի Բեռլինյան հողվածով գոյություն առած էր, խնդիրը կորորեր առանց վերջացնելու, և իրոք այնպես ալ ըլլալ հնար չէր, քանի որ քաղաքականապես անհնար էր վեց պետությանց տեսություններուն և շահերուն համեմատաբար նույն կետին վրա համաձայնիլ, մանավանդ որ հայը ոչ ցեղակից և ոչ կրոնակից էր խնդիրը ձեռք առնողներուն հետ, այլ ինքն պարզ լծակ մըն էր յուրաքանչյուրին ձեռք յուր շահը շարժելու, որով և նորա օգուտը չէր կրնար ոչ մեկուն սրտագին և անկեղծ և իսկական նպատակն ըլլալ»²³⁵:

Այն անտարբերության մասին, զոր օտար պետությունները հանձին իրենց դեսպանատուներուն ցույց տվին 1896 թվականի օգոստոս 14-ի չարդին օրը, Օրմանյան կ'գրեր.

²³⁴ «Հայոց եկեղեցի», էջ 188.

²³⁵ «Ազգապատում», Գ, էջ 5045.

«Բերայի մեջ ալ դեռապանատուններու գոտներուն առջև կոտորածներ եղան, և դրամատունը ազատելու համար վայրկեանապես իրարու անցնող եմքրական դեռապանությունը և կառավարության վրա զիջանելու բռնություն գործածող ներկայացուցիչներ, կրցան անտարբերություն մը ականատես ըլլալ իրենց աչքին առջև կատարված անլուր անգթությունը և եղբրական տեսարանները դիտեցին, աղբակիր կառքերով դիակներու տեղափոխվիր նկատեցին, որոնց մեջ կիսակենդաններ ալ գտնվեցան»²³⁶։

Օրմանյանի համար ցերեք էր հետեաքար որն էր քարիք հուսալ անձնապաշտ Եվրոպային և հույս դնել փաղաքուշ ճառերուն վրա, որոնք երբեմն կարտասանվեին խորհրդարաններու բնմեն, պարզապես Համիդը շփոթեցնելու համար իր կարծիքով սխալ էր որբման Եվրոպայի հավաստիքներուն կրոթնած, դազանը զգտնել փորձել։

Խոսելով Իզմիրլյանի վարած բուն քաղաքականության մասին սուլթան Համիդը, զիս, Օրմանյան կրսե. «Եւրո համագումր էր, թե աղետից սկզբնապատճառը նույնիքն սուլթանն էր, որով անկե դարձան սպասելը անտրամաբանական կատներ, և բոլոր հույսը եվրոպական միջամտության վրա հաստատած ըլլալով, անոնց հետ հայտնի և համարձակ հարաբերություն կմշակեր, միշտ միջնորդ ունենալով կուսակցական գործիչները և անոնց համակիր յուր թարգմանները, Իզմիրլյանի դժբախտությունն եղավ յուր անկեկալությանց և իսկապես իրականությանց մեջ տիրող անշրպեւոր, Եվրոպական պետությունները, ըլլան Բեռլինի դաշնագիրը ստորագրող վեցերը, ըլլա գործադրությունն ստանձնող երեքները, երեք ամիս շարունակ տիրող կոտորածը արգիլելու իսկ միջամտություն չէին բրած, կոտորածին հետեանքներուն մտադրություն չէին դարձուցած. բայց Իզմիրլյան յուր տեսությանց վրա ամուր ապարդյուն խոստումներով կօրոքվեր և յուր բուն ու հախուռն րնթացքն չէր հեռանար, կուսակցական գործիչներն քաղաքներու վրանները կհարգեր, քաղաքական փորձառություն մը զորացած խոհականներու թելադրությունները կանադգեր»²³⁷։

Օրմանյան, հետեաքար, ապարդյուն կգտներ որն է փորձ անգամ մը ևս ապավինելու Եվրոպային, ուսեղամ մը ևս ճաշակել լեզին, նույն այդ տեսակետին վրա է Օրմանյան պատերազմի օրերին ալ, երբ հայ ժողովուրդը ցմրուր խմած է դառնություն քաժակը, և երբ դուրսը Եվրոպան կշարունակե փաղաքուշ խոսքեր ընել հայուն հասցեին ու

նոր հույսերով օրորել զայն. «Կմնա որոնել և որոշել, թե ո՞վ պիտի ըլլա հայուն բարօրություն պատրաստողն ու գործադրողն, Հասարակաց ըմբռնումը յուր հավատքը հաստատած է եվրոպական տերությունց վրա, որոնք Բեռլինի դաշնագիրը ստորագրեցին, և զիսկապես երեքին վրա, Անգլիա և Գաղղիա և Ռուսիա, որոնք անգամ մըն ալ գործադրել տալու համար մեջտեղ ելան, և վեց կուսակալությանց դրութունն ու բարեկարգությունը կազմակերպեցին, Արդ Բեռլինի դաշնագիրն քառասուն տարիներ անցած են, և դաշնագիրին 61-րդ հոդվածը մեռյալ տառ մնացած է բովանդակ այս երկարամյա միջոցին մեջ, մինչդեռ ինչ որ ուրիշ հոդվածներով որոշված է, անմիջապես գործադրվեցան, Միթե՞» այսպիսի լի բավեր հետեցնելու, թե ընելու միտք չունին»²³⁸։

Եվ իր եզրակացությունը կըլլա. «... Մինչև որ հայտնապես շեղվի կամ շտեպնի, որ եվրոպական տերությունները Հայաստան մը կազմելու կամ Հայաստան մը քարվոքելու մեջ իրենց օգուտ մը չունին, ո՞չ խոսքերնուն հնար է հավատալ, ոչ խոստումներուն վրաս հիշ»։

Հակառակ սակայն իր բոլոր վերապահումներուն այն հախուռն պահերուն մասին, որոնցմե անցած է հայ ազատագրական շարժումը, և հակառակ նաև իր բացասական վերաբերմունքին դեպի այդ շարժման ղեկավարները, մանավանդ դեպի անոնք, որ իր պատրիարքության տարիներուն կզուգադիպին, Օրմանյան այնուամենայնիվ ունի անկեղծ վայրկյաններ, երբ բնական ու արդար կգտնե հայ ժողովուրդի պողովուրդը. Ու յիծածկեր, որ ինք ևս ունեցած է շրջան մը, երբ խանդավառված է հայ ժողովուրդի հողիին մեջ բռնկիլ սկսող կայծերով։

Դեպքերուն հետ էր, որ փոխվեցան իր տրամադրություններն ալ, Ամեն մեկ հարվածի հետ, զոր հայ ժողովուրդը կկրեր, իր ներսնն ալ բան մը փյառ էր, Խանդավառությունը ներսը մարեր էր տակավ, հետզհետե սկսեցին դարձեր։

Իսկ այն վայրկյանին, որ իր վերջին մտածումները գրի կառնե, արդեն արևմտահայ ժողովուրդին կնքը լկար, ու մյուս կնքը վերածված էր վաշկատուն ու խելակոթույս հուտի մը։ Թատաթ, մեծագույն զահիճը, զոր երբեկեց ունեցած ըլլա հայ ժողովուրդը, 1915 օգոստոսին շնական հեղնության մը ալեւտած էր դեսափաններուն, թե Հայկական հարցը այլևս չկա, Երբեմն բան մը կսկսի դարձալ խլորտի Օրմանյանի մեջ, և հուզումով կհիշե հայ ժողովուրդի ընդվզումի պահերը։

²³⁶ «Ազգապատմա», 9, էջ 5065.

²³⁷ Անդ, էջ 5059.

²³⁸ «Խոհ» և խոսք, էջ 424.

Ուշագրավ է, որ հայ ազատագրական շարժման վրա Օրմանյան կնայի իրեն երեւելովի մը, որ, հակառակ իր վերադարձներուն, նոր կյանք ներշնչած է հայ ժողովուրդին, խոսելով, օրինակ, նրիմյանի կատարած գերին մասին հայ կյանքի մէջ, Օրմանյան կը սե, լին ան աստեղծիւն եղած է ազգասիրական և հայրենասիրական զգացումներուն, որով ազգը տոգորվեցաւ հիսուն-վաթսուն տարիներէ ի վեր, և որ պատահական զեղծումներու բացառութեամբ. նոր կյանք ներշնչեց, նոր գործունեութիւն ազգեց, և նոր առաջնութիւններու բերաւ հայ տարրին վրա»²³⁹։

Օրմանյան չէր կրնար գուշակիլ սակայն, որ հայ ժողովուրդի ահաւոր այդ ճգնաժամին պահուն, երբ թուրք վարիչները այլևս թաղված կ'ընդունէին Հայկական հարցը և Եվրոպան կ'զոհէին ճառարով սփոյնի մահաճարձ այս ժողովուրդը, նոր աշխարհ մը կ'ստեղծէին հետին, և երկունքի մէջ է դար մը, երբ զանազան լուծերու տակ տվալտող ժողովուրդները ևս պիտի դառնային տակաւ իրենց ճակատագրին, արևուն տակ ազատ շնչելու անկուն մը ունենալով։

Օրմանյան այնքան միայն կրնար գուշակել, թէ ամեն ինչ դեռ կ'որսված չէ, որովհետեւ կարելի չէ դադար խոթել ժողովուրդ մը, որ ապրիլ կուգի։

Իր մտածումները փակելու ատեն Օրմանյան ազոտ հույս մը միշտ ունի։

II. ՕՐՄԱՆՅԱՆ ԵՐԱ ՈՒՐԻՇԸ ԿԴԱՏՆ

Դազազը դնելու ասթիվ կաթողիկոսներն ու պատրիարքները, որոնք կտողանցեն «Աղօթապատում»-ի երեք հատորներուն մէջ և հաճախ նաև անոնց օրով սպրած կարկառուն դժբերք, հոգևորական թե աշխարհական, ամեն մեկուն բնութագրի կուտա Օրմանյան, յուրաքանչյուրին մէջ բնորոշելով մարդը ինչպես որ էր և գործունեութիւնը, որ ան ունեցաւ։ Այդ ուրվագծերը ավելի շահեկան կ'դառնան, քանի մեր օրերուն կ'մոտենան իր պատմած դեպքերն ու դժբերքը, և մտնալանդ երբ կ'վերաբերին մարդոց, որոնց հետ շփում ունեցած է ինք, Մարգոց անդրադառնալու այս առիթն զատ, զոր «Աղօթապատում»-ը տված է իրեն, «Խոհ» և խոսք»-ին մէջ ևս հատուկ բաժին մը հատկացուցած է իր մոտեն ճանչցած մարդոց, ամեն մեկուն բնութագրի տալով առանց հաշվելու դեռ այն բնութագրումները, զորս նվիրած է Արմաշի սեմին անցնող հոգևորականներուն ալ նույն այդ «Խոհ» և խոսք»-ին մէջ։

Իրեն մեկը, որ հեղինակութիւն էր այն օրերուն և որ այդպիսին կ'մնա մինչև այսօր ալ, հաճելի է անշուշտ կարգալ զայն, երբ կրնորոշել իր պատմած դեպքերուն յիշատակը գերակատարները և երբ որնէ դժմ հոգը դնելու ատեն չի մոռնար անոր տապաւնաբերին վրա խտացնել անոր կյանքն ու գործը, կ'ցելով և իր դատաստանը։ Բայց ավագ, որ բոլորովին ալ անկողմնակալ չէ կրցած մնալ մարգոց հանդեպ, որոնք խառնված են իր իսկ մասնակցած դեպքերուն։

Մասամբ ինքն ալ կ'խոստովանի այդ, երբ կըսե. «Փաղափարներու արտահայտութեան կարգին անկաշկանդ կերպով տեսութիւնները բրած եմ անձնավորութեանց և եղելութեանց

մին պահուն, երբ թուրք վարիչները այլևս թաղված կ'ընդունէին Հայկական հարցը և Եվրոպան կ'զոհէին ճառարով սփոյնի մահաճարձ այս ժողովուրդը, նոր աշխարհ մը կ'ստեղծէին հետին, և երկունքի մէջ է դար մը, երբ զանազան լուծերու տակ տվալտող ժողովուրդները ևս պիտի դառնային տակաւ իրենց ճակատագրին, արևուն տակ ազատ շնչելու անկուն մը ունենալով։

Օրմանյան այնքան միայն կրնար գուշակել, թէ ամեն ինչ դեռ կ'որսված չէ, որովհետեւ կարելի չէ դադար խոթել ժողովուրդ մը, որ ապրիլ կուգի։

Իր մտածումները փակելու ատեն Օրմանյան ազոտ հույս մը միշտ ունի։

Դազազը դնելու ասթիվ կաթողիկոսներն ու պատրիարքները, որոնք կտողանցեն «Աղօթապատում»-ի երեք հատորներուն մէջ և հաճախ նաև անոնց օրով սպրած կարկառուն դժբերք, հոգևորական թե աշխարհական, ամեն մեկուն բնութագրի կուտա Օրմանյան, յուրաքանչյուրին մէջ բնորոշելով մարդը ինչպես որ էր և գործունեութիւնը, որ ան ունեցաւ։ Այդ ուրվագծերը ավելի շահեկան կ'դառնան, քանի մեր օրերուն կ'մոտենան իր պատմած դեպքերն ու դժբերքը, և մտնալանդ երբ կ'վերաբերին մարդոց, որոնց հետ շփում ունեցած է ինք, Մարգոց անդրադառնալու այս առիթն զատ, զոր «Աղօթապատում»-ը տված է իրեն, «Խոհ» և խոսք»-ին մէջ ևս հատուկ բաժին մը հատկացուցած է իր մոտեն ճանչցած մարդոց, ամեն մեկուն բնութագրի տալով առանց հաշվելու դեռ այն բնութագրումները, զորս նվիրած է Արմաշի սեմին անցնող հոգևորականներուն ալ նույն այդ «Խոհ» և խոսք»-ին մէջ։

Ըսելի հետո, թէ իր քննադատած անձներուն դրական կողմերն ալ հիշած է ի հարկին, ան կ'շարունակէ. «Սակայն կ'եղծիք կամ անկանալիք իրեն պարտք չեմ համարած, երբ խնդիր իր անձնական շրջանակին ուրսեցելով պատմական շրջանակին կ'մտնա. և իմ տեսութեամբ հասարակաց կարծիքը նենգել և հանրութիւնը խաբել պիտի ըլլար, եթէ իսկութիւնը ծածկելի, կամ մարդահաճութեամբ ծամածոցի»։

Հանրային գործիչն մը, որ հաճախ անիրաւ կ'արձակումներու թիրախ էր եղած, կ'սպասուի սակայն, որ ավելի պաղարյուն գտնվելու ուրիշը դատած ատեն, Որովհետեւ խիստ բառեր և ծանր ածականներ չգործածելու բաւական չէ անկողմնակալ մնացած ըլլալու համար, և ոչ ալ զգուշ բացատրութեանց տակ կարելի է կիրք մը սքողել։

Այս տեսակետով Օրմանյան չէ կրցած անխոցելի մնալ։ Այն արդար և հետևաբար տեղին քննադատութեանց մէջ, զորս կուղղել իր ժամանակակիցներեն շատերուն, սպրդած

239 «Աղօթապատում», Գ, էջ 5335.

240 «Խոհ» և խոսք էջ 487.

են, ավա՞ղ, կծու, շրտելու համար անպատ-
ասեղ արտահայտություններ ավ...

Ժիշտ է, որ Օրմանյանի աննպաստ արտահայտությունները իր ժամանակակիցներուն մասին նույն բնույթը չունեն ըողորն ալ, ոչ ալ միեւնույն շարժառիթները։ Ումանց հանդեպ աններող է պարզ այն պատճառով, որ անոնք հեռվեն կամ մոտեն մաս ունեցած են իր կրած դատութեանց մէջ։ Ուրիշներու հանդեպ բացասական վերաբերում ունի անոնց բերած մասնակցութեան համար դատերու, զորս անիրավ կնկատես եւ անհամապատասխան հայ ժողովուրդի շահերուն։

իր գրչեն ելած րուհն արտահայտութիւններ պէտք զանազաններու մասին, որոնց չէ կրցած համակրիլ, իրեն դուրս եկած լրլրալով անոնց խառնվածք կամ նկարագիրը, և եւս ի կայնու, զոչ անոնց վարած են:

ԼՄարդկային է դառնում թլուրը, դոր ան կրեց
և որ իրեն կեզացան իր գործիանց մեջ,
Ուրիշներ, իր տեղը, բուրդովին քեն պիտի
ընեն լկզգին, Թի՛շ են եղած մեր գործիչնե-
րուն մեջ, որոնք շեն հանդուրժած, Ստեփան
Ոսկանին պես, իրենց գտած ապերախտու-
թյան, և հայ անուրը այլևս դժկամությամբ
են բերան առած, Ուրիշներ, ինչպես Ա՛ի
Շահպազը, վշտացած պատրիարքեն ու իր
ժողովականներին, ուրացած են իրենց կրոն-
քը, նվ սակավ չէ եղած թիվը մեր հանրային
այն գործիչներուն, որոնք առաջին հուսա-
խաբության հետ քաշված են հանրային
կյանքի. իրենց ներքո իմ մը, գտնե դառնու-
թուն մը միշտ պահած:

Եթե Օրառնայանի դրուժնային մեջ հաճելի չի
թվիր այդ դառնության հետքերը գտնել, ա-
նոր համար է, որ անոր երկերը հավակնու-
թյունն ունին իրրե պատմություն մնալու

Մարդոց մասին իր ըրած դատաստաններուն մյուս խոցելի կողմը այն է, որ իր ժամանակակիցները դատելու առեն կառուցողովի հաճախ տպավորություններ, որոնք միշտ չէ որ կ'համապատասխանեն իրականությանը, եվ ասկե զատ տեղ կուտայ նաև պարզ ենթադրություններ, ըսի-ըստներու, ժամանակակիցներու մասին իր կարծիքը բանաձևած տառեն։ Այնպես որ իր գատաստաններուն ոմանք հաճելի չի թվիր կարգավ անոնց, որոնք նույնպես այդ օրերը ապրեցան և որոնք այլապես կենրկայացնեն այդ միեևույն անցքերն ու անձերը։ Վաղվան սերունդը սակայն պիտի մոլորի, եթե այդ տպավորությունները պրիսմակին մեջեն դիտե հին ճշգրիությունները և իր եզրակացությունները անոնց վրա իսկ հիմեն։

Երբ Դուրյանի պատրիարքության օրով
Երուսաղեմի մեջ 1929-ին լույս կտեսներ
հետմահու Օրմանյանի ճեռհր և խոսքը-ր,

Հրատարակիչները նախագգուշութիւնն ու-
նեցեր էին սա քանի մը տողը գրելու նախա-
բանին մեջ. «Օրմանյան սըրազան իր սույն
գործովն ինքզինքը կենդակայացնէ պատմու-
թյան քեմին վրա, խոսելով իր անձին, իր
կյանքին և իր գործունեության մասին, և
ասիկա իրավունքն է Հնդկանակին: Բայց թէ
օրլափ իրավունք ունի իր դատումներուն
մեջ, որոնց հետ շփում և գործակցութիւն
ունեցած է, ընթերցողներուն կթողլի վերա-
սահմաններ ընել, ճիշտ ուզենալ:

Նախարարներ Կզգուշանա ուրիշ մատնատ-
նշում ընելու:

Մենք այ մեր կարգին լուռ պիտի անցնենք, եթե մարդիկը դատած ատեն այդ դառնությունը ցույց տված ըլլար միայն թնոհք և խուսք-ին մեջ, որ ատակվեալայեան իր սեփական հուզումներուն արձագանքն է, և ուր ծերունիք մըն է հին օրերը գերեզմանն և կանչելով զբաղած, որպեսզի զանոնք վերջին անգամ մը ևս ապրի։ Բայց ափսոսաւոր լինողս պատումս-ին մեջ ևս, ուր պատմիչը միայն պետք է խոսեր. տեղ-տեղ կիստանաւն գուլները, երբ իր սեփական համակրություններն ու հակակրությունները կվերհիշէ իր օրերու գեպքերը պատմելով։

Օրմանյանի այս տկար ռոպեներուն ակնարկելով է, որ դիտել կուտար Հայ բարձր հոգևորական մը իր իսկ սաներն, Քորզում պատրիարք գուշակյան, «Բայց երբ թուրնկատումներ կիցն անգամ մը սրտին ճամբան, ամենին բարձր մատենագրին համար ալ չկա ավելի դուրին րան, քան անտեսել ճշմարտութունը»:

Օրմանյանն իր ժամանակի հոգեւորականներին քիչերուն հանդեպ միայն անխառն համակրանք ունի։ Այդ քիչերեն մեկը ներսես պատրիարք Վարժապետյանն է։ Այդ պաշտամունքին մէջ դեր կ'խաղա անշուշտ այն խանդավառութիւնը, որով ներսես զայն ընդունեց Հայ Եկեղեցւոյ ժողով։ Բայց Օրմանյան պապեւս ալ հիացում ունի մարդուն ու անոր գործին վրա, անստգլուտ գտնելով մարդը անոր մէջ և գործը միակ կարելիին այն օրերուն²⁴¹։

Նվազ խորունկ չէ իր պաշտամունքը նաև
դեպի Մակար կաթողիկոսը, դեպի մեկը,
որուն հանդեպ նախապաշարումներով լե-
ցուն էին մտքերը, երբ ցարը զայն վաճկա-
ցուց իր կաթողիկոս, մինչ Մեղիսեղիկ Մու-
րադյանն էր առաջին ընտրելին: Օրմանյան
սակայն Մակարը պատմության կհանձնե-
միայն իրեն անթերի մարդ ե անսողուն
հոգևորական, այլև իրեն թողուն կաթողիկոս-
նվ փոխարեն՝ հեռու է չքամ զզացումներ
տածելի դեպի խրիմյանը: Կրնդունի, որ կուտք

24) «Ազգայնականներ», Գ, է, 4518—4519.

մըն էր ան ժողովուրդին համար՝ կաթողիկոս դառնալիս առաջ, բայց և կրսն, որ ան ինքզինքն արդարացնել չկրցավ՝ կաթողիկոսական Աթոռի վրա։ Օրմանյան ինքն ալ կօգնե ընթերցողին՝ իր պատվանդանեն վար առնելու համար զայն, բայց կշվարի հայ ժողովուրդի պահպանած պաշտամունքին առջև դեպի հիշատակը մարդու մը, որուն կաթողիկոսությունը հուսախաբ ըրած էր զայն և որ շարունակեց իր կուռքը մնալ։

Օրմանյանի համար առեղծված մըն է արդարև իրիմյանի ապագան, և բացհերաց կիսոստովանի այդ. «Եթե ազգային ժամանակակից պատմությունը առեղծվածական դեմք մը կընդունի, և հին դեմքերու հանդիմանական անբացատրելի անձնավորություն մը գոյությունը կհավանի, այն ալ Մկրտիչ իրիմյանն է անշուշտ»²⁴²։

Օրմանյան փխրածն առեղծվածը մեկնել, բայց, կզգա, որ իր ուժերեն վեր է այդ ինչպե՞ս կըլլա, որ միշակ պատրաստություն մարդ մը, որ սխալն զատ ուրիշ բան չէ ըրած, «Հայոց Հայրիկ» կդառնա մեկնել։

Երիմյանի զարգացումն ու հատկությունը, — կրսն Օրմանյան, — միակողմանի էր, լուկ հայերենով սահմանափակված, միջազգային և օտարազգի տարրերով ճախացած չէր, գործի ճաշակ և շահակցյալ համեմատություն չէր ճանշնար, վարչական հանճարը պակաս ըլլալու լափ քիչ էր, հեռատես և նախատես զգուշավորությունը յուր ասպարեզը չէր, հանդարտ նախապատրաստություն մը և կշռադատությամբ ձեռնարկները իրեն սովորական չէին։ Բայց ուներ քնածին ուշիմություն մը, որ իր բմբռնելու և հիշելու և որոշելու կարողությունը կկազմեր. ուներ քնատուր ճարտարություն մը, որով ամեն պարագայն անվնաս գուրս ելնելու կերպը կգտներ. ուներ գրավիլ ոճ մը և ազդեցիկ խոսք մը, որով դիտեր սիրտներու վրա տիրապետել. և ամենուն վրա ուներ անկեղծ և ուղիղ զգացում մը, որ ամեն թերություն կըլքեցներ, ավելածը կշիներ, ծուրը կշտկեր, և որնէ պակասություն կծածկեր... Առեղծվածային րսինք և կկրկնենք, թի իսկապես այսպես է անձ մը, որ մեծ գործեր արտադրած չէ, որ ետենն մեծ հետք մը թողած չէ, որ պաշտոններուն մեջ ընդհանրապես հաջողած չէ, որ դիտողությանը և ստգաւանաց ներքն ալ ինկած է, և տակալին անբասիր մնացած, համակրություն կորուսած չէ, և համարձակածայն դավերստներով հիշատակված է»²⁴³։

Օրմանյան հարեանցի միայն կհիշե, թե նույն այդ իրիմյանն եղավ սակայն, որ հայ-

րենասիրությունը արծարծեց հայ ժողովուրդին մեջ։ Ու կմոռնա անմիջապես ավելցնել, որ այդքանը բավական էր... կուռք մը դառնալու համար։

Օրմանյան կմոռնա, որ ժողովուրդը տարբեր շահանիշ ունի իր կուռքերը ստեղծած առնել։ Անոր հոգը չէ, թե ինչ պիտի ըսեն վաղվան մարդիկ իր խանդավառության պահերուն համար այս կամ այն անհատը պատվանդանի վրա զետեղած ժամանակ։ Բավ է, որ անոր հոգվուն մեջ իր սեփական հուզումներն է գտած, և իր սեփական տեսիլները, իրիմյան հայ ժողովուրդին կուռքը դարձավ, որովհետև նույնացավ անոր խռովքին ու անոր երազներուն հետ, անոր տառապանքը բաժնեց և անոր հետ միասին հուսաց։

Իզմիրլյանի հանդեպ իր զգացումները արդեն քոլորովին սառն կդառնան, ու դատաստանները վերապահ։ Վերապահ է իր դատաստաններուն մեջ, որովհետև անոր գործունեությունը ճիշտ չի գտներ, և սառն է իր զգացումներով այն չկամ վերաբերումին համար, զոր Իզմիրլյան ունեցավ իրեն հանդեպ ամբողջին ձեռքը մնացած օրերուն։ Այնուամենայնիվ քացասական գծերը տված առնել, Օրմանյան Իզմիրլյանի արժանիքներն ալ կհիշե, թե շատ հարեանցի. «Իրեն վարքով անբասիր, եկեղեցականությունը նախանձահույզ, դիտումով ուղղամիտ, աշխատություն մը անխոնջ, նպատակով անալատ, զովված է իրավամբ, թեպետ ինքնահավան և վրեժխնդիր խառնուրդ մը կշահավորեր այդ ձիրքերը. այսուհանդերձ ո՛ր էր, թե վարչականությամբ ալ փայլեր, շործերուն տիրապետել կարենար, և միջոցներու գործածության մեջ ճարտարության և դիվանագիտական հանճարը իրեն առաջնորդ ունենար, որ հաջողությամբ պսակվեր, ինչ որ պակսեցավ յուր առաջին պատրիարքության մեջ, և երկրորդին մեջ ալ շարդարացավ. աքսոր կրած ըլլալու առավելությունը անձին փայլ մը եղավ, բայց ո՛ր արդյունքի արժանավորություն, դի պատրիարքությունը հանրության պետքերուն համար հաստատված պահանջ մըն է, և ո՛չ հայածանաց մըրցանակ»²⁴⁴։

Հեռու է համակրանք տածելն իրեն Աշրգլյանի հանդեպ ալ։ Համիզը սիրաշահելու քաղաքականությունը ինքն ալ վարեց երբ պատրիարք էր, բայց չի կրնար հաշտվիլ Աշրգլյանի ստրկամտության հետ։

Աշրգլյանը դադարը գնելու առթիվ Օրմանյան կրսն. «Իրեն Աշրգլյան շատ ավելի պատվավոր կյանք ունեցած և համբավ թողած պիտի ըլլար, եթե պատրիարքության

242 «Ազգապատմ», 9, էջ 5333։

243 Անդ, էջ 5334—5335։

244 Անդ, էջ 5336։

զաքուշ րատերով, և որ հետագային ալ, Օրմանյանի պատրիարքության ատեն, խոժոռ տրամադրությամբ պիտի վերաբերեն դեպի օրվան պատրիարքը, չէր կրնար շարժանանալ կծու րատերու օկեղապատումս-ի մէջ:

Բարթողիմէոս Զամբյանին հասած ատեն զգայի է, որ կրնազգի իր մէջ հայը, որովհետեւ ատենն ունի հոգեւորական մը, որ պատմության պետք է անցնի խարանը ճակտին, օկնձնդրության, անհոգ հանգստյան և հեշտալից հաճոյից տիպար մըն էր յուր անհատական կյանքին մէջ, իսկ մտայնությամբ համոզված տաճկասեր մը ըստ ամենայնի և համենայնի, եթէ չուզէր կարծել, որ այդ զոգացումը իբրեւ հաշտութեան միջոց կզործածէր, իր վրա խոսված մեղադրանքներ այդ կիտին շուրջը կդառնային, ազգային օգուտն ու իրավունքը անարգելու և զոհելու չափ, և նույնիսկ պատրիարքանալու անհազ տենւանքն ալ այդ կերպով հաշտուցնել կհուսար, թեպէտ հուսախարար մնացա՞նք²⁵⁰:

Ղեռնդ վարդապետ Մաքսուտյանի մասին խոսած ատեն արդեն հոգեւորականը չէ որ նկատի ունի, այլ րախտախնդիրը, որ հայ եկեղեցականության շարքերուն մէջ սպորդած տասնյակ տարիներ հայ ազգային կյանքը խոռվեց իր զեղծումներու խնդրով: Անոր մասին իր դատաստանը հիշած ենք Նրուսաղեմի խնդրին վրա խոսելու առթիւ. կուզենք միայն այսքանը ըսել, որ Մաքսուտյանի պարագային ան խստաբիր պատմագիր մը չէ միայն, այլ նաև դաժան դատավոր մը, որ կուղի իր իսկ ձեռքով պատժել մեղադրյալը:

Իր մոտին ճանչցած հոգեւորականներուն մէջ այնպիսիներն ալ կան, որոնց հանդեպ հիացում միայն ունի Օրմանյան: Աղոնցմն մեկն է Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը, այն, որ առաջինն եղավ հայ հոգին պեղող՝ հոն թաքնված գեղեցկությունները լուսին հանձնելու համար, և որ, ըստ Օրմանյանի, «Հայագիտության շրջանակի մէջ արդյունավոր հեղինակ հանդիսացավ, ազգային ծառայությանը անխնայ մշակ եղավ, ժողովուրդական հոգածությանը համար արժանապես գովվեցավ, ուղղամիտ և բարեմուրն րնավորությամբ ընդհանուր համակրություն շահեցավ: Անխորհուրդ ձեռնարկներն ոգով լափ հետո՛ւ բայց օրինավոր հայրենասիրութեամբը դրպարտվեցավ և կասկածավոր երևնալու դժբախտությունն ունեցավ»²⁵¹:

Բնորոշելու առթիւ Օրմանյանի մտքի վատակը, մարդ չի կրնար ակնածանքով կանգ չառնել պահ մը բեղմնավորությանը առջև նախ հեղինակի մը, որ յոթանասունը անցած է արդեն, երբ կսկսի շարադրել իր ամենն

ուշադրավ երկերը, երկեր, որոնք կպահանջեն որքան ուժեղ և պայծառ հիշողություն, նույնքան թարմ ուղեղ, չհոգնելու համար որոնումներն և պրպտումներն, լմուռնելու համար տրամաբանությանը և խորհրդածությանը ատեն, և լսայթաքելու համար դատաստաններու և եզրակացությանը պահուն:

Ակնածանք նպաստին համար ևս, զոր անոնք հայ մատենագրության կրքերն, ոչ միայն հայ եկեղեցական գրականության, որ իսկապես կհարստանա քանի մը թանկագին երկերով, որոնց մէջ Հայ եկեղեցին կներկայանա իր հարազատ դիմագծությամբը և իր իսկական տեղը գտնելով քրիստոնյա եկեղեցիներու ընտանիքն ներս, այլ նաև մեր պատմական գրականության համար ալ, որուն Օրմանյան բազմաթիւ նորություններ կբերն, և ինքնուրույն ալ տեսակետներ, որոնք վիճելի իսկ ըլլան, շահեկանութենն երբեք դուրի չեն:

Իր երկերուն մասին զատ-զատ խոսելու առթիւ հիշեցինք նաև անոնցմն ոմանց խոցելի կողմերը. այստեղ ավելցնենք միայն, որ վրեպներն ղերծ չեն կրնար ըլլալ երկեր, զորս հեղինակը կգրն կամ կավարտն եղա՞նք միայն տարիքի մը, երբ հիշողության վրեպումներ չեն կրնար չլրլալ պայմաններու մէջ, ուր իրեն կպակսին գրավոր ազդուրները և ուր ստիպված է հիշողությամբ կամ հեռավոր տպավորություններով վերականգնել հաճախ դեպքերը, և վերջապես երբ հեղինակ մը կփորձն պատմել իր իսկ խոհերն ու հուշերը անցքերու մասին, որոնց ինքն իսկ խառնված է, և երբ, հետեաբար, մարդկային ուժն վեր է զանոնք թողթին հանձնել անողոք դատավորի մը պես, այսինքն արդարու թյամբ և անկողմնակալությամբ:

Այս բոլորով մեկտեղ Օրմանյան պատմության կթողու մտքի պատկանելի վաստակ մը, որ վաղվան սերունդին պիտի պատմն որոնելու, զննելու, ստեղծելու կիրքը մարդու մը, որ գրիչը ձեռքն վար չուղեց ձգել իր վերջին օրերուն անգամ:

Որք «Խոհք և խոսք»-ը ավարտելու մոտ իր տեսությունները կպարզեր մարդկային կյանքին ու անոր նպատակին մասին, ի վերջո զանոնք կամփոփեր տեսակ մը Տասնարանյայի մէջ, որ սապես կվերջանար. «Կյանքին լրումը գործունեությունն է. լավ է կարճ կյանքը արդյունավորությամբ, քան երկար կյանքը ապարդյունությամբ»²⁵²:

Կրկնակ եղավ Օրմանյանի քախտավորությունը. կարճ շեղավ իր կյանքը, և միևնույն ատեն ապարդյուն լանցավ:

²⁵⁰ Անդ, էջ 485.

²⁵¹ «Ազգայնական» Գ, էջ 5383.

²⁵² «Խոհք և խոսք», էջ 485.

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԾԱԹՅԱ ՄԱՍՆԱՏՈՒՓԵՐԻ ԵՐԿՈՒ ՀԻՆ ՆՄՈՒՇՆԵՐ



այր Աթոռ Ս. էջմիածնի եկեղեցական արվեստի վերաբերյալ մետաղյա ցուցանմուշների մեջ աչքառու տեղ են գրավում երկու մասնատուփեր, որոնք իրենց ոճերի նմանությամբ, հնությամբ և ճաշակավոր կատարմամբ դիտողի ուշադրություն են գրավում։ Այս երկու մասնատուփերի կողքին իր շքեղությամբ, ճաշակով և կատարման բարձր վարպետությամբ աչքի է ընկնում նաև խոտակերաց Ս. Նշանը, բայց դա սույն հոդվածի նյութից դուրս է մնում։

Միջին դարերում շատ տարածված երևույթ էր մասնատուփերի օգտագործումը։ Ոչ միայն եկեղեցիներում, վանքերում, այլև իշխանների, մեծազարդ տների և նույնիսկ հասարակ մարդկանց մոտ կարելի էր գտնել մասնատուփեր և մասունքների արկղիկներ, որոնք պատրաստվում էին ոսկուց, արծաթից, ոսկրից, փղոսկրից, թանկարժեք փայտերից, պղնձից և այլ կերպասներից։

Մասնատուփերի օգտագործումը Արևելքից նվիրյալ է անցնում խաչակիրների արշավանքներից հետո (ԺԳ դ.)։ Նրանք կոստանդնուպոլսից, Փոքր Ասիայից և Կիլիկիայից իրենց հետ բերում էին մասունքներ։

Հայտնի չէ թե Հայաստանում ե՞րբ են պատրաստվել առաջին մասնատուփերը, բայց հավանաբար Բագրատունյաց շրջանում, գուցե և ավելի առաջ։ Մասնատուփեր պատրաստելու արվեստը զարգացման բարձր աստիճանի է հասնում Ջաջարյանների օրով Հայաստանում և Ռուսինյանների օրով Կիլիկիայում։

էջմիածնի այս երկու հնությունները մասնատուփերի պատրաստման հին շրջանին են պատկանում և այս տեսակետից բացառիկ նշանակություն ունենւ նրանցից առաջինը պահարան է, $24,5 \times 17,5 \times 3$ սմ. չափերով, արծաթից պատրաստված։ Ա երեսի տարածության վրա, բացի եզերքի քառակյտն շրջանակից, կան երկու դռնակներ, $22,5 \times 7,5$ սմ. չափերով, որոնք շրջանակի

հետ կապվում են երկուական ծխնիններով։ Այժմ այդ դռնակները չեն բացվում (արդյո՞ք դարերի խոնավությունից, թե՞ ներսում պահվող մասունքը պահպանելու անհրաժեշտությունից են ամրացրել)։

Երկու դռնակների վրա էլ երկարածիդ տերունական կերպարների են դրվադված։ Ձախ դռնակի վրա (նայողի կողմից) քանդակված կերպարը, որի գլխավերևի այն մասը, ուր պետք էր քանդակված լիներ անունը (հանդիպակաց դռնակի նույն մասում մյուսի անունը քանդակված է) այժմ չկա, բայց դատելով մեր տեսած բոլոր քանդակներից և համեմատելով նրանց հետ, հիմք ունենք կարծելու, որ այստեղ գրված է եղել «Պետրոս»։ Ձախ ձեռքում հավանաբար բռնած է եղել բանալի։ Թևի ուղղությունը այդ է ցույց տալիս, բայց այժմ ձեռքի մասը պղնձված է, նույնպես և դեմքը, որի գլխավերևում կա լուսապսակ։ Այս կերպարը դռնակի աջ կողմից հորդում է և դրվադված արծաթ թերթը գալիս հանգչում է նույնի եզերքի վրա (երևի կերպարի ամբողջությունը կարելի է եղածին չափ պահպանելու համար)։ Աջ կողմի դռնակի վրա, ավելի լավ պահպանված վիճակում, կա Պողոս առաքյալի կերպարը, նույնպես դրվադված, գրեթե անաղարտ վիճակում, բացի գլխավերևի պակաս մասից։ Գլխի լուսապսակի և աջ ուսի մոտ հստակ կարդացվում է «Պաղոս»։ Սա ավելի կանոնավոր կերպով ամրացված է դռնակի շրջանակին, չնայած որ շրջանակի տակ ընկնելու պատճառով, կորցրել է աջ ուսից մինչև ոտը, մի նեղ շերտ։ Հիմք ունենք կարծելու, որ այս երկու կերպարները անցյալում նույն արծաթ թերթի վրա քանդակված են եղել, հավանաբար երեսպատելով մի որևէ մատյան կամ մեկ դռնանի մասնատուփի ի հաստատում մեր այս տեսակետի ասենք, որ ձախ (նայողի կողմից) դռնակի դրսից սկսվում է մի գնդիկաշար և հասնում Պետրոսի գլխի մոտ և շնայած այստեղից սկսած արծաթ թերթի երկու գլխավերևի մասերը չկան, նկարը ու-

շաղիր դիտելով կհամոզվենք, որ այս շարքը շարունակվել է մինչև Պողոսի գլխի աջ անկյունը (նայողի կողմից), հասնելով մինչև ինքն, երկուսի ոտնատակերը: Գլխավերևի այս կամարը ոչ թե մեկ, ինչպես կարծում ենք, այլ երկու հատ կլինեին, եթե այս երկու դռնակները զատ-զատ դրվագված լինեին: Սույն գնդիկաշարը նույն արծաթ թերթից է և ոչ թե առանձին պատրաստված ու թերթին մածուցված: Այս այս հազվագյուտ նմուշներից է, ուր չկա ընտրողություն և աշխատանքի ոճը պահպանվում է: Ժն, ԺՁ և հետագա դարերի մետաղյա ձեռագրակազմերի մեծամասնության վրա հանդիպում ենք այսպիսի երևույթի, ուր կերպարը քանդակված է արծաթ թերթի վրա, իսկ զլանակերտ գնդիկաշարը առանձին պատրաստված ու շուրջը մածուցված, երբևէ ընկերանայով զուգաթեյ պարանին կամ կյոռ արհիւ:

Դռնակների վերևի մասում կան... Բդ...
Ղի... Մէ... տառերը իրարից անջատված պա-
կաս մասերով է դռնակներով, որոնք հավա-
նաբար, պետք է վերականգնել որպես [Բա] ր-
դ[ու դիմէ[ու]: Անաղջակների ոտնատակում
նույնպես կա արձանագրություն հետևյալ
տառերում՝ ԲԱ և ՄՎՈՐ:

Բ հրեւի վրա կա արձանագրութիւն, որ-
տեղ խոր դրվագման միջոցով (տառերը
խորն են ընկած) գրված է. Մնորոգեցաւ
զ[ա]ւ[ա]զ[ա]ւնըս ս[ուր]ը առ[ա]թ[ե]ւ[ոյ]
Բ[ա]ւրդ[ու]ղ[ի] իմէոս[ի] Աստ[ա]ւ[ատ]ս
ձեռ[ա]մ[ար] Դուքաթշ[ա]ւ վ[ար]դ[ա]ւապետ[ի]
և որդ[ի] ու Քիւսիսի իշխատ[ա]ւ կ[ա] առ հասարակ
ամ[ի] ենալն շախ[ա]ւ տաւորացն, ամէն, Եւ
Մ[ե]ղ[ա]ւմորս ի թ[ի]ն ՊՂԲ-որդի Կ. Ե.
Կ[ա]ր[ա]ւ[ա]ւ ենտես Սույն արձանագրութիւ-
նից պարզ հրեւոմ է, որ մնորոգման թվականն
է ՊՂԲ (1443), բայց թե ե՞րբ են դրվագվել
դոնականքի վրայի առաքյալները, որոնց
դրվագման ոճը բարձր ճաշակն է կատար-
ման մեծ վարպետութիւնը մեզ թույլ են
տալիս ենթադրել շատ ավելի վաղ և երջա-
նիկ ժամանակներ՝ հավանաբար Բագրատուն-
յաց օրով, Ժ—ԺԱ դար, Երկու առաքյալների
հագուստները շատ նման են Աղթամարի
վանքի դրսի քանդակների (Ժ դար) և Քա-
գիկ թագավորի արձանի կրած հագուստների
(ԺԱ դար)։

Արձանագրության մեջ հիշված Ղուբաթ անունը, բայտ Հ. Աճառյանի, գործածվել է մեր մեջ, ժե՛ն—ժե՛ն դարերում² և այս մասին գրվում

է, որ նրան հանդիպում ենք առաջին անգամ
1490 թվականին, իսկ սույն արձանագրու-
թյան մեջ, ամենի վաղ է՝ 1443 թվականին:

Կա մի այսպիսի հանգամանք, որը մեզ
օժանդակում է հաստատել, որ երկրորդ և
թերևս երրորդ նորոգումը կատարված է
1443-ից շատ հետո: Դա այդ դռնակի շրջա-
նակի ծախ կողմի երիզի վերևի և ներքևի
փորագրված զարդերն են: Փորագրված ար-
ժաթ ձևով պատկերակված մենք հանդիպում
ենք ժն դարից հետո:

Պարզ հերում է, որ այս պահարանը կազմվել է 1443-ի նորոգման ժամանակ, երբ հավանաբար մատյանի կազմից կամ միադուռ պահարանից վերածել են իր այժմյան վիճակին, Այդ ժամանակ արդեն երկու առաքյալների գլխավորեր և Պետրոս առաքյալի աջ կողմը, վստահաբար վնասված են եղել, մի հանգամանք, որը բացատրվում է վնասված մասերի նշերից դամբերով, որոնց հար և նման են այն գամերին, որոնք շրջանակում և ամրացնում են երկու դռնակների դրվագումները և ետևի արձանագրությունը, Այս դամբերից տարբերվում են միայն ժինիների կիսազնդիկ գլուխներով գամերը, որոնք հավանաբար շատ հետո, օգտագործման պատճառով իտխված են:

Դրվագումը կատարված է շատ մեծ վարպետությունով և միայն արծաթ թերթի երեք սիլ հարվածելով և շատ է հիշեցնում խաչքարերը, ուր մակերեսը առանց խախտելու, ստացվում են զարդաքանդակներ, մինչդեռ հետագա դրվագումների վրա, մանավանդ ԺԶ—ԺԷ դարերի մետաղյա ձեռագրակաղմերի վրա, մեծամասնությունը ձրդում են դեպի քարձարաքանդակ:

Ան և Ք հրեաները իրար միանում են 3 սմ. լայնությամբ մի արծաթաթերթ երիզով, որը Ան հրեայի շրջանակի ծալելուգ է առաջացած և գալիս ու փակում է Ք հրեայի եզերքները։ Այս երիզի վրա կան հակառակ կողմից հարգածելու միջոցով (խշտակի և խափշակի)¹ զարդեր, որոնց հարդարումը այնպիսին է, որ դիտողին դրվազման տպավորություն են տալիս։ Այս ձևով դրվազված հաջորդական իրերանման զարդաքանդակների մենք հաճախ հանդիպում ենք վրացական սրբանկարների արծաթապատ մասերում, ուր նույն խափշակով հաջորդաբար հարվածելով երիզանման մասը, ստացվում է մի ամրողջ եզրագարդ։

Նտեի արձանագրության մե, կա նորոգողի անունը, ինչ որ հազվադեպ երևույթ է.

¹ В. Уман, «ИЗЖ», № 39 к 30.

2. Ա. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Հասար. Գ, էջ 148, «Այս պարսկական ծագում ունի ն գործածվել է մեր մեջ ժեմ-տեղի դարերում, Առաջինը հիշվում է Ղուբայթ խոյա, որդի Նզդանբախի, որը Բրևի տղին Ազարիս գրչին մի Ավիտարուն, Արաշ զն-բաղադարում, 1480 Մ.՝»:

3 Բ. Առափնյան, «Քաղաքները և արհեստները Հայաստանում» Թ—ԹՊ դարձրում, Երևան, 1958 թ., էջ 177:



Ա ՊԱՆԱՐԱՆԻ ԵՐԻՋՈՑ ՄԻ ՄԱՍՆԻԿ

«նորոգեցաւ... Ժողովարանի մետաղյա կազմերի վրա ևս առավելապէս հանդիպում ենք նվիրատուների անուններին, քան նորոգողի կամ ռակերի»:

Մի ուրիշ ապացույց ևս, որ այս պահարանի երեսը եղել է մատյանի կազմ, այն է, որ պոկված մասերի տակ երևում է շատ չորաքած, գրեթե փայտացած կաշի: Երկու երեսները և եզրազարդը կատարված են մոտավորապէս 0,5 մմ. հաստութեամբ արծաթ թերթերից, բացի երկու առաջալաներից, որոնց արծաթ թերթերը շատ ավելի բարակ են: Ոսկեպատված են միայն Ա երեսի երկու յուսապսակները, տառերը և եզրազարդը ամբողջութեամբ:

Հետաքրքրական է արձանագրութեան այն մասը, որը վերաբերում է պահարանի նորոգման վայրին: Աստապատ գյուղաքաղաքին, որը գտնվում է Արաքսի ափին: Այնտեղ եղել են երկու վանքեր՝ Ս. Վարդանազորավարի անվան, հիմնված ՌՃԴ (1855) թվականին և Ս. Ստեփանոսի վանք (կոչեցյալն Կարմիր վանք), որը, ըստ ավանդութեան, կարծվում է, որ Զ դարում է կառուցված, իսկ այդ վանքի մասին առաջին անգամ հիշատակվում է Քրաքենյան կոնդակում, 976 թվականին:

Զ. Ղ. Ալիշանը այսպէս է բացատրում Աստապատ տեղանվան ծագումը, որը քաղված է տեղի բնակչության մեջ գոյություն ունեցող ավանդությունից: Են նմին ժամանակի (Ժէ դ.) երեք նորոգեալ մեծ և հոյակապ եկեղեցի աւանին Ս. Վարդան անուն, ուր աղուաբար աւանդեն բնակիչքն, բերեալ և պատեալ, զմարմինս նահատակացն Վարդանանց, վառն որոյ և Աստապատ կոչեցեալ, իբրև աստէն պատեալ, այլ Մակունցոց բոնութեամբ բարձեալ և տարեալ զնոսին իւրեանց աւանս:

4. Զ. Ղ. Ալիշան, «Սխական», Վենետիկ, 1893, էջ 508-514:

Արձանագրութեան այն մասը, որը վերաբերում է ազատագրման արդյուն առաքելության բարդուղի մեծության, կարելի է բացատրել նրանով, որ Բարթողիմեոս առաքյալին նկատված զավազանի մի մասնիկը պահվել է սույն պահարանի մեջ: Այսպիսով նա ինքնըստինքյան կատարել է մասնատումի դերը:


Ս. Էջմիածնի եկեղեցական արվեստի վերաբերյալ հիշարժան հնութիւններին է նաև $30,5 \times 19 \times 3$ սմ. չափերով մասնատումի, նույնպէս արծաթից պատրաստված: Ա երեսի կենտրոնից մի քիչ ներքև կա մի կափարիչ $14 \times 6,5$ սմ. չափերով: Սույն մասնատումի վրա զրվագված կերպարների դասավորումը շախմատաձև է, հետևյալ հերթականութեամբ. վերևը կան երեք կերպարներ, կենտրոնում զահի վրա բազմած:

Աստուծո կերպարն է, գլխավերևում ՏՐ ԱՄ զրվագված, ձախ ձեռքին բռնած է գիրք, իսկ աջով օրհնում է: Գահի հենարանի վերևի երկու անկյուններում կան ձվաձև գլխազարդեր, վրան մեկական խաչ: Գահի երկու կողմերին 2 կանգնած հրեշտակներ (Սերովրեք և Քերովրեք), թեթևորեն խոնարհվում են դեպի զահը: Յուրաքանչյուրը ձեռքին բռնած է մի զավազան, որը թեքված է դեպի


վերևի ՏՐ ԱՄ արձանագրությունը: Աստուծո գլխավերևում կա խաչանիշ յուսապսակ:

Կենտրոնից մի քիչ ներքև կան երեք կերպարներ, որոնցից ձախ կողմում եղածը, շնայած որ գլխավերևում լինելիք արձանագրությունը կրող մասը պոկված է, սակայն վստահաբար Պետրոս առաքյալն է, նկատի ունենալով, որ ձախ ձեռքին կրում է բանալի, Աջ ձեռքով օրհնության նշան է անում: Հագել է երկար պարեգոտ, որը հասնում է մինչև ոտների ծալքը: Աջ կողմի կերպարը Պողոս առաքյալն է, որի գլխավերևում կա Պղոս արձանագրությունը:


ձախ ձեռքին գիրք, իսկ աջով օրհնում է: Այս երկուսի կենտրոնում, նույնանման արծաթ թերթի վրա կա կափարիչը, ուղղաձիգ և փաթաթված պարանոց զրվագված շրջանակով: Կենտրոնում զրվագված է մի երիտասարդ կանգնած վիճակում, որի գլխի ձախ և աջ կողմերին կա Տեփանոս արձանագրությունը: Ձախ կողմի (նայողի կողմից) արձանագրության այն մասը, ուր վստահաբար Ս տառը պիտի լիներ և լրացներ [Ս] տեփանոսը, շնչված է: Ստեփանոսը հազած է երկար, պարզ պարեգոտ, ձախ ուսին կա խաչանիշ ուրար, նույն ձեռքին բռնած է սկիհ, իսկ աջ ձեռքին՝ բուրվառ: Մեջքի գոտկատեղում կապած է պարանոց: Մեկից ներքև ծածկրված է (հավանաբար հերթական նորոգու-



Ս. Էջմիւմիւնի ԱՐԾԱԹՅԱՆ ՊԱՆԱՐԱՆԻ Ա ԵՐԵՍԸ




Ս. Էջմիւմիւնի ԱՐԾԱԹՅԱՆ ՄԱՍՆԱՏՈՒԹԻ Ա ԵՐԵՍԸ



Քլանց րնթացրում) ձվածն ակնունման և րեսներով հղկած մի ապակով, որն ամրացված է արծաթ շրջանակի մեջ, Դեվար թն առաջին նորոգման ժամանակ (1302 թ.) սյուղուղ ղեռնողված լինել արա ապակին, որը ծածկում է մասունքը, այլ հավանաբար, հետադարձ, քանի որ այդ ժամանակ ապակին բարով հղկելու տեխնիկան դեռ ծանաթ չէր Այս կափարիչի աջ կողմը (նաղդի կողմից) ունի 2 ծխնիներ, որոնցից մեկը այժմ կիսված է, թողնելով մյուս կեսի հետքերը, կան կողպեքի մնացորդներ, կենսաբուսական շարքի այս երեք կերպարներն էլ, զիտի շուրջը, ունեն լուսազատկներ, ծածկ մասը, նախ կողմը կա մի պատանու կերպարները, որը հավանաբար խորհրդանշում է եվրոպական Սրա հանդերձանքը տարբերվում է նախորդների հանդերձանքից և երևում է, որ հեղինակը ջանակացել է ավելի համեմատ ցույց տալ, Պատանու ոտների մասը քանդակված չէ, Գնայած քույր կերպարների գեմերն էլ, բացի Ստեփանոսից, քանդակված են բովանկան պրիմիտիվորեն, բայց ամբողջությամբ հնչում է միտոն և դասավորումն էլ հայկական դարդարվեստին առանձնահատուկ։ Շուրջի այն մասը, որ դարձած է ղեպի արձանագրության (Բ երես) տանող կազմը, շունի ոչ մի դարդ և ամրացած է 49 երկաթյա զամերով, որոնցից այժմ պակասում են 12-ը։ Այս երկաթ զամերը հետագա նորոգման նշաններն են, քանի որ մեր կողմից ուսումնասիրված այն մետաղյա կազմերը, որոնք հետագային չեն նորոգված, ունեն արծաթ կիսազնդիկանման գլխավ գահիկներ, կափարիչը անհնարին է եղել բաց մանկ, քանի որ նա էլ իր հերթին ամրացած է 2 զամիկներով, Բոլորը երեսից զրկազված է միակտոր (0,6 միլիմետր հաստությամբ) արծաթ թերթից, բացի կենտրոնի կափարիչից, որը զրկազված է առանձին, նույն հաստության թերթից, Մխնիները և կողպեքի մնացորդները մկրատով ձևած են։

Բ երեսի վերևի մասում կա զրկազված տառերով (տառերը բարձր) արձանագրություն. «Յիշեալ Քս Աժ գալխատուս և նորոգուս սր Եշխարացս և գևորագմն ոսկերիչս րվակնույնի Հայոց ԶՄԱ, աղաթԲ յիշեցե՛ր զձառաւ»։ Պարզվում է, որ ԶՄԱ (1302) թվականին նորոգված է եղել ոսկերիչ հորաթի կողմից, Այստեղ էլ հայտնաբերվում է մի ուրիշ ոսկերիչ վարպետի աշուխ, Դրովազված է ինչպես նախորդ մասերը, երեսից, մի զրկազում, որը շուրջը ցածրադնելով, մի քիչ բարձր է թողնում տառերը (մոտ 1 մմ.), առջատվելով ֆոնից, Արձանագրությունից ցած րնկնող մասը, որը կազմում է



ԱՐԴԱՆԱԳՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ Ս ԵՐԵՎԱՆԻ ԱՐԽԱՆԱԳՐԱԴԱՐԱՆԻՆ

ամբողջ արծաթ թերթի կեսից տվելին, մնում է աղաթ և շատ ճմլված վիճակում։ Հավանաբար ոսկերիչ հորազմը տեղ է թողել հետագա նորոգող ոսկերիչի արձանագրության, ինչպես սրինակ ձևագրերի վերջավորության հիշատակարաններում, ուր շատ հաճախ տեղ է թողնված հետագա հիշատակագիրների համար։ Այս աղաթ տառածության ներքևի մասում կա մի առանձին վարդյակ, ամրացած կոստուրի (կիսազնդիկի) փոխարեն արծաթի ուղած մասը տակի տախտակին հավասարեցնելու համար։

Բացի այն մասերից, որոնք ժամանակի րնթացքում ողաագործումից մաշվել և պոկվել են մասնատուփից, այսինքն՝ Պետրոս առաքյալի և Ստեփանոսի դիտավերելում և Ստեփանոսի ու Պողոսի ոտների տակ, մնացածը բավական լավ վիճակում է պահպանված և արծաթը պահված տեղերում երևում է տախտակը, որի վրա ամրացված են բոլոր մասերը, Տախտակը այնքան էլ հին չէ և կարծում ենք, որ հայտնի նորոգության թվականից (1302) շատ հետո է ամրացված, հավանաբար մեզանից հազիվ երկու հարյուր տարի առաջ, Երեսի և զրաի եղերի քույր մասերը շատ որակավոր կերպով ոս-



ԱՐԾԱԹՅԱ ՄԱՍՆԱՏՈՒՓԻՐ Ի ԵՐԵՄԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՅՈՒՆԸ

կենսատած են (վստահաբար ոսկին սեղիկի մեջ հալելու միջոցով)։ Այս ձևով կարելի է շատ ավելի հաստ ոսկու շերտ անցկացնել ցանկացած իրի վրա, քան ոսկեջրմամբ և այսպիսով երկարել ոսկեպատման կյանքը։

Այս գործի դրվագում, թեև նախորդից մի քիչ ավելի բարձրաքանդակ, րայց նույն, ոճով է և համանաբար մեկ դար ուշ, այսինքն ԺԱ—ԺԲ դարերի գործ և անցման շրջան է կազմում առաջին մասնատուփի և հոտակերաց Ս. Նշանի միջև (ԺԳ դարի վերջ)։

Վերոհիշյալ մասնատուփերի առանձնահատկություններից գլխավորն այն է, որ երկուսն էլ լուսնեն ոչ մի դարդային լուծում, այլ, կերպարների ուղղաձիգ և շախմատային դասավորումով ստացվել է մի այնպիսի ներդաշնակություն, որը հազվագյուտ է և շատ քիչ անգամ է գտնվում ուրիշ որևէ նույնանման աշխատանքի վրա։ Օրինակ, վերջնենք էջմիածնի «Արագածի Ս. Նշանը» (ԺԷ դար), որտեղ կան թե՛ բուսական և թե՛ կենդանական մոտիվներ։ Այստեղ նրանց դասավորումը չի ստացվել այնպես, ինչպես այս երկու մասնատուփերի մոտ, հակառակ այն հանգամանքի, որ ոսկերչական արվեստի հիմքը կազմում են ոչ թե մարդկային կերպարների վերարտադրությունը, որն ավելի է հարմարվում քանգակազորություն, ուր արտահայտվելու հնարավորություններն ստանալով ավելի շատ են, այլ ոճավորված բուսական աշխարհը և մանավանդ մետա-

ղի բոլոր արվեստներին հատուկ լարային ձգված և ուղորուն ձևերը։

Երկու խոսք դրվագման արվեստի երկու գլխավոր ոճերի՝ խորաքանդակի և բարձրաքանդակի մասին։

Խորաքանդակն, ունի երկու վարիանտներ, որոնցից առաջինը հետևյալն է։ Արծաթ թերթը ձյութի վրա տաք վիճակում փակցնելուց հետո, մատիտով նկարում են թերթի երեսին, հետո դրվագում են շրջագծերը և ֆոնները, շատ թեթևորեն, առանց մակերեսը խախտելու, այսպիսով ցանկացած զարդը կամ տառերը ընթեռնելի դարձնելով։ Երկրորդ վարիանտը մի քիչ ավելի խորն է, սակայն այնպես են դրվագում, որ կտրվածքի մեջ թեթև անկյուններ են ստանում։ Սա նույնպես պահպանում է ընդհանուր մակերեսը (ցուցանմուշ Ա մասնատուփի) և շատ պատշաճ է գրքերի մետաղապատ կազմերի համար։ Սույն դրվագում կատարվում է երկու ընթացքով, առաջինը շատ թեթև, իսկ երկրորդը՝ մի քիչ ուժեղ և այսպիսով ստացվում են ստվերներ, որոնք ավելի ընթեռնելի են դարձնում դրվագումը քան առաջին վարիանտի դեպքում։

Երկրորդ ոճը բարձրաքանդակ դրվագումն է և կայանում է նրանում, որ առաջին երեսին մատիտով նկարելուց և դրվագիով գծերը շատ թեթև հարվածելուց հետո (այսպես էին դրվագում էրզրումի հայ ոսկերիչները) ստացվում է գծային շատ թեթև ունյաֆ երկրորդ երեսի վրա և այն ժամանակ ձյութի վրա են դարձնում երկրորդ երեսը և այնքան են հարվածում ցանկացած տեղերում, որ ստացվում են այն ընդհանուր բարձրությունները, որոնք կազմում են առանձնահատուկ ունյաֆներ և նորից առաջին երեսը դարձնելով, թեթև հարվածներով մշակում են մանրամասնությունները։ Սույն դրվագման երկրորդ և երրորդ պրոցեսները երբեմն կրկնվում են կարիքի դեպքում։

Արձանագրությունները ոչինչ չեն ասում այն մասին, թե որտե՞ղ է պատրաստված այս ցուցանմուշը։

Վերոհիշյալ երկու ցուցանմուշները, որոնք իրերահաջորդ դարերի գործեր են, նախորդում են այն դարին, որը մեզ տվել է հոտակերաց Ս. Նշանի նման հայ ոսկերչական արվեստի մի հույակապ գլուխգործոց և հանդիսանում են նրա նախատիպարները։





ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ



այլակալան մատենագրության մեջ բաժանական մեծ տեղ են զբաղում աստղագիտական բովանդակությամբ գրքերն ու ձեռագրերը: Համաշխարհային աստղագիտության մեջ ընդհանրապես և հայ աստղագիտության զարգացման մեջ մասնավորապես մեծ ավանդ ունեն Անանիա Շիրակացին, Հովհաննես Սարկավազը, Զոսյայեցին, Ղուկաս Վանանդեցին և ուրիշները: Եթե պատմության հեռավոր դարերից պահպանվել են ու մեզ հասել բաժանական մեծ թվով ձեռագրեր, ապա այդ նույնը չի կարելի ասել նաև հայկական աստղագիտական գործիքների մասին: Եվ դա բնական է. բազմաշարժար հայ ժողովրդի նյութական մշակույթի հուշարձանները պարբերաբար կողոպտվել ու ոչնչացվել են օտարերկրյա զավթիչների կողմից:

Որ հայերը շատ հին ժամանակներից օգտվել են աստղագիտական գործիքներից, այդ մասին իրենց աշխատություններում նշում են բազմաթիվ մատենագիրներ. այդ մասին են վկայում նաև այն փաստերը, որ մեզ են հասել բազմաթիվ աստղագիտական տվյալներ և աղյուսակներ, որոնց չափումները անհնար կլինեն առանց ճշգրիտ դործիքներից օգտվելու:

Մեզ հասած հայտնի հին հայկական աստղագիտական գործիքները այնքան քիչ ինչ, որ կարելի է մատենների վրա հաշվել: Դրանցից են մի շարք եկեղեցիների ու տաճարների վրա պահպանված արեգակնային ժամացույցները և Մխիթարյան միաբանության աստղագիտարանի մի քանի գործիքներ: Վերջին տարիները հայտնաբերվեցին հին հայկական աստղագիտական երկու գործիք: Ես¹ Դրանցից մեկը Ղուկաս Վանանդե-

ցու պատրաստած աստղաքիան (ուստուլար) է, իսկ մյուսը անհայտ հեղինակի լուսնացույցը: Կանգ առնենք դրանց նկարագրության վրա:

Ղուկաս Վանանդեցին եղել է ժեղարի վերջերին ու ժեղարի սկզբներին Հուլանդիայի Ամստերդամ քաղաքում գործող հայկական տպարանի աշխատանքների ակտիվ մասնակցողներից: Ինչպես ինքը՝ Ղուկասը, այնպես էլ մյուս աշխատակիցները Գողթան գավառի (այժմյան Նախիջևանի) Վանանդ դուդի բնակիչներից էին:

Իր ժամանակակից հեղինակների և մասնավորապես հայտնի հայագետ Շրոդերի վկայությամբ, Ղուկաս Վանանդեցին փիլիսոփա էր և շատ լավ գիտեր մի շարք լեզուներ, հատկապես լատիներեն: Ղուկասը ծանոթություն էր հաստատել Ամստերդամ եկած հուլակավոր փիլիսոփա Լայբնիցի հետ:

1695 թվականին վանանդեցիները լույս են ընծայում «Համատարած աշխարհացույց» մեծագիր քարտեզը: Քարտեզի վրա նշված հիշատակությունից երևում է, որ այն պատրաստվել է հուլանդացի երկու հմուտ վարպետների ձեռքով: Այդ քարտեզը հայ քարտեզագրության մեջ առաջինն էր և այն կազմելու համար վանանդեցիներից մեծ աշխատանք էր պահանջվում: Նրանք ստիպված էին հավաքել հայ գրականության մեջ մինչ այդ եղած իրենց անհրաժեշտ տեղեկանքները և դրանք լրացնել բազմաթիվ նորերով:

Այդ գործի մեծ անհրաժեշտությունը, խնդրվում է բոլոր ընթերցողներին՝ հայկական աստղագիտական որևէ գործիքի (լինի դա արեգակնային կամ այլ տիպի ժամացույց, փայտի կամ մետաղի վրա փորագրված օրացույց, փայտյա կամ օպտիկական հեռագիտակ, շափողական գործիք, աստղագիտական քարտեզ կամ եկար) մասին տեղեկություն ունենալու դեպքում հայտնել: Երևանի Պետական համալսարանին, Ընդ որում ցանկալի է, որ նամակում հեռավորության սահմաններում տրված լինի գործիքի լուսանկարը և նկարագրերը:


¹ Անկասկած այդպիսի գործիքներ գոյություն կունենան տարբեր երկրների թանգարաններում, եկեղեցիներում և մասնավոր մարդկանց մոտ: Հայ աստղագիտության պատմությունը ամբողջությամբ վերականգնելու համար, անհրաժեշտ է այդ գործիքների մասին ուսույց տեղեկություններ հավաքել, Հաշվի առնելով

Անունների ուղղագրությունն և նրանց մի մասին հայկական իմաստավորումը տալու համար, անհրաժեշտ է լինում քարգամանություններ կատարել լատինական, սլավոնական, լեռնական, արաբական և շատ այլ լեզուներից: Գիտք է առնել, որ այդ դժվարին խնդիրը բավական հաջող կերպով վանանդեցիների կողմից լուծվեց: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ մի քանի անուններից բացի, քարտեզում նշված ծովանունների, օվկիանոսների, աշխարհամասերի և այլ

դական ծովը և նրան առընթեր երկրները, Ամերիկայի արևելյան ափերը և այլն:

Այն ժամանակներում աշխարհի կողմերը նշելու համար քարտեզի վրա, տարբեր տեղերում, նկատվում էին կողմնացույցներ: Նման կողմնացույցների հանդիպում ենք նաև «Համատարած աշխարհացույց»-ի վրա: Համարելով, որ քարտեզը առաջին 150 սմ-ի փակցված է կտավի վրա:

Այս քարտեզը ոչ միայն հայկական առաջին աշխարհագրական քարտեզն է, այլև հայ-



1395 ՌԱՍՏԱՆԻ ՎԱՆԱՆԳԵՐՈՒՄԻ ՍԱՍՆԵՐԳԱՄՈՒՄ ԼՈՒՅՍ ԸՆԴԱՅԱՏ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ»-Ի ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍԸ

անուններ մինչև այժմ էլ (քարտեզ կաղմկույց ավելի քան երկու և կես դար հետո) զրկվել առանց փոփոխության դործ են ամփում:

Քարտեզը տպված է մի դույնով, սակայն այն բավական պարզ է և բնթեղնելի: Եիշտ է, աշխարհամասերի նորոգմանը որոշ զեպերում իրականից բավական շեղումներ են տալիս, սակայն դրանք վանանդեցիների սխալները չեն և բխում են ժամանակի աշխարհագրության ու ղեղեղելիքի զարգացման աստիճանից: Քարտեզի վրա բավական մեծ ճշտությամբ պատկերված են Միջերկ-

կական առաջին տպագիր երկնային քարտեզը:

Քարտեզի վրա, աշխարհամասերը ցույց տվող մեծագիր կիսապնդների պատկերից վերև, միջին մասում տրված է աստղային երկրների քարտեզը (հարավային ու հյուսիսային կիսագնդերը): Համաստեղությունների պատկերներին հետ միասին, Այդ քարտեզի վրա տրված են Այծեղջյուրի, խեցգետնի արեգադարձերը, բևեռը, հասարակածը և այլն: Տրված են նաև 12 շրջաններ, Համաստեղությունների նկարները բավական նուրբ են

կատարված և յուրաքանչյուրի վրա դրված է իր անունը:

Համաստեղծությունների մեծ մասը իր նախկին անվանումները մինչև այժմ պահպանել է: Նրկու, քառից կազմված անուններից մի մասի անունը այժմ արտահայտվում է մի բառով: Այսպես, սրինուկ, զնույի Աղավ-իս-ն այժմ դարձել է ուղղակի «Աղավին», «Քեան էրիզան»-ը՝ «Էրիզան» և այլն: Ժամանակակից հայերենում դործածվող համաստեղծությունների անունների մի մասը կրում է յատկանական անուններ: Այսպես Հերկուլես, Պերսեյ, Օրիոն և այլն: Այդպիսի անունները, որոնք հունական գիցարանական անունների հետ են կապված, հին հայերենում այլ կերպ են կոչվել: Օրիոնը կոչվել է Մարտիկ, Հերկուլեսը՝ Մեկնի և այլն: Բավական փոփոխված են Պտտան—Մեծ Արջ, Արջապան—Վոլոպան, Անդդ—Կարապ, Շրինձեկ—Փոքր Արջ և այլ անուններ:

Աստղային երկնքի նշված քարտեզից անմիջապես ներքև տրված է Պտղոմեոսի տիեզերքի դեղնեներկ (երկրակենտրոն) սխեմայի սխեման: Կենտրոնական մասում նկարված է երկրագունդը, նրա շուրջը պտտվում են (շրջանագծերով) Լուսինը, Փայլածու, Արուսյակը (Լուսարբեր), Հրատը, Լուսնթաղը, Երեակը, Երևակի ուղեծրից դուրս նկարված են աստղերը: Այդ յոթ երկնային մարմինների անունների կոդքին գրված է՝

Լուսին— դաուրա 29

Փայլածու— դամ մի

Լուսարբեր— դամ մի

Արեգակն— դամ մի

Հրանտ— դամ 2

Լուսնթաղ— դամ 12

Երևակ— դամ 30

Բերված խմբից հրեում է, որ նրանք նշված լուսատուների տեսանելի շարժման պարբերություններն են: Ընդ որում ներքին մոլորակների (Փայլածու, Լուսարբեր), ինչպես նաև Արեգակի համար արև համաստեղ է մեկ տարվա, իսկ Հրատին՝ 2, Լուսնթաղին՝ 12 և Երևակին՝ 30 տարվա Լուսնի պարբերությունը, իհարկե, տրված է սրերով:

«Համատարած աշխարհացոյց»-ի եզրերում տրված են նաև հունական գիցարանական նկարներ՝ կապված տարվա 4 եղանակների հետ:

Քարտեզի հրատարակման հաջորդ տարում յուրյ է տեսնում «Թանայի համատարածի աշխարհացոյցի մերոյ նորածնի... Շարադր. Ի Ղուկասէ ապաշնորհ ջահրնկալէ Վանանդեցոյ» աշխատությունը, որտեղ տրված է քարտեզից ոգտվելու մանրամասն բացատրությունը: Ի միջի այլոց այդտեղ տրված է

նաև Կոպեոնիկոսի հեղիոցենտրիկ (արեակենտրոն) սխեմայի նկարագրությունը:

1695 թվականին յուրյ է քննարկում Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ը, որով ոչ միայն հայ ժողովրդի գաղականներն է հնարավորություն տրվում իմանալու և ոգեշնչվելու իր քաղաքարյան մշակույթի պատմությամբ, այլև այն հետազայում թարգմանվում է օտար լեզուներով և մտնում համաշխարհային մշակույթի պատմության զանաքանք:

Ամստերդամի տպարանում իր գոյություն ժամանակաշրջանում (1695—1717 թ. թ.) տպագրվում են մի ըսնի տասնյակ գրքեր ու բրոշյուրներ, որոնց մեջ կան նաև աստղագիտական բովանդակությամբ գործեր, այն է՝

1. «Համաձայնութիւն հնդկտեսակ ամսոց Հոռմայնցոյ, Արարիայի, Հայոց, Հրէից և Տաճկաց» (1698 թ.):

3. Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիներ, «Բնարանութիւն իմաստասիրական կամ տիրերարանութիւն, որ է քան յազազ տարերաց և տարերական որակութեանց» (1702 թ.):

3. Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիներ, «Ոսկեայ դուռն զպրտտուն վասն դեռակիրթ և խակալարծ մանկանց Հայկազունեաց» (1699 թ.):

Երեք տարի առաջ գտնվեց նաև Ղուկաս Վանանդեցու աստղագիտական մի գործիք՝ աստրոլաբիա, որը պահվում է Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղագիտարանում:

Աստրոլաբիան (կազմված է աստրոնի երկնային մարմին և լարի՝ վերցնում են խոսքերից) գործիք է, որն սզտագործվել է աստղագիտական և գեոգեդիական դիտումների համար: Առաջնորդում ենման դիտումների համար օգտագործվել են արմիրլար սֆերաներ: Դրանք մեկը մյուսի մեջ հագցված համակենտրոն մի շարք շրջաններ էին, որոնց հարթությունները համընկնում էին խավարածրի, հասարակածի, հորիզոնի և նրանց ուղղահայաց հարթությունների հետ: Շրջաններն ունեին անկյունային բաժանումներ և դիտման հանգամանքներ: Հետագայում արմիրլար սֆերաները պարզեցվեցին և վերածվեցին աստրոլաբիաների: Դրանք մեծ փափով գործ են ածվել արևելյան աստղագետների և մասնավորապես արաբների կողմից: Ավելի ուշ աստրոլաբիաներ հանդիպում են նաև Արեմուտքում, ներկա գործիքի գտնվելը, ինչպես նաև հին հայկական ձեռագրերում եղած նշումները ցույց են տալիս, որ այդպիսիները գոյություն են ունեցել նաև հայերի մոտ:



ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆՊԵՏՈՒ ԱՍՏՐՈԼԱԲԻԱՅԻ
ԱՌԱՋԻՆ ԵՐԵՎԱՆ

Աստրոլաբիան մի սկավառակաձև գործիք էր, որի մի երեսում (որը կոչվում էր *dorsum astrolabii*՝ աստրոլաբիայի մեջք) կային բաժանումներ և դիտման հարմարանք՝ ալիդադա, իսկ մյուս երեսում (*mater astrolabii*) տրվում էր պլանիսֆերան, այսինքն երկնային սֆերայի տարրեր շրջանների ստերեոգրաֆիկ պրոյեկցիաները:

Ղուկաս Վանանդեցու աստրոլաբիան բաղկացած է հետևյալ գլխավոր մասերից. 1. աստրոլաբիայի կորպուս, 2. երեք սկավառակներ՝ պլանիսֆերաներ, 3. ցանց, 4. ալիդադա:

Աստրոլաբիայի կորպուսը պղնձյա մի սկավառակ է, որի տրամագիծը հավասար է 120, իսկ հաստությունը՝ 5 միլիմետրի: Այն ծառայում է մնացած մասերն իր վրա ամրացնելու համար: Կորպուսի վրա գտնվող զանազան բաժանումները հնարավորություն են տալիս նաև տարրեր լափումներ կատարելու: Վերևում կա օղակ, որի օգնությամբ աստրոլաբիան հարմար կերպով կարելի է ուղղաձիգ կախել: Կորպուսի մի երեսում, օղակի տակ, գրված է ժի վայելումն Գէորգ Վանանդեցու: Սկավառակի եզրում շրջանաձև աստիճանային բաժանումներ են փորագրված: Սկզբին այն տրված է տառերով, ինչպես հայտնի է, առաջներում հայերը թիվը գրելու փոխարեն օգտագործել են հայկական այբուբենի տառերը: Առաջին ինը տառերը համարվել են միավորներ, այնուհետև

հաջորդ ինը տառով նշանակվել են տասնավորները, երրորդ իննյակով՝ հարյուրավորները, իսկ չորրորդով՝ հազարավորները: 10.000-ի համար հայերը հատուկ նշան են ունեցել, որը անկունաձև էր և դրվում էր տառի վերնից: Այն անվանվում էր «բյուր»: Այդ նշանը համապատասխան տառի վրա դնելով, մենք կստանանք աղյուսակի այդ տառին համապատասխանող թիվը բազմապատկած տաս հազարով:

Կորպուսի մյուս երեսի (մեջքի) վրա, օղակից անմիջապես ներքև, գրված է պատրաստողի անունը և ազգանունը՝ ՇՂ—Կ. Վանանդեցու: Ինքը՝ սկավառակը հորիզոնական և ուղղագիծ տրամագծերով բաժանված է չորս բառուղի: Համակենտրոն 5 օղակների վրա համապատասխան բաժանումներ են նշված: Ամենաարտաքին օղակի միայն վերին կես մասն է մասերի բաժանված:

Եզրից հաշված երկրորդ օղակը բաժանված է 12 մասի:

Երրորդ օղակը բաժանված 12 մասի, որոնցում գրված են կենդանաշրջանի համաստեղությունների անունները՝ Ջրհոս, Զուկ, Խոյ, Ծուլ, Երկաւոր, Խեցգետին, Արիծն, Կոյս, Կշիռ, Կարիճ, Աղեղնավոր, Այծեղջիւր: Հինգերորդ օղակում տրված են տարվա 12 ամիսների անունները, իսկ չորրորդում ամսաթվերը 5-ական օրով հաշված:

Սկավառակի կենտրոնական մասում փորագրված է քառակուսի և նրա վերին ձախ ու ստորին երկու քառորդներում բաժանումներ են կատարված:

Արկղում գտնվող երեք պղնձյա կլոր թիթեղները կամ պլանիսֆերաները երկու երեսի վրա տարբեր լայնությունների համար տարված զանազան շրջանների ու կետերի ստերեոգրաֆիկ պրոյեկցիաներն են ներկայացնում: Այդ պրոյեկցիաներն ստացվում են հետևյալ կերպ. ենթադրենք ունենք մի սֆերա, որի վրա տարված են հասարակածը, խավարածիրը, զուգահեռականները, արևադարձները, տվյալ լայնության համար հորիզոնը, գեներթը, ինչպես նաև հարավի ու հյուսիսի կետերը և այլն: Դիցուք դիտողի աչքը գտնվում է այդ սֆերայի հարավային ընդունում, և նշված բոլոր շրջաններն ու կետերը պրոյեկտվում են հասարակածային հարթության վրա: Ստացված պատկերն անվանվում է ստերեոգրաֆիկ պրոյեկցիա: Այդ եղանակով ստացված պրոյեկցիայում սֆերայի բոլոր շրջանները պրոյեկտվում են որպես շերտաններ (և ոչ էլիպսներ) և, բացի այդ, պրոյեկտման ժամանակ զծերով կազմված անկյունները են պահպանվում են: Այսպիսով, սֆերայի հարթ պրոյեկցիան կարծես պահպանում է սֆերայի նմանությունը, որի

պատճառով էլ այդ թիթեղներն անվանում են պլանիսֆերաներ:

Պլանիսֆերայի հարավային մասում գտնվող խիտ շրջանները հորիզոնին զուգահեռ շրջաններն են:

Պլանիսֆերաների հյուսիսի կեսում ձեռք է պատրաստված, որի մեջ կորպուսի սեպի բնկնելով, աշխատանքի ժամանակ պլանիսֆերաները պահվում են կորպուսի նկատմամբ անշարժ:

Ցանցը ևս հրկնային ֆերայի ստեղծողաֆիկ պրոյեկցիա է ներկայացնում: Նրա վրա պատկերված է կենդանաշրջանի 12 համաստեղությունների անուններով: Բազի դրանից, ցանցի վրա պատրաստված են 30 տերևների պատկերներ, որոնցից ամեն մեկը ցույց է տալիս մի աստղի դիրքը: Որոշ աստղերի համար անունները բոլորովին չեն նշված, իսկ մի մասին էլ նշված է ըստ կենդանակերպի մասի: Այսպես, օրինակ, գրված է՝ «Ձեռն Կուսին», «Պարանոց Օմի», «Սիրտ Առիծին», «Աչք խոյի» և այլն:

Ցանցի վրա տարված է մի տրամսոգիծ: Այդ տրամագծի և կենդանաշրջանի հատման կետերը դարձանալին և աշնանային գիշերահավասարի կետերն են:

Ցանցը պատրաստված է այնպես, որ նրա անցքերից ազատ կերպով հնարավոր լինի կարդալ նրա տակ գրված պլանիսֆերայի գույմունքները: Ցանցը կենտրոնում անդռնի, որի տրամագիծն ավելի մեծ է, քան նրանով անցնող առանցքինը, այսինքն՝ այն ազատ կերպով կարող է պտտվել: Պտտումը հեշտացնելու համար նրա վրա հատուկ ցրցւմած է պատրաստված: Ցանցի վրա կա բռնակ, որը ջրակացած ժամանակ միացնելով առանցքի սեպի հետ, հնարավոր է զտունում առանցքը պտտելիս ցանցը ևս պտտել, և բնդհակառակը:

Ալիդադան ներկայացնում է պղնձյա ըսրակ ձող, որի երկու ծայրերում ուղղահայաց կերպով երկու հարթակներ են ամրացված: Հարթակներից լուրսաքանյուրի վրա, դիտման համար, մեկական անցք և ձեռք կու: Կենտրոնական մասում ալիդադան ունի կլոր անցք, որի միջով անցնում է գոծիքի առանցքը: Ալիդադայի թե՛ մեկ և թե՛ մյուս կողմի վրա ամբողջ երկայնքով եզրերից մեկը թեք է պատրաստված և ծառայում է ալիդադայի դիրքին համապատասխանող բաժանմունքը որոշելու համար:

Աստրոլաբիայի միջոցով լուծվում են աստղագիտական զանազան խնդիրներ՝ լուսատուների բարձրությունը, կենդանաշրջանի համաստեղությունների դիրքը՝ գիշերվա տարածի ժամերին, տեղի աշխարհագրական լայնությունը, որոշվում են առարկաների հե-




ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆԴԵՑՈՒ ԱՍՏՐՈԼԱԲԻԱՅԻ
ԵՐԿՐՈՐԷ ԵՐԵՍԸ

սավորությունն ու բարձրությունը, տարվա տվյալ օրվա համար Արեղակի դիրքը խավաբածրի վրա, լուսատուների կողորհնատները, օրվա ժամը, տվյալ օրվա ցերեկվա և գիշերվա տևողությունները, աշխարհի կողմերը, թե որքան ժամանակ է մնացել մինչև արևածագը և բազմաթիվ այլ խնդիրներ:

Ղուկաս Վանանդեցու աստրոլաբիայի ուսումնասիրության ժամանակ մեր ձեռքի տակ էր գտնվում նաև պարսկա-արաբական աստրոլաբիաներից մեկի նկարագրությունը՝ համապատասխան գծադրերով հանդերձ: Այն պատրաստված էր ճորտ Մահմեդ Ջեմանի կողմից 1678 թվականին, այսինքն Ղուկաս Վանանդեցու գործունեության ժամանակաշրջանից ոչ շատ առաջ: Սակայն պետք է նշել, որ հայկական և տարրկա-արաբական այդ աստրոլաբիաների միջև բավական տարբերություններ կան:

Ղուկաս Վանանդեցու աստրոլաբիայի համեմատությունը պարսկա-արաբական աստրոլաբիայի հետ ցույց է տալիս, որ այն բավական պարզեցված է և դորձածության համար հարմար դարձված: Այդ տեսակետից կարելի է ասել, որ ներկա հայկական աստրոլաբիան իր ժամանակաշրջանի բավական հաջող գործիքներից է եղել, իսկ որպես հին հայկական աստղագիտական գործիք, հայկական աստղագիտության պատմության հա-



ՄԱՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՈՒՆԱԿԱՆ ԲԱՄԱՑՈՒՅՑ

(Պեղակաճ մատենադարան, ձև. X 3880)

մար մեծ կարեւորութիւն է ներկայացնում, Հայկական ՍԵՐ Պետական Մատենադարանի X 3880 ձևադրումը գտնվում է մագուղայից պատրաստուած մի դոճոճ ատանց բացատրութեան և նրանից օգտվելու կանոնների նշանը: Ընագրական տվյալների համաձայն, այն մեղ է հասել մտաւարտայան ժԴ դարից: Գործիքի մանրամասն ուսումնասիրութիւնը և նրա համեմատութիւնը այլ ձեռագրերում եղած նույնատիպ գործիքների հետ (որոնց համար տրված են նկարագրութիւններ ու նրանցից օգտվելու կանոններ) ցույց տվեց, որ նրանով կարելի է որոշել գիշերվա ժամը (այսինքն՝ օգտագործել որպէս լուսնային ժամացույց), ինչպէս նաև Լուսնի դիրքը համաստեղծութիւնների նկատմամբ: Հայկական ներկա լուսնայույցը ռադեւցած է իրար դրա գրված, տարրեր տրամագծերի, երեք համակենտրոն շրջանակներից: Այդ շրջանակները կարելի է իրար նկատմամբ պտտել թելից պատրաստված ընդհանուր առանցքի շուրջը: Ամենից ներքե գրված է ամենամեծ տրամագծով շրջանակը, այնուհետև՝ միջանկյալ, և վերջապէս վերինից գրված է փոքր շրջանակը:

Ստորին շրջանակի շառավիղը հավասար է 110 միլիմետրի: Այն շառավիղներով բաժանված է 12 մասի, յուրաքանչյուր մասը, իր հերթին, շրջանային աղեղներով բաժանված է 5 մասի: Արտաքին մասում գրված է ամիսը և ամսաթիվը: Նրա կողքին նկարված է կենդանաշրջանի այդ ամսին համապատասխան համաստեղծութեան նշանը, երկրորդ

օղակում համաստեղծութեան անունը: Երրորդ օղակում տրված է այդ նույն ամսին համապատասխան հրեական անունը և ամսվա տառին օրը (արտաքին օղակում տրված ամսաթիվը համապատասխանում է հրեական օրացույցի տվյալ ամսի տառին օրվան): Այնուհետև չորրորդ օղակում տրված են հայկական այբուբենի իրար հաջորդող 6 տառեր:


Երեքին շրջանի վերին օղակում հաջորդաբար տրված են 7 լուսատուների նշանները՝ յուրաքանչյուր ամսվա համար երեքական: Այսպէս, հունվարի համար տրված են Մայրածուի, Լուսնի, Երեւակի, փետրվարի համար՝ Լուսնադի, Հրատի, Արեգակի, մարտի համար՝ Լուսաբերի, Փայլածուի, Լուսնի նշանները, և այսպէս շարունակվում է մյուս ամիսների համար:

Ամենայն հավանականությամբ, այդ լուսատուների յուրաքանչյուր ամսում 3-ական տրված նշանները ամիսը երեք մասի բաժանելու նշանակութիւն ունի: Դրանում մենք համոզվում ենք նաև նրանով, որ գործիքից օգտվելու ժամանակ նրանք այլ նպաստակի չեն էլ ծառայում և գիշերվա ժամը կարելի է որոշել, անկախ երկնքում այդ լուսատուների ունեցած դիրքից, իհարկէ, որոշակի ժամանակի համար գիշերվա ժամը կարելի է կլինել որոշել նաև երկնքում այդ լուսատուների ունեցած դիրքերը հաշիւ առնելով, բայց քանի որ այդ 7 լուսատուները տարբեր տարիներում աստղային երկնքում տարբեր դիրքեր են գրավում (հենց դրա համար էլ նրանցից հինգը կոչվել են ամուրականներ), ուստի, եթե գործիքն օգտագործվում է ոչ մեկ՝ որոշակի տարվա համար, առանց ամեն անգամ այդ լուսատուների դիրքերը նախօրոք իմանալու (որ շատ ավելի զմար խնդիր է, քան գիշերվա ժամը որոշելը), ավելի խնդիր լուծման համար այն օգտագործելն անհնար է:


Երկրորդ շրջանի տրամագիծը հավասար է 63 միլիմետրի և այն բեկնում է առաջին շրջանի 5-րդ օղակի ներսում: Այս շրջանի եզրը բաժանված է 30 մասի, որտեղ ժամացույցի սլաքի պտտման ուղղութեամբ գրված են արաբական 1-ից մինչև 30 թվանշանները: Այդ թվանշանները ցույց են տալիս Լուսնի հասակը՝ օրերով հաշված:


Երկրորդ շրջանի կենտրոնական մասը սեւացրած է, բացի մի փոքրիկ շրջանից, որն անցնում է առաջինի կենտրոնով և 15-ը ցուցմունքով, այսինքն նրա շառավիղը հավասար է այդ սեւացրած մասի շառավիղի կեսին (20 մմ.), Այդ փոքրիկ շրջանի մեջ նկարված են 11 աստղեր:

Երկրորդ շրջանի սանդղակի այն մասում, որտեղ օկվում է նորալուսինը, պատրաստ-




ՍՈՒՐԵՆՈՍՏԱՆԻ ԵՐԵՄԻԱՍՏԵՍ ԵՐԵՎԱՆԻ





ՍԳՈՐ ԶԱՐԱԳԱՎԱՆՔԸ ՏՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ԿՈՂՄԻՑ, ԻՇԽԱՆ ԿԱՍԱԿԱՆՈՒՆԻ ՊԱՏՎՈՐԻՆ



ված է դուրս ընկած ցուցանակ, որը հասնում է մինչև առաջին շրջանի արտաքին օդակր։ Այդ ցուցանակի եզրը ցույց է տալիս երկրորդ շրջանի տվյալ դասավորության ժամանակ առաջին շրջանի համապատասխան ցուցմունքները։

Երրորդ շրջանը, որը դրված է նախորդ երկուսի վերին, առանց նշումների, 53 միլիմետր տրամագիծ ունեցող սկավառակ է, նրա եզրի մի մասը թառանկյունաձև կտրված է, որի տակ երևում է երկրորդ շրջանի՝ Լուսնի հասակը ցույց տվող սանդղակի միայն մի օր։ Սանդղակի մնացած թվերը ծածկված են սկավառակով։ Այդ թառանկյունաձև կտրվածքի հակադիր կողմում սկավառակը շրջանաձև կտրված է, ընդ որում շրջանագիծն անցնում է սկավառակի կենտրոնով և ունի 20 միլիմետր տրամագիծ։ Այն դեպքում, երբ թառանկյունաձև կտրվածքը դրվում է երկրորդ շրջանի ցուցանակի ուղղությամբ, սկավառակի կտրված շրջանի տակ ընկնում է երկրորդ շրջանի աստղերով շրջանը։

Հայկական ներկա լուսնացույցի արտաքին երկու օղակների մի մասը պատված է։ Սակայն, դժվար չէ այդ մասը վերականգնել, օգտվելով այդ օղակների մնացած ամիսների ու համաստեղությունների հաջորդականությունից։ Պատված մասում, «Աղար Ա»-ի վերևում երկրորդ օղակում գրված է եղել «Զուկն», իսկ առաջին օղակում՝ «Փետրվար ԺԷ», իսկ նրա կողքին՝ «Զկնեբ» համաստեղությունն է միայն «Մարտ Ի» գրությունը։

Գիշերվա ժամը Լուսնի միջոցով հաշվելու համար անհրաժեշտ է իմանալ Լուսնի հասակը և տվյալ պահին Արեգակի դիրքը երկրնում։

Լուսնի հասակը կարելի է հեշտությամբ որոշել ըստ նրա փուլերի՝ լուսավորված մասի մեծության և եզրուրների դասավորության։ Այդ հասակի հիման վրա երկրորդ շրջանի սանդղակի համապատասխան թվի հեռավորությունը սլաքից միաժամանակ կլինի Արեգակից Լուսնի ունեցած անկյունային հեռավորությունը։

Մեր գործիքը որպես լուսնային գնդժն օգտագործելիս, անհրաժեշտ է նշեմքեր և ղեկտեմքեր ամիսների եզրում գտնվող խաչն ուղղել ղեպի հյուսիս և ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ ըստ ամիսների պրե 2, 4, 6, 8, 10, 12 թվերը, և այնուհետև նորից այն կրկնել մյուս մասի համար։

Միջակայա ժամերի ու նրանց մասերի համար պետք է օգտվել այդ սեկտորներում դրված նշումներից։ Նշման արժանի է այն հանգամանքը, որ Լուսնից առաջացած ստվերի ուղղությունը որոշելու համար, կարելի է օգտվել նաև արեգակնային ժամացույցից, եթե այդպիսին կա մեր ձեռքի տակ։

Մենք որոշեցինք Լուսնի ստվերի ուղղությունը՝ «Լուսնի ժամերը», բայց չէ՝ որ ժամանակի մեր հաշվումները կապված են Արեգակի շարժման հետ։ Անցումը կատարվում է հետևյալ կերպ։ Գործիքի կենտրոնում նրա հարթությանը ուղղահայաց կանգնեցված ձողի առաջացրած ստվերի ուղղությամբ դնում ենք երկրորդ շրջանակի սլաքը և առաջին երկրորդ շրջանակները անշարժ պահելով, երրորդ շրջանակի ուղղահայունաձև կտրվածքի տակ դնում Լուսնի հասակը ցույց տվող ցուցմունքը։ Այս դեպքում այդ նույն կտրվածքի դիմաց առաջին շրջանակի ժամային ցուցմունքը ցույց կտա տվյալ պահի արեգակնային ժամանակը։

Հայկական ներկա լուսնացույցի նման գործիք նկարագրված է նաև գերմանական աստղագետ Ապիանու «Կոսմոգրաֆիա» աշխատության մեջ, որը 1621 թվականին հայերեն թարգմանվել է Հովհաննես Անկյուրացու կողմից և պահպանվում է Հայկական ՄՍՌ Պետական մատենադարանի № 1780 ձեռագրում։ Ապիանու նկարագրածի և այս գործիքի միջև որոշ տարրերություն կա։ Այդ տարբերությունը նախ երևում է նշված երեք շրջանների դասավորությունից։ Բացի այդ, Ապիանու մոտ այդ գործիքի հետ օգտագործվում է նաև կողմնադույց, ինչպես նաև պատրաստված է հատուկ սանդղակ՝ առարկայի ստվերի ուղղությունը որոշելու համար։ Այդ լրացուցիչ հարմարանքները, անկասկած, որոշ չափով հեշտացնում են լուսնային ժամացույցից օգտվելը, սակայն, գործնականում, առանց դրանց էլ մեծ դժվարություն չի ներկայացնում գործիքի միջոցով ժամը որոշելը։

Մասնագիտական և գիտա-մասսայական դրականության մեջ, ժամանակի չափման հարցերն ուսումնասիրելիս, միշտ բերվում է արեգակնային ժամացույցի նկարագրությունը։ Վատ չէր լինի, եթե դրա հետ միասին բերվեր նաև լուսնային ժամացույցի սխեման։ Դրա համար հարկավոր էր միայն մեր նկարագրած գործիքի երկրորդ և երրորդ շրջանակներն ավելացնել հասարակածային ժամացույցին։



Հ Ա Ն Գ Ի Ս Տ
ՀՈԳԵՇԵՆՈՐԸ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԾԱԳՐԱԳՈՒՅՆ
ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆԻ
(1881—1962)



Մարտի 28-ին, սրտի հրկարատե հիվանդությամբ հետո, իր մահկանացուն կնքեց Մայր Աթոռի միաբան Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը։

Հանգուցյալը ծնվել է 1881 թվականի հունիսի 21-ին, Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ գյուղում, քահանայի ընտանիքում։ Սկզբնական կրթությունը նա ստանում է ծննդավայր գյուղի և ապա Երևանի ծխական դպրոցներում։ 1892 թվականին ընդունվում է Թբիլիսիի Ներսիսյան դպրանոցը և 1898 թվականին ավարտում լրիվ դասընթացը։

1898—1900 թվականներին պաշտոնավարում է Մայր Աթոռում որպես Սինոդի գրագիր։ Ապա, տեղափոխվելով իր ծննդա-

վայրը, 1902—1906 թվականներին աշխատել է որպես ուսուցիչ։

1906 թվականին, Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյանի ձեռամբ, ձեռնադրվում է քահանա և պաշտոնավարում զանազան շրջաններում։

1947 թվականին, որպես այրի քահանա, ընդունվում է Ս. Էջմիածնի միաբանության շարքերը։ Ապա նշանակվում է Շիրակի թեմի առաջնորդ։ 1949 թվականին ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան։

Գարեգին ծայրագույն վարդապետ 1953—1955 թվականներին պաշտոնավարում է Բաքվում, որպես առաջնորդ։ 1955 թվականին նշանակվում է Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմերի առաջնորդ, ուր պաշտոնավարում է մինչև 1961 թվականը։

Հանգուցյալի հուղարկավորությունն ու թաղումը կատարվեցին մարտի 31-ին, Առավոտյան սուրբ պատարագ մատուցվեց Էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում։ Պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր ձեռնարանի ուսանողությունը և պաշտոնեությունը։

Հանգուցյալի վերջին օծումը կատարեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, որը և նախագահեց թաղմանական արարողության և խոսեց դամբանական։

Պատարագից հետո թաղման թափորը ուղղվեց դեպի Ս. Գայանեի վանքը, որտեղ հանգուցյալի աճյունը ամփոփվեց վանքի բակի միաբանական գերեզմանատանը։

Այնուհետև Մայր Աթոռի սեղանատանը տրվեց հոգեճաշ։ Հանգուցյալի հիշատակը ոգեկոչեցին գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Հայկազուն արքեպիսկոպոսները, հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետը, հոգեշնորհ Տ. Գրիգոր, Տ. Մեսրոպ և Տ. Ներսես արեղաները, արժանապատիվ Տ. Մկրտիչ և Տ. Նորայր քահանաները։

Հանգիստ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետի հոգուն։





Վ Ն Ա Ս Ա Բ Ե Ր Մ Ի Գ Ի Ր Ք

Բելլուրի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդ Հ. Սահակ եպիսկոպոս Կոզյանը յույս է ընծայել մի աշխատութիւն «Հայոց եկեղեցին» խորագրով, որի 792 էջերի մէջ հեղինակը ճգնում է ապագոյցել, թե՛

ա. Հայաստանյայց եկեղեցին առաքելական ծագում չունի:

բ. Հայաստանյայց եկեղեցին բաժանվել է ուղղափառ հավատից և դադարել իսկական քրիստոնյա եկեղեցի լինելուց (ըստ նրա՝ Զ դարից սկսած):

գ. Հայաստանյայց եկեղեցին ընկել է մոլորութեան մէջ, դառնալով ինքնազուիս և մնալով անկախ՝ Հոռոմի գահից ու գահակալից, որ ըստ նրա՝ աշխարհի վրա միակ փոխանորդն է Քրիստոսի:

դ. Հայ ժողովուրդը եղծել է քրիստոնեական հավատը՝ իր եկեղեցուն տալով ազգային նկարագիր ու դիմագծութիւն, միմյանց հետ շփոթելով կրոնականն ու ազգայինը: Հեղինակը առանձին հաճութեամբ մեղադրում է Հայ եկեղեցուն իբրև ազգամուս:

Ահա ուրեմն, համի Տյառն 1963, կաթողիկէ դավանութեան մի ներկայացուցիչ՝ Հ. Սահակ Կոզյան, որ տքնում է ու միտք մաշում ամիսներ ու տարիներ, 330 հայ և օտար գրքեր է պրպտում (գեթ ուղում է այդ տպավորութիւնը թողնել), հաստատելու համար վերոհիշյալ «ճշմարտութիւններ»-ը Հայաստանյայց եկեղեցու նկատմամբ... հազար և վեց հարյուր տարի հետո:

Թվում է, թե Հ. Կոզյանների համար այլևս լուծվել, վերջացել են հայ ժողովրդի կյանքի ու նրա ապագայի հետ կապված բոլոր հարցերը, և մնացել է միայն մեկ հարց, այն է՝ դատապարտել Հայ եկեղեցին, որ նա հանդգնել է իրեն դավանել առաքելական և ապրել ինքնազուիս, իբրև Ազգային եկեղեցի, ահա բաղում դարերից ի վեր:

Ի՞նչ սիրտ պետք է ունենայ, մտածման ի՞նչ հորիզոն, հոգեկան ապրումների ի՞նչ ներաշխարհ, մե՛ր օրերին զբաղվելու համար նման հարցերով:

Ահա առաջին զգացումը, որ մենք ունեցանք Հ. Կոզյանի գիրքը մեր ձեռքը առնելով

և կարգալով նրա նախաբանն ու «Բան հաճութեան»-ը:

Մի պահ ընդունենք, թե Հ. Կոզյանին հաջողվել է անցյալ երկու հազար տարիների դրականութեան օվկիանոսից և պատմական զեպքերի ու մրրիկների միջից ճարել որոշ վկայութիւններ հօգուտ իր տեսակետների, թեև շատ անգամ նա խեղաթյուրել է փաստերի ճշմարիտ իմաստը:

Սակայն առնվազն նույնքան վկայութիւններ կարելի է բերել նույն պատմական շրջաններից և նույն գրականութիւնից, որոնք հերքում են Հ. Կոզյանի բոլոր փաստարկումները: Օրմանյան պատրիարքից շատ-շատ առաջ և նրանից հետո ևս, մեր նախնիք միշտ կարողացել են պաշտպանել Հայ եկեղեցու ավանդութիւնները, ուղղափառ դավանութիւնն ու հեղինակութիւնը ընդդէմ բոլոր նման հարձակումներին: Հիշենք

միայն վերջին բանավեճը երեսուն տարի առաջ «Սիոն»-ի և «Թաղմավեպ»-ի էջերում, նույն հարցերի շուրջ, հանդուցյալ Բարգեճ եպիսկոպոս Կյուլեսերյանի և Հ. Վարդան Հացունու միջև: Այդ բանավեճի արդյունքը հղել է այն, որ Հ. Հացունին ի վերջո ստիպվել է դադարեցնել իր հարձակումները, յուրայինների իսկ թելադրանքով: Մխիթարյան մեր եղբայրների ծանոթ ողջմտութիւնն ու ազգասիրութիւնը հաղթանակել էին այն ժամանակ:

Հ. Կոզյանն իր գրքով փորձում է թողնել այն միամիտ տպավորութիւնը, թե կարծեք աշխարհի բոլոր քրիստոնյա եկեղեցիները և ժողովուրդները այսօր մեկ հոտ և մեկ հովիվ են, Հոռոմի քահանայապետի իշխանութեան ներքո, և միայն մեր ժողովուրդն է ամուրոնութեան և «ճերձված»-ի մէջ մնացել:

Մինչ ճշմարտութիւնն այն է, որ բոլոր ոչկաթողիկէ մեծ ու փոքր եկեղեցիները, բազում դարերից ի վեր, մտաւժորապես նույն դիրքն ու ճանապարհն են ընդգրկել, ինչպես Հայ եկեղեցին Ծ դարից սկսյալ, Եվ Հոռոմ գրեթե նույն մեղադրանքներն է շարադրում այդ բոլոր ոչ-կաթողիկէ եկեղեցիների դեմ

և նույն հավակնութիւններով է հանդես գալիս նաև նրանց նկատմամբ:

Գրադարաններ կարելի է լցնել այս ուղղութիւնով հրատարակված թեր ու դեմ գրականութիւնով: Գրադարաններ կարելի է լրացնել ուղեկաթղիկն եկեղեցական գրականութիւնով, գրի առնված դարերի ընթացքում միուս եկեղեցիների պաշտպան հեղինակներ կողմից, որոնք կենտ առ կենտ հերքում են հոռմեադավանների փաստարկումներն ու մեկնութիւնները:

Ահա թե ինչու նման հարցերի փոքր ինչ ծանոթ մարդկանց համար ծիծաղելի է դառնում Հ. Կոզյանն իբրև ճշմարտութիւնս պաշտպանի:

Մեր օրերում, ողջամիտ ամեն քրիստոնյա և քաղաքակիրթ ամեն մարդ վերջապես հանգել է այն առողջ դատումին, թե նման քրուեղանդական ամուլ վեճեր ալեւս կարելի չէ հանդուրժել. դրանք նկատելով պարզապես մտածման և զգացմունքների հիմանդադին երևույթներ:

Հայաստանյայց եկեղեցին երբեք չի մտածում ժխտել կամ արհամարհել քույր եկեղեցիների ավանդութիւններն ու սրբութիւնները, բայց չի էլ հանդուրժում, որ ուրիշներ ժխտեն և արհամարհեն իր ավանդութիւններն ու իր սուրբ զգացմունքները:

Հ. Կոզյանը ինչու է գրի առել այս գիրքը: Հեղինակի իսկ խոստովանութիւնով սկսեցնելու համար մեծագործ Մաղաքիա Օրմանյան պատրիարքի հիշատակը և 50 տարի առաջ նրա հրատարակած «Հայոց եկեղեցին» աշխատութիւնը:

Հ. Կոզյանը գրում է. «Օրմանյանի նպատակն էր հուշակել Հայ եկեղեցին անկախ Քրիստոսի փոխանորդեն, այսինքն Քրիստոսեն»: Հ. Կոզյան չի ներում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքին, տր հանդգնել է Հայ եկեղեցին նկատել իբրև քրիստոնյա եկեղեցի, և ահա այդ պատճառով սաստիկ բարկացած, շարադրել է իր գիրքը, վերականգնելու համար... ճշմարտութիւնը:

Երջանկահիշատակ Օրմանյան պատրիարքը, իր «Հայ եկեղեցին» գրքով, ներկայացրել էր Հայաստանյայց եկեղեցու ճշմարիտ նկարագիրը, պաշտպանելով և դրվատնելով նրա ավանդութիւններն ու պատմութիւնը, նրա հոգևոր, մշակութային և ազգային արժեքներն ու հեղինակութիւնը՝ Կոզյանների նմանների անարդար և ոչ քրիստոնեական զրպարտութիւնների և հավակնութիւնների դեմ:

Իր ժամանակին Օրմանյան պատրիարքը հայ ժողովրդի արթնացած խղճմտանքն է հանդիսացել, ով ինչքան ժամանակ Կոզյաններ գտնվեն, ոչ միայն Հայ եկեղեցու

ծոցից, այլև բոլոր քրիստոնյա եկեղեցիներ, ծոցից ծնունդ կառնեն Օրմանյաններ, մինչև որ Կոզյանները վերջապես հասկանան, թե Քրիստոս և նրա Ս. Ավետարանը ո՛չ մեկ Աթոռի մենաշնորհները չեն, և թե ո՛չ մեկ պատմական Աթոռ, ինչքան էլ առաքելական նկատվի նա, չի կարող հավակնութիւնն ունենալ իր իշխանութիւնը տարածելու պատմականորեն ծնունդ առած ու զարգացած միուս առաքելական կամ ոչ առաքելական եկեղեցիների և նրանց ինքնագլուխ Աթոռների վրա:

Մեր վեհափառ Հայրապետը իր այս տարվա զատկական քառորդում ստույգ էր. «Դառնա՛նք դեպի ճշմարիտ աղբյուր սիրով միաթլա՛նք» դեպի Քրիստոս, միակ և անփոխարինելի Կուսուս Ս. եկեղեցին: Եվ մանավանդ. վերադարձնենք արձայութլա՛նք բանալիները իսկական Տիրոջը՝ մեր Փրկչին՝ Քրիստոսին, որպեսզի հույսը հավիտեանկան կյանքին բաշխվի բոլորին առանց խտրութլան, հավասարապես:

Հատկանշական է, որ Հ. Կոզյանը մեղադրում է Օրմանյան արքեպիսկոպոսին կրքոտութլան մեջ, բայց նա չի նկատում իր աչքի գերանը: Որովհետեւ անկարելի է Հ. Կոզյանի գիրքը կարդալ և չլրդովվել. ի տես այն անհատակ կրքի և քինախնդրի ոգու, որ ցուցաբերում է հեղինակը Օրմանյանի անձի նկատմամբ: Հ. Կոզյանը առանց կարմրելու ի վիճակի է գրելու, թե «Օրմանյանի պատրիարքութլունը արլունալի շարդերու շրջան մը եղած է», թե «Ժանր մեղադրանքներ բարդված են Արդուլ Համիդի սիրելիին վրա», թե «ան կրցած է անտարբեր նալիլ հայ արլունին որ կհոսեր», թե «տասներկու տարիներ շարունակ կեղծած ու դավաճանած է իր պաշտպանութլան հանձնված և արդեն հարստահարված ու կողոպտված Հայ Ազգը», և այլն և այլն:

Հիսուն և ավելի տարիներ առաջ, 1908-ի պոլսահայ ժողովրդի գինութլան օրերին, մի քանի շվարած կամ շահախնդր մարդիկ կարող էին նման մեղադրանքներ շարադրել Օրմանյան պատրիարքի դեմ, սակայն այսօր, հիսուն տարի հետո, երբ ճշմարտութլունը շողում է արեւի նման պալժառ և Օրմանյան պատրիարքը ավելի քան արդարացած է պատմութլան և հայ ժողովրդի խղճմտանքի առաջ, Հ. Կոզյան ինչպե՛ս է համարձակվում այսպիսի զրպարտութլուններ գրի առնել ու հրապարակել, և նույնիսկ արժանանալ «Հայաստան» րանս-երի:

Անշուշտ, իրողութլունն այն է, որ Հ. Կոզյանը, լավ իմանալով հանգերձ ճշմարտութլունը Օրմանյան պատրիարքի իրապաշտ, իմաստուն և հեռատես ազգային քաղաքա-

կանոնության մասին, շիմանալ է ձևացնում և սիրտ ու արյուն շունեցող սարդի հոգեբանությանը, անողոք մոլուցքով լցված, զբոսայգիների ունեւորի իր ուստանին է հյուսում՝ իր որսին խեղդելու և նրա արյունը ծծելու ակոթմանով:

Այս ի՞նչ քրիստոնեական սիրտ է, այս ի՞նչ քարոզական է, այս ի՞նչ վրիժառու ոգի է: Կոպյանների յար ու ցամաքած հոգին նույնքան հեռու է Քրիստոսի Ավետարանից, ինչքան հեռու է էին միջին դարի հավատարենիքների խարուկները:

«Լայ ձեզ գարաց և փառիսեցուց կեղծաւորաց, զի սրբէք զարտաքին զրամակին և զսկսաւորակին, և ի ներքո յի են... (Մատթ. ԻԳ 25):

2. Կոպյանի գիրքը իր արտաքին տարազով ուղղված է Որմանյան պատրիարքի կապնի ու դրական գործի դեմ, սակայն խորքում նա ուղղված է շեշտակի կերպով Հայաստանյայց Եկեղեցու դեմ, Ամենայն Հայոց Հայրապետության և Ս. Էջմիածնի դեմ, և առհասարակ հայ ժողովրդի դեմ: Նա ուղղված է նաև Մեծի Տանն Կիլիկիո Հայաստանյայց պատմական Աթոռի դեմ:

2. Կոպյանը, իր երկրաչափական խելքով, փորձում է ժխտել և քանդել Հայաստանյայց Եկեղեցու գոյության և պատմական դարգացման հիմքերը:

Ասում ենք՝ «փորձում է», որովհետև 2. Կոպյանը և նրա բոլոր նմանները մեկտեղ հավաքած, անհունորեն տկար կմնան Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի առնվազն հազար վեց հարյուր տարվա պատմության առաջ, Մոտ երկու հազար տարվա նվիրագործված ավանդություններ և իրողություններ անհնար է, որ որևէ մարդ կարողանա իրենց տեղից շարժել:

Այս տեսակետից պարզապես խղճալի ենք գտնում 2. Կոպյանի անզոր փորձը: Մե՛ղք նրա թափած աշխատանքին, որ արժեք հատկացնել ավելի օգտակար և բարի գործի: Եվ ինչքան աղբյուրների է դիմել 2. Կոպյանը, կտրվելու համար միակ աղբյուրից, որ հայ ժողովրդի խիղճն է: Ինչպե՞ս չհիշենք առաքյալի խոսքը, որ ասվել է բոլոր ժամանակների Կոպյանների համար. «Ուր յամենայն ժամ ուսանին և երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն» (Բ Տիմոթ. Գ 7):

Ապշեցուցիչ է պարզապես, թե 2. Կոպյանն ինչպե՞ս չի անդրադառնում, որ բոլորովին անիմաստ է հազար և վեց հարյուր տարի հետո վեր կենալ ու հերքել փորձել դարավոր ավանդություններ և պատմականորեն զոյացած ու զարգացած իրողություններ հայ ժողովրդի կրոնական ու ազգային կյան-

քի մեջ, ինչպե՞ս է, որ 2. Կոպյանի ի վիճակի չէ հասկանալու և զգալու հայ ժողովրդի ճշմարիտ հոգեբանությունը և հայոց պատմության ոգին: Ինչպե՞ս է, որ 2. Կոպյան չի անդրադառնում, թե Հայ Եկեղեցու առաքելականությունը և ինքնազոխությունը, ինչպես և Փրկչի իշման խորհուրդը ի Հայաստան աշխարհ, ամեն րանից առաջ և ամեն րանից վեր ոգեկան ճշմարտություններ են հայ ժողովրդի համար, կենդանի հավատով և դարերի իմաստությամբ ու մարտիրոսությամբ պահպանված սրբազան ավանդներ, ապրելու և տոկալու ինքնապաշտպանության վահաններ, րազում դարերի պատմական փորձով սրբազործված:

Հայ պետք է լինել, կարենալ հասկանալու և զգալու համար այս բոլորը, Հաղկերտի օրերից մինչև մեր օրերը: Թվում է, թե այդ կարելի չէ սպասել 2. Կոպյանից, Ընդհակառակը, նա խայտում է ու հրճվում ի տես իր ժխտող ու քայքայող իմացականության սհաջողությունները-ի: Տե՛ր Աստված, ի՞նչ շար ձեռք այս որոմն է ցանել 2. Կոպյանի հոգու մեջ, անճանաչելի դարձնելով նրան իրեն հայ մարդու:

2. Կոպյանը չի՞ իմանում արդյոք, որ հայ ժողովրդի լույս հավատը և ավանդությունները սրբություններ են և ոգեկան ճշմարտություններ, որոնց չի կարելի մերձենալ ոչ մանրացուցով, ոչ կարկինով և ոչ էլ ցամաքած երակներով:

Այո՛, սրբություններ են նրանք, ապրող, կենդանի զգացմունքներ և հույզեր, որոնք ահա ավելի քան տասնվեց դարեր ապառաժյա հիմքերն են կազմում ամբողջ մի ժողովրդի կրոնական հավատի, քրիստոնեական մշակույթի և պատմական կյանքի, պատմական մի կյանք՝ լի հերոսական մաքառումներով և գերագույն զոհաբերումներով՝ ի փառս Աստուծո և Քրիստոսի Ս. Ավետարանի:

Աստվածային կամ մարդկային ո՛ր օրենքով ուզում եք խլել այդ բոլորը հայ ժողովրդից և անպայման օտար մի գլուխ պարտադրել Հայաստանյայց ազատ Եկեղեցուն:

Ժիշտ է, թե մենք հայերս համարենք փոքր ենք, և այս աշխարհի վրա մեր Եկեղեցու միակ ուժը այդ փոքր ժողովուրդն է: Մենք, իբրև Եկեղեցի, ո՛չ ոսկի ունենք, ո՛չ րենհեղ, ո՛չ գենք և ո՛չ զորք, ո՛չ էլ դրամատներ աշխարհի շուկաների վրա, և ո՛չ էլ երկրային տիտղոսներ: Բայց մենք հպարտ ազդ ենք, հպարտ մի Եկեղեցի՝ մեր անցյալով, մեր սրբերով, մեր հերոսներով, մեր հոգևոր, իմացական գանձերով, մեր ներկա հայրենի վերածննդով և ապագայի նկատմամբ մեր վառ երազներով ու իդձներով:

Հռոմեացիական Կաթողիկոսական ժեռ
 Եկեղեցին, փոխադարձ հարգանքի և զնահա-
 տանքի պայմանների մեջ: Սկզբունք, որը
 բարեբախտարար արդեն վերջնապես նվիրա-
 գործված է և կենսագործման հունի մեջ
 մտած՝ կազմակերպումով և գործունեու-
 թյամբ Եկեղեցիների Համաշխարհային Խոր-
 հրդի, որին մասնակցում են ողջ աշխարհի
 քրիստոնյա եկեղեցիները, աստվածահաճո
 միասնության և եղբայրության ոգով: Մաղ-

թելի է, որ Հռոմեա-Կաթողիկոս Եկեղեցին
 վերաքննի իր այլևս ոչ ոքի չհամոզող բանա-
 ձևերը և քրիստոնեական ոգով ողջունի իր
 քույր եկեղեցիներն ու հեռու շմնա քրիստոն-
 յա եկեղեցիների համաշխարհային եղբայ-
 րությունից:

Այն ժամանակ ճշմարտապես ուրախու-
 թյուն կլինի երկրի վրա և հրկնքում:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

